

Ա.Ս. ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

Ա Ր Տ Ա Շ Ա Տ

Պատմա-աշխարհագրական տեսություն

1. ԱՐՏԱՇԱՏԻ ՏԵՂԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Պատմական Հայաստանի հնագույն շրջանի նշանավոր քաղաքներից մեկն էր Արտաշատը: Նրա հիմնադրությունը սերտ կերպով կապված է Արտաշեսյան հայկական թագավորության սկզբնավորության և հայ ժողովրդի քաղաքական անկախություն ձեռք բերելու պատմական կարևոր գեպքերի հետ:

Հայտնի է, որ Սելևկյան գերիշխանության ենթակա (312—190 թթ. մ. թ. ա.) պատմական Հայաստանը վարչական տեսակետից բաժանված էր երկու սատրապությունների, որոնցից մեկը կազմում էր Մեծ Հայքը (նեղ լմաստով) կամ Արևելյան Հայաստանը, իսկ մյուսը՝ Ծոփաց աշխարհը (Մոֆեան) կամ Արևմտյան Հայաստանը: Այդ երկու վարչական-զինվորական շրջանները կառավարվում էին Սելևկյան պետության կողմից նշանակված կառավարիչներին (ստրատեգներին) միջոցով: Ստրաբոնի վկայությամբ, (մ. թ. ա.) երկրորդ դարի սկզբին Արևելյան Հայաստանի կառավարիչն էր Արտաքսիասը (Արտաշեսը), իսկ Ծոփքի կառավարիչն էր Ջարիադրեսը (Ջարեսը): Երբ 190 թ. (մ. թ. ա.) սելևկյան թագավոր Անտիոքոս մեծը հռոմայեցիների կողմից պարտության մատնվեց, օգտվելով այդ հանգամանքից, Սելևկյան իշխանության ենթակա շատ երկրների տեղական կառավարիչները գլուխ բարձրացրին և ինքնուրույն իշխանություն հիմնեցին: Դրանց թվումն էին նաև Արտաշեսն ու Ջարեսը, որոնցից առաջինն իրեն թագավոր հայտարարեց Արևելյան Հայաստանում, իսկ երկրորդը՝ Ծոփքում 189 թ. (մ. թ. ա.):

1 Ստրաբոն, Գիրք 11-րդ, զլ. 44, 15, թարգմ. Հ. Աճառյան, Երևան, 1940, էջ 85:

ինքնուրույն անկախ թագավորություն հիմնելուց հետո, թե Արտաշեսը և թե Ջարհեք հետամուտ եղան ամբողջելու և ընդարձակելու իրենց պետություն սահմանները։ Հայկական այդ երկու թագավորություններն սկզբնական շրջանում ավելի սահմանափակ հողամասեր էին ընդգրկում, որի մասին վկայում է նույն Ստրաբոնը, սակայն՝ ասելով՝ աստամուտ են, որ Արմենիան եղել է առջ քիտքը և մեծացել է Արտաքսիասի և Ջարիտգրիսի ձեռքով։ Շարունակություն մեջ նա մի առ մի թվում է, թե ինչ շրջաններ գրավեցին նրանք։ հիշատակում է Փայտակարանը, այնուհետև Բասորապետան, ումանք դա Վասպուրականն են համարում, սակայն այդ սրոշումը վերջնական համարել չի կարելի։ ապա, Փավնիդեսը։ Վերջինիս տեղն անորոշ է։ Հյուրըմանը Փավնիդեսը համարում է Մյունիքը, հունարեն Φουντις-ը Σουντις ուղղելով, սակայն, դժվար թե կարելի լինի ընդունել այդ ուղղումը, քանի որ աշխարհագրական և պատմական տեսակետից ճիշտ լինել չի կարող։ նախ՝ Մյունիքը Մեդիայում չէր, մինչդեռ Ստրաբոնը Փավնիդեսը Մեդիայում է զետեղում։ մյուս կողմից կասպիանեն գրավելու համար Արտաշեսը ձեռքի տակ պիտի ունեցած լինի Մյունիքը, որտեղից նա կարող էր անցնել կասպիանեն։ Ոմանց կարծիքով, Փավնիդեսը պիտի որոնել կասպիանեի հյուսիս-արևմտյան կողմում, Ազվանքի սահմանակից մի երկրամաս։ Հիշյալ երկրամասերը տարածվում էին Արտաշեսի պետության հարավ-արևելյան կողմերում²։

Արտաշեսը Ստրաբոնի վկայությամբ զբաղվում է Պարիագրիսի լեռնալանջերը, Խորզենեն—Խորձյան գավառը և Դուգարենեն—Դուգարքը, Խալիբներից և Մոսսինոյկներից՝ Կարենիդեսը—Կարինի նահանգը և Դերքսենեն—Դերջանը, Կատանոներից՝ Ակելիսենեն—Եկեղյաց գավառը և Անտիտավրոսի մոտ գտնվող շրջանը, ասորիներից՝ Տոմորիդեսը—Տոմորիքը։ Վերջին երկրամասերը գտնվում էին Արտաշեսի պետության հյուսիսային, հյուսիս-արևմտյան և հարավ-արևմտյան ծայրամասերում։ Արտաշեսի նպատակն էր զբաղվել նաև Ծովաց աշխարհը, սակայն այդ նրան չի հաջողվում զնորհիվ այն հանգամանքի, որ Ջա-

¹ Պրոֆ. Գ. Խալաթյանը Փավնիդեսը և Բասորապետանը զետեղում է Ուրմիո և Վանի լճերի միջև. «Очерк истории Армении», Москва, 1910, стр. 122.

² Ակադ. Հ. Մանանդյան, Գննական տեսություն հայ ժողովրդի պատմության, Կ. Ա., Երևան, 1942, էջ 111 և 117. Հյուրըման, Հին հայոց տեղի անունները, էջ 17—18:

բեհն իր երկիրը պաշտպանելու համար գիմում է կապագով-
կիայի թագավորի օգնություն:

Ծովաց թագավորության ընդարձակման մասին, Ջարեհի
ժամանակ, համեմատաբար քիչ տեղեկություն է տալիս Ստրա-
բոնը. նա միայն հիշում է, թե Ջարեհն իշխում էր Ակիսենեսի,
Օդոմանտիսի և մի քանի այլ գավառների վրա:

Վերոհիշյալ գավառների Արտաշեսի թագավորության միաց-
վելը հիշելուց հետո, Ստրաբոնն ավելացնում է, թե այժմ այդ
բոլոր վայրերի բնակիչները խոսում են միևնույն լեզվով¹,
այսինքն այդ թագավորությունների մեջ ապրող բոլոր ցեղերն
ու ցեղախմբերը միաձուլվել են իրրև հայ ժողովրդի բաղկացու-
ցիչ մասը և խոսում են հայերեն:

Պարզ հայտնի չէ, թե Սելևկյան իշխանության ժամանակ
հայկական սատրապությունների կառավարիչ - ստրատեգների
կենտրոնատեղիքը քաղաքներում էին. օտար ազբյուրներն այդ
մասին ոչինչ չեն հիշում: Մ. Պորենացու՝ ավանդություններից
քաղած տեղեկություններից կարելի է ենթադրել, որ Արևելյան
Հայաստանում այդպիսի կենտրոնատեղի էր Արմավիրը, իսկ
Ծովքում՝ Կարկաթիակերտը:

Պետություն սահմաններն ընդարձակելուց հետո Արտաշեսը
հիմնում է իր մայրաքաղաքը Երկրի համարյա կենտրոնական
մասում՝ Արարատյան դաշտավայրում, Արաքս գետի ափին,
որը և իր անունով կոչվում է Արտաշատ, իսկ հույն և հռոմա-
յեցի հեղինակներն ընդհանրապես այն կոչում են Արտաքսատա²:

Պարզ հայտնի չէ, թե քիչ թվականին է հիմնվել այդ քա-
ղաքը. ենթադրվում է միայն, որ Արտաշատը հիմնվել է մոտա-
վորապես 170—160 թթ. (մ. թ. ա.):

Արտաշատ քաղաքի հիմնարկություն տեղի մասին առաջին

¹ Ստրաբոն, Գիրք 11, ղվ. 44, 5, թարգմ. Հ. Աճառյան, էջ 57:

² Արտաշատ քաղաքի անունը հույն, հռոմայեցի և արաբ հեղինակները տարբեր ձևով են գրում. Ստրաբոնի մոտ երկու ձևով է գրվում՝ ΑΡΤΑΧΑΤΑ և ΑΡΤΑΧΙΑΣΑΤΑ, որ նշանակում է՝ ուրախություն Արտաշեսի, Յուլիանուսը՝ ΑΡΤΑΧΑΤΑ, Պլինիոսը՝ ΑΡΤΑΧΑΤΑ և ΑΡΤΑΧΑΔΕ, Ստ. Բյուզանդացին՝ ΑΡΤΑΧΙΑΣΟΔΑ, հունարեն Աղաթանգեղոսի մեջ՝ ΑΡΤΑΧΟΓΔΙΣΤΕ (Ղ. վ. Ինճիճյան, Մատթագրություն... էջ 485). արաբ հեղինակներից Ա. Բալաձորին գրում է Արդիշատ (اردشاه) և Ղեքմեզ (جهمش) որը քր և քր բառե-
րից է կազմված և նշանակում է որդան կարմիր, Իբն-ալ Աթիրը՝ Աղդիշատ (اردشاه), որը արաբերեն ր և ր տառերի շփոթությունից է առաջացել. Յա-
կուտին՝ Արդաշատ (اردشاه):

տեղեկությունը տալիս է Ստրաբոնը, որը հիշատակելով Հայաստանի քաղաքները՝ ասում է. «Հայաստանի քաղաքներն են Արտաքսատան և Արքսատան: Երկու քաղաքներն էլ գտնվում են Արաքսի վրա. Արքսատան՝ Ատրպատականի սահմանների մոտ, իսկ Արտաքսատան՝ Արաքսյան գաշտի մոտ: Այս վերջինը գեղեցիկ է շինված և երկրի թագավորանիստ քաղաքն է: Նա գերանրվում է գետածոցում, որը նման է թերակղզու և նրա շուրջը, բացի պարանոցի մասից՝ գետի առջև ձգվում է պարիսպը, իսկ պարանոցը փակված է խրամով և պատվարով»¹: Ստրաբոնի «Արաքսյան գաշտ» կոչածը, անշուշտ, Արարատյան գաշտն է: Ոմանք «Արաքսյան» բառը կարգում են մինչև իսկ «Արտաքսյան» գաշտ, որ իբրև աշխարհագրական անուն զործածական չի եղել: Ստրաբոնն այդ բառը զործածել է իբրև ծանոթ գետի անուն, որը հոսում է մի գաշտավայրով, որի իսկական անունը նրան ծանոթ չի եղել:

Արտաշատ քաղաքի տեղի բնորության և Արտաշես թագավորի ժամանակ նրա շինության մասին հայտնում է նաև Պլուտարքոսը, որի տեղեկությունը, ինչպես երևում է, բերանացի ուղղությից է բխում և զերծ չէ առաքիլութունից. «Պատմում են, — ասում է Պլուտարքոսը, — որ երբ Անտիոքոսը պարտություն կրեց հռոմայեցիներից՝ Կարթագենացի Աննիբալը եկավ Արտաշես Արմենի մոտ և հրահանգիչ ու խորհրդատու դառավ բազմաթիվ օգտակար գործերում: Նկատելով, բացի այդ, այս երկրում չօգտագործված ու անտես արված հարմարագույն ու խիստ հաճելի մի վայր՝ նա այդ տեղում ուրվազծեց քաղաքի հատակագիծը: Աննիբալը տարավ Արտաշեսին ցույց տվեց հատակագիծը և համոզեց հիմնել այդ տեղում քաղաք: Թագավորն ուրախությամբ համաձայնեց ու խնդրեց, որ նա իր վրա վերցնի այդ գործի ղեկավարությունը: Այսպիսով կառուցվեց մեծ ու խիստ գեղեցիկ քաղաք, որն անվանվեց թագավորի անունով և հայտարարվեց Հայաստանի մայրաքաղաք»²: Մի կողմ թողնելով առայժմ Կարթագենի հերոս Աննիբալի՝ հայոց Արտաշես թագավորի մոտ պատասպարվելու խնդիրը և նրա խորհրդատու լինելու գերը,

¹ Ակադ. Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, էջ 120—121 (Strabon, XI, 146, 528):

² Ակադ. Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն, Քննական տեսություն... էջ 121 (Plut. Lucullus, XXX, 1, 5):

որի մասին խոսք կլինի հետո, պիտի նկատենք, սակայն, որ Պլուտարքոսի վերոհիշյալ տեղեկությունն ընդհանուր բնույթ ունի. նա չի հիշում մինչև անգամ նոր քաղաքի շինության տեղը, որ ամենակարևորն է: Պարզ կերպով երևում է, որ այս պեպքում Պլուտարքոսի գլխավոր նպատակն է եղել Աննիբալի մասին իր լսած տեղեկությունը հաղորդել, քան թե Արտաշատ քաղաքի շինության վերաբերյալ քիչ ընդարձակ և իրականության համապատասխան տեղեկություն տալ: Պլինիոսը թվելով Մեծ Հայքի քաղաքները՝ Արտաշատ քաղաքի տեղի մասին հայտնում է, թե «Արտաքսատան շինված է Երասխի մոտ՝ դաշտավայրում»: Պլինիոսի հիշած դաշտավայրն Արարատյան դաշտավայրն է, որի միջով հոսում է Երասխը, բայց թե այդ դաշտավայրի սր մասում էր շինված Արտաշատը, մնում է անորոշ: Տակիտոսը Կարբուլոնի դեպի Արտաշատ քաղաքը կատարած արշավանքի մասին պատմելով՝ ավելացնում է միայն, թե Երասխի ջրերն ողողում էին Արտաքսատա քաղաքի պարիսպները, որ նմանապես բավական անորոշ է քաղաքի շինության տեղի նկատմամբ: Պտղոմեոսը ևս հիշում է Արտաքսատան Մեծ Հայքում, սակայն սխալմամբ, ինչպես նկատել են ուրիշները, փոխանակ Երասխ գետի մոտ ցույց տալու, Եփրատի մոտ գտնվող քաղաքների թվումն է դասում¹:

Այդ օտար հեղինակները թեև ժամանակով համեմատաբար ավելի առաջ են եղել, քան թե Արտաշատ քաղաքի մասին հիշատակող հայ պատմագիրները, սակայն գրանցից և ոչ մեկը Մեծ Հայքում չի եղել: Արտաշատ քաղաքի շինության և տեղի վերաբերյալ նրանց հաղորդած տեղեկությունների աղբյուր են ծառայել բերանացի զրույցները և կամ, եթե եղել են և գրավոր աղբյուրներ, գրանք էլ այլ տեղեկություններ չեն բովանդակել: Բացի Ստրաբոնից, մնացած հեղինակների տված տեղեկություններն ընդհանուր բնույթ ունեն. գրանց հիման վրա որոշել Արտաշատ քաղաքի տեղագրությունը հնարավոր չէ. նրանք մինչև անգամ չեն հայտնում, թե Արտաշատը Երասխ գետի սր ափին էր կառուցված:

Ստրաբոնը ծննդյամբ Փ. Ասիայից էր, Հայաստանի ավելի մոտ շրջանից: Իբրև աշխարհագրագետ նա ձգտել է Արտաշատ

¹ Հուլյն և հռոմայեցի հեղինակների վերոհիշյալ տեղեկությունները քաղված են Ղ. Վ. Ինճիճյանի «Ստորագրութիւն հին Հայաստանի.— Մեծ Հայք» գրքից, էջ 485—486:

քաղաքի կառուցման և տեղի մասին արժանահավատ ազբյուր-ներից տեղեկություններ հավաքել, որը և նրան հաջողվել է, բայց նրա տեղեկություններն էլ խիստ համառոտ են. նրա վկայությամբ Արտաշատ քաղաքը շինված էր Երասխի մի գետածոցում, որը նման է թերակղզու: Ստրաբոնի այս վերջին տեղեկությունից կարելի է եզրակացնել, որ թերակղզին առաջացել է Երասխ գետի մի սլորապատույտից: Ստրաբոնի հաղորդած տեղեկությունների հիման վրա նմանապես չի կարելի Արտաշատ քաղաքի շինության տեղը որոշել ճիշտ այնպես, ինչպես որ մինչև այժմ հնարավոր չի եղել որոշել նույն Ստրաբոնի հիշատակած և Արտաշես թագավորի կառուցած Արքաատա քաղաքը դարձյալ Արաքսյան կամ Արարատյան դաշտավայրում Երասխի ափին, միայն Աարպատականի սահմանի մոտ: Օտար այդ հեղինակների վկայությունները մի կարևոր հանգամանք են մասնանշում միայն, այն, որ Արտաշատ քաղաքի հիմնադիրն է եղել սելևկյան թագավոր Անտիոքոս Գ-ի ժամանակ Մեծ Հայքի (Արևելյան Հայաստանի) կառավարիչ և ապա թագավոր Արտաշեսը (Ա):

Արտաշատ մայրաքաղաքի կառուցման տեղի մասին կարևոր տեղեկություն կարելի է համարել Մ. Խորենացու հաղորդածը. նա ասում է. «Արտաշեսը (Մ. Խորենացին նկատի ունի Արտաշես Բ-ին, Արշակունյաց տոհմից, որ սլորապատեց շիրթմունք է) գնալով այն տեղը, ուր Երասխը և Մեծամորին խառնվում են և հավանելով այն բլուրը, կառուցում է քաղաք, իր անսունով կոչելով Արտաշատ: Օժանդակում է նրան Երասխը մայրիների փայտով, որի համար էլ առանց նեղության և արագ շինելով՝ նրա մեջ մեհյան է կանգնեցնում»¹: Օգտվելով Մ. Խորենացուց, նույնը կրկնում են և հետագա դարերի հայ պատմիչներ՝ Ստ. Տարնացիին (Ասողիկ), Սամվել Անեցիին և Վարդան վարդապետը²: Վերսիռյալ հատվածում Մ. Խորենացին Արտաշատ քաղաքի շի-

¹ Մ ո վ ս ի ս ի Խ ո Ր Ե Ն Ա Յ Ը Ո Յ Պատմութիւն հայոց, Տիգրիս, 1013, էջ 176: Նա ասում է. «Երթեալ Արտաշեսի ի տեղին, ուր խառնին Երասխ և Մեծամոր և հանեալ ընդ բլուրն՝ շինէ քաղաք յիւր անուն անուանեալ Արտաշատ: Ձեռնտու լինի նմա և Երասխ փայտիւք մայրեաց, զասն որոյ անաշխատ և երագ շինեալ՝ կանգնէ ի նմա մեհեան»:

² Ս տ . Տ ա ր Ն ա Յ ի , Պատմութիւն տիեզերական, Ս . Պետերբուրգ, 1885, էջ 48: Ս ա մ վ ե լ Ա ն ե յ ի , Հաւաքմունք ի զոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 56: Վ ա ր Վ ա ն վ . , Հաւաքումն պատմութեան, Վենետիկ, 1862, էջ 35:

ության տեղի մասին երկու նոր տեղեկություն է տալիս, նախ՝ որ նա կատուցված է եղել այնտեղ, ուր Երասխ ու Մեծամորի գետերը միախառնվում են և մյուս կողմից՝ Արտաշատ քաղաքի շրջապատում եղել է բլուր։ Սակայն այս երկու նոր տեղեկություններն էլ հիմնականում փաստ չեն ծառայում Արտաշատի հինության տեղը ճիշտ որոշելուն, որովհետև Մեծամորին (Սև լուր, Կարասու կամ Շամբի ջուր) ներկայումս Երասխի մեջ է մտնում Էջմիածնի շրջանի Ներքին Խաթունաբլու դյուղին ավելի մոտ, որի շրջապատում չկա և ոչ մի բլուր, Խոր Չիրապից մոտ 25—30 կիլոմետր դեպի արևմուտք, ուր ավերակների հետք անգամ չկա. և մյուս կողմից անորոշ է մնում բլուրը, իբրև անունը չի հիշում Մ. Խորենացին կամ գուցե շրջապատը հատուկ անուն պիտի հասկանալ, ինչպես ցույց է տալիս Մամվել Անեցին¹։ Այսպիսով, առանց կողմնակի այլ տեղեկությունների կամ պատմագրական այլ վկայությունների, դժվար է հնարավոր լինի, հենվելով միայն Ստրաբոնի և Մ. Խորենացու վերահիշյալ տեղեկությունների վրա, Արտաշատ քաղաքի հինության տեղը ճշտությամբ որոշել։

Ամենից առաջ կարևոր է հետամուտ լինել Մեծամորի գետի ռուսանքի ուղղություն նախկին դարերում (2-րդ դարից մ. թ. ա. մինչև մ. թվ. 7-րդ դարը) և իմանալ թե այդ գետը հետագա դարերում փոխել է իր ընթացքը, թե ոչ, քանի որ ոչ միայն Մ. Խորենացին, այլ նաև անկախ նրանից մի քանի հայ պատմագիրներ ևս, կողմնակի կերպով, հիշում են, որ Արտաշատ քաղաքի մոտի կամուրջներից մեկը կոչվել է Մեծամորու կամուրջ և որ Արտաշատի և հետագայում շինված Դվինի միջև ընկած տարածությունը կոչվել է Մեծամորու հովիտ։ Պարզ է, որ եթե Մեծամորի գետի ռուսանքը չհասներ մինչև Արտաշատ քաղաքի շրջակայքը, Մեծամորու կամուրջ կամ Մեծամորու հովիտ չէին կարող կոչվել դրանք։

Եվ, իրոք, Ագաթանգեղոսն Արտաշատ քաղաքի համարյա դռների մոտ հիշում է մի քանի կամուրջ, նախ՝ Երասխի վրա Տափերական կամուրջը, որն Արտաշատ քաղաքի հարավային կողմի դռան մոտից ձգվում էր դեպի Երասխի աջ ափը, որտեղով անցնում էր տարանցիկ առևտրի կարավանային ճանապարհը մի կողմից դեպի Պարսկաստան և մյուս կողմից դեպի՝

¹ Ս մ մ վ ե լ Ա ն ե ց ի, Հաւաքմունք... էջ 56:

Փ. Ասիայի և Սև ծովի հարավ-արևելյան ափերի մերձակա քաղաքները. իսկ մյուս կողմի կամուրջը շինված էր Արտաշատի հյուսիս-արևմտյան կողմից Երասխի մեջ թափվող Մեծամորու վրա, որտեղով կարավանային ճանապարհ էր քնկած գեպի Իրենրիա (Արզամաս) և Սևաստոպոլիս. հետագայում այդ ճանապարհն անցնում էր Վաղարշապատի վրայով. անո այդ կամուրջն էր, որ Մեծամորի անունն էր կրում: Ազաթանգեղոսը պատմելով հայոց Խոսրով թագավորի Անալի ձևաքով սպանվելու մասին, հայտնում է, թե հայ իշխանները հետամուտ լինելով մարդասպանին՝ ռոմանք շտապում են ցամաքով հասնել Արտաշատ քաղաքի դռների մոտ, կամուրջների գլուխը: Որովհետև Երասխ գետը հարգացած սահում էր ափերը քերելով... (Իշխանների) կես մասն անցնելով Վաղարշապատ քաղաքի կամուրջով, որն անվանում են Մեծամորու կամուրջ, շտապում էր արագ հասնել Արտաշատի կամրջի գլուխը: Ճանապարհների կիրճերում շրջապատելով՝ արգելք են հանդիսանում նրանց (և) Տափերախան կամրջից նրանց գետն են ձգում»¹: Ազաթանգեղոսի այս հատվածի սկզբում հիշված Մեծամորու կամուրջը շինված էր ոչ թե Արտաշատի մոտ, այլ Վաղարշապատ քաղաքից ոչ այնքան հեռու, նրա արևմտյան կողմից հոսող նույն Մեծամորի գետի վրա, որտեղով ճանապարհն անցնում էր գեպի Արտաշատ, իսկ... շտապում էր առաջ հասնել Արտաշատի կամրջի գլուխը» դարձրածը վերաբերում է Արտաշատ քաղաքի մոտ դարձյալ Մեծամորու վրա շինված կամրջին: Այդ նույն կամրջի մասին է խոսում Մ. Խորենացին, երբ նա գրում է, թե հայոց Արտավազդ թագավորը որսի ժամանակ՝ «Անցնելով Արտաշատ քաղաքի կամրջով, Գինա գետի ափունքներում որսալու վայրի խոզեր և էշեր, քնկնում է մեծ խորխորատի մեջ»²:

Մ. Խորենացին այդ կամրջի անունը չի հիշում, իսկ Վարդան վ. պատմիչը նույն տեղեկությունը վերցնելով Մ. Խորենացուց, Արտավազդ թագավորի կորստյան մասին ասում է, թե Արտավազդը՝ ռորսի ժամանակ գետի մեջ խեղդվում է Մեծամորի կամրջի մոտ»³:

Նույն կամրջի վերաբերյալ տեղեկություն է տալիս նաև Սեբեոս պատմիչը, որը որոշակի հայտնում է, թե Արտաշատ

¹ Ազաթանգեղոս, Պատմութիւն Հայոց, Տիգրիս, 1909, էջ 22—23:

² Մ. Խորենացի, Բ. գիրք, դր. 4Ա., էջ 191:

³ Վարդան վ., Մոսկվա, 1861, էջ 51:

քաղաքի մոտ Մեծամորու վրա կար կամուրջ, որը գետի անունն էր կրում: Արարների 640 թ. Դվինի վրա հարձակվելու կապակցությամբ Սերեոսը ստում է, թէ արարները Բերկրի ձորով, Որդասով, Կոգովիտով թափվում են Արարատյան դաշտը և հայոց զորավարներից ոչ ոք չի կարողանում այդ տխուր լուրը Դվին հասցնել, շրայց իշխաններից երեք հոգի, որոնք գնում էին ցրված զորքերը ժողովելու—Թեոդորոս Վահեվունին, Խաչյան Առավելյանը և Շապուհ Ամատունին, որոնք փախչելով Դվին և հասնելով Մեծամորի կամրջին, ավերում են (այն) և իրենք անցնելով՝ տխուր լուրը հասցնում են այն ավանքը¹:

Այդ նույն արշավանքի մասին Ա. Բալաձորին հայտնում է, թե արարական զորքն անցավ Արտաշատով, նշանակում է թե նրա մոտ էր գտնվում Մեծամորու կամուրջը, որի վրայով ճանապարհն անցնում էր գետի Դվին, որի համար էլ վերոհիշյալ երեք հայ իշխաններն ավերում են այդ կամուրջը՝ արարական զորքի առաջխաղացումը դժվարացնելու համար²:

Ինչ վերաբերում է Արտաշատի և Դվինի միջև ընկած տարածությունը Մեծամորի դաշտ կամ հովիտ կոչվելուն, այդ մասին վիպյում է Փավստոս Բուզանդը, որը խոսելով Խոսրով Կոտակ թագավորի շինարարության մասին, հայտնում է, թե նա անտառ է տնկել տալիս Արարատյան գավառում Գառնի բերդից սկսած՝ ... ռմինչև Մեծամորի դաշտը, այն բույրը, որ կոչվում է Դվին, որը գտնվում է Արտաշատ մեծ քաղաքի հյուսիսային կողմում³:

Այսպիսով Փ. Բուզանդի, Մ. Խորենացու, Սերեոսի և Վարդան վ. պատմիչի վկայությամբ, Մեծամորին կամ Սև ջուրը նախկին դարերում հոսել է մինչև Դվինի բլուրի ստորոտը և ապա Արտաշատ քաղաքի հյուսիս-արևմտյան կողմից թափվել է Նրատիս գետը՝ սրա ձախ ափի կողմից: Մեծամորի գետի վրա Արտաշատ քաղաքի մի դռան մոտ կառուցված է եղել նույն գետի անունը կրող կամուրջ:

Սակայն Մեծամորի գետը մինչև Արտաշատ քաղաքի մերձակայքը հասնելը նախ և առաջ իր հոսանքի ընթացքում պիտի

¹ Սերեոս, Պատմութիւնն ի Հերակլն, Թիֆլիս, 1912, էջ 175:

² Ах. Балаздорн, Книга завоевания стран, Баку, 1927, стр. 10, см. также Двин, Ас. Шахназарян, Ереван, 1940, стр. 61.

³ Փ. Բուզանդ, Պատմութիւն հայոց, Ս. Պետերբուրգ, 1883, Դպրութեան Գ. գրուի Ը.:

միախառնվիր Ջանգլի (Հրազդան գետի) և մի քանի այլ վառակներին հետ, իսկ հոսանքի վերջում նաև Ազատ կամ Գառնի գետի հետ. առանց վերահիշյալ գետերի հետ միանալու, Մեծամորին չէր կարող հասնել Գլխինի գաջաք և Արտաշատ քաղաքի շրջակայքը: Այդ խնդրի լուծման համար կարևոր տեղեկություններ ենք գտնում Մ. Խորենացու «Հայոց պատմութեան» և 7-րդ դարին վերագրվող «Աշխարհացոյցի» մեջ, որոնք մինչև վերջերս ուշագրութեան չեն արժանացել:

Իր պատմութեան Բ. գլխի 2. գլխում Մ. Խորենացին պատմելով հայոց Վաղարշակ թագավորի (ըստ Մ. Խորենացու՝ հայոց Արշակունյան հարստութեան հիմնադիր) Հայաստանի արևմտյան և հյուսիսային կողմերը կարգավորելու մասին, ավելացնում է, թե երբ Վաղարշակը Վերին Բասենում էր գտնվում, ... այսօր քամիների փչելու հետևանքով իջնում է մեծ գաջաք և այնտեղ Մեծ Մորի ափին, ուր հյուսիսային ծովակից սկիզբն առնելով մեծ գետը՝ ցած է թափվում և խառնվում Մեծ Մորին, բանակ է գնում¹: Եվ այնտեղ կարգի բերելով մեր երկրի զորքերը և իր կողմից վերակացուներ թողնելով, և իր հետ վերցընելով բոլոր գլխավորներին՝ չվում է Մծբին²: Եզանակի ցրտանալու պատճառով Վաղարշակն իջնում է մեծ գաջաք, որը պիտի հասկանալ Արարատյան դաշտավայրը, քանի որ Վերին Բասենից ցած իջնելով՝ կարելի է մտնել այդ դաշտավայրը միայն: Մեր պատմագրութեան մեջ Սևանի լիճը հայտնի է «Հյուսիսային ծովակ» անունով. Վանի և Ուրմիո լճերի համեմատությամբ դա հյուսիսային կողմում է գտնվում: Ինչպես հայտնի է, Սևանի լճից դուրս է գալիս Ջանգու գետը, որը Մ. Խորենացու հիշյալ հատվածում «Մեծ գետ» է կոչված, իսկ «Մեծ Մորը» պարզապես Մեծամորի գետն է³:

Այսպիսով, Մ. Խորենացու հաղորդած տեղեկությամբ կարելի է ապացուցված համարել, որ մեր թվականության 1—2-րդ

¹ Խորենացի, էջ 109: Հիսկ ի ցրտանալ հիւսիսոյ և ի դառն հողմ փչելոյ, խաղայ իջանէ ի դաշտն մեծ. և անդ գափամբ Մորին մեծի բանակի ի տեղով, ուր գետն մեծ ի ծովակէն հիւսիսոյ սկիզբն առնալ՝ իջանէ և խառնի ի մօրն մեծ: Եւ անդ կարգեալ զզօրս աշխարհիս, և թողեալ յինքենէ վերակացուս, և իւր տեալ զամենայն գլխաւորսն՝ չուէ ի Մծբինս:

² Ա. Ա. Շ ա հ ն ա զ ա ր յ ա ն, Սև ջրի (Մեծամորի) ստորին հոսանքի ուղղութեանը նախկին դարերում, Գիտ. ակադեմիայի Հայկական ֆելիալե Տեղեկագիր, № 2, 1941:

Մ. Խորենացու վերահիշյալ հատվածի բովանդակությունը բուրբուրվին

դդ. Մեծամորին (Աւ ջուրը) միացած է եղել Ջանգու գետի հետ և Երասխին զուգահեռ հոսելով մինչև Դվինի բլուրի ստորոտը, Արտաշատի մոտ թափվել է Երասխ գետը:

Թեև, հիրավի, Մեծամորին հետագայ դարերում փոխել է իր նախկին հոսանքի ուղղութիւնը, այդ մասին շատ կարևոր տեղեկութիւններ ենք գտնում 7-րդ դարում գրված «Աշխարհացոյցի» ընդարձակ օրինակի մեջ: Գրքի հեղինակը նախ ցույց է տալիս Մեծամորի գետի բխման տեղը, թվում է նրա մի քանի վտակները և ապա ելնելով նրա գիրքից՝ ավելացնում է.

«... Եվ ապա նրա արևելյան կողմում է գտնվում (այսինքն՝ Մեծամորի գետի արևելյան կողմում.— Ա. Շ.) Ազատ գետը, և իսկապես ազատ, որի ափունքները բխում են Սախուրակ կոչված տեղի Գյոյ լեռնից, որը հոսելով Դվինով, ջուր է մատակարարում ամբողջ հայոց ոստանին և հոսելով դեպի հարավ՝ թափվում է Երասխը, որոնց մեջ է շինված Արտաշատ քաղաքը, որ նախկին ժամանակներում Մեծամորու խառնվելու տեղն էր, իսկ այժմ Մեծամորին փոխելով իր ընթացքը արևմտյան կողմում է խառնվում (Երասխին.— Ա. Շ.): Այստեղ հիշատակված «Մեծամոր գետն Ազատ» վերաբերում է այժմվա Ազատ կամ Գառնի գետին, որի Երասխի հետ միախառնման վայրում շինված է եղել Արտաշատը, սակայն «Աշխարհացոյցի» հեղինակն անմիջապես

տարբեր վայրի և տարբեր գետերի է վերագրում Գ. Վ. Ալիշանը («Այբարատ», Վենետիկ, 1890, էջ 4): Նրա կարծիքով հյուսիսային ծովափը Ջրգրբեկյուն է, որից մի վտակ է գուրս գալիս և թափվում Կարսի վտակը կամ Կարսի գետը. վերջինս իբր թե մոր մեծ է կոչվում, իսկ Ջրգրբեկ ելած վտակը՝ մեծ գետ. մեծ դաշտը նա ցույց է տալիս Ջարիշատում: Ջրգրբեկ ելած վտակը ոչ մի գետում չի կարելի անվանել մեծ գետ, ինչպես և Կարսի վտակը մեծ մոր. Ջրգրբեկ Ալիշանը կյու է կոչում և ոչ ծովափ. և վերջապես Ջարիշատի փոքր հովիտը հնարավոր չէ ամեծ դաշտ» անվանել: Մյուս կողմից Վաղարշակը գործը տեղափոխում է ավելի մեղմ կլիմա ունեցող մի վայր, Բասենից դեպի ցած, իսկ Կարսի շրջանը Բասենից դեպի վերն է և ձմեռ ժամանակ մեղմ կլիմա չէր կարող ունենալ:

1 «Աշխարհացոյց Մովսիսի Քորենացոյ յաւելուածովք նախնեաց», Վենետիկ, 1881, էջ 33—34: «Գետն Ազատ, և արդարև ազատ, որոյ ափունքն բխն է Գեօղ լեռնէ: Ի սախուրակ տեղոյ, որ իջանելով ընդ Դուին, արբուցանէ զամենայն Ոստանն հայոց, և անցեալ ընդ հարաւ անկանի յԵրասխ, յորոց ի մէջ շինեալ է Արտաշատ քաղաք, ուր յաւաջին ժամանակսն խառնուրդք Մեծամորի, իսկ այժմ փոխեալ զգնացսն Մեծամորայ՝ խառնի ի մոից կուսն»:

ավելացնում է, թե ավելի վաղ ժամանակներում նույն տեղը Մեծամորին է միացած եղել Երասխին, իսկ հեղինակի ապրած շրջանում (7-րդ դարում) Մեծամորին Արտաշատից հեռու, արևմբայան կողմում թափվել է Երասխի մեջ:

Այսպիսով միանգամայն ապացուցված կարելի է համարել, որ նախկին դարերում (մոտավորապես մինչև մեր թվականության 6-րդ դարը) Մեծամորին (Սև ջուրը) Երասխ գետի ձախափին զուգահեռ և նրան շատ մոտ հոսել է մինչև Դվինի բլուրի ստորոտը, իր հետ միացնելով Ջանգուն և Ազատ գետը և ապա Արտաշատ քաղաքի մոտից անցնելով՝ թափվել է Երասխի մեջ: Այդ երկու գետերի միացման վայրում առաջացել է այնպիսի բնագարձակ մի թերակղզի, որի վրա հնարավոր է եղել կառուցել Արտաշատի պես մեծ տարածություն ընդգրկող մի մայրաքաղաք: Մեծամորի գետի (Սև ջրի) հոսանքի՝ Երասխին զուգահեռ նախկին հունի հետքերը, ականատեսների վկայություններ, մինչև այժմ էլ կարելի է պարզ կերպով նկատել Մեծամորու ներկա հոսանքի և Արտաշատի միջև բնկած տարածության վրա:

Կարևոր է այստեղ շեշտել այն հանգամանքը, որ Մեծամորի և Ջանգու գետերի ստորին հոսանքի ուղղության փոփոխությունը առաջացել է ոչ թե նրանից, որ տիղմը, խճաքարերը և ավազը ծածկել են այդ գետերի հոսանքի առաջը և հոսող ջրերն իրենց համար նոր հուն են փորել ու փոխանակ գեպի արևելք ուղղվելու, շարունակել են ուղիղ գեպի հարավ հոսել և թափվել Երասխը, այլ Երասխ գետն է, որ թեքվելով գեպի իր ձախափերի կողմը, այնքան է մոտեցել իրեն զուգահեռ և շատ մոտ հոսող Մեծամորի և Ջանգու գետերին, որ վերջիններս այլևս չեն հոսել գեպի արևելք, այլ թափվել են Երասխը: Այդ թեքումը տեղի է ունեցել գլխավորապես Մեծամորի և Ջանգու գետերի միջև բնկած և նրանց մոտ տարածության վրա, որի պատճառով և հնարավոր է եղել այդ երկու գետերին, միմյանցից անջատված, զատ-զատ հուներով թափվել Երասխը: Հակառակն ապացուցել հնաբնավոր չէ, քանի որ, եթե ենթադրենք, թե Մեծամորին է իր ստորին հոսանքի ուղղությունը փոխել և անկախ Ջանգուից թափվել Երասխը, այն ժամանակ հարց կառաջանա, թե ինչու Ջանգուն չի շարունակել իր նախկին բնթացքը և Արտաշատի մոտ խառնվել Երասխին, քանի որ նախկին հոսանքի հունը կար և Ջանգուն միացած այլ վտակներ

հետ, առանց որևէ արգելքի կարող էր նախկին բնթացքը շարունակել:

Արտաշատ քաղաքի շինության տեղի որոշման համար, բացի Մեծամորի գետի անունը հիշատակելուց, Մ. Խորենացին իր վերոհիշյալ հատվածում մի այլ վկայություն էլ է բերում.

... Եւր Երասխը և Մեծամորին են խառնվում և հավանելով այն բլուրը՝ քաղաք է շինում...»: Նշանակում է, թե Արտաշատ քաղաքի շրջափակում, Երասխ գետի ձախ ափին, եղել է բլուր, որի գլխքը հավանում է Արտաշես թագավորը և որոշում այնտեղ կառուցել իր մայրաքաղաքը: Բլրի անունը, ինչպես ասացինք, նա չի տալիս. այդ բլրի մասին հիշատակություն ենք գտնում Ադաթանգեղոսի պատմության մեջ, ուր նա հայտնում է, թե Տրդատ թագավորը ս. Գրիգորիին զանազան տանջանքների ենթարկելուց հետո, երբ իմանում է, թե նա իր հորը սպանող Անակի որդին է... Երամայում է կապված ոտքերով, ձեռքերով և պարանոցով տանել նրան Այրարատ գավառը և Արտաշատ քաղաքի բերդի դղյակը հանձնել և ձգել ներքին վիրապը, որը սաստիկ խոր էր...»¹:

Այսպիսով պարզվում է, որ Արտաշատ քաղաքն ուներ դղյակ, ուր գտնվում էր բերդը, այսինքն՝ քաղաքական և ծանր հանցագործներին բանտարկության տեղը: Այդ դղյակի բերդում Վիրապն էր կամ Խոր Վիրապը, որը կառուցված էր Մ. Խորենացու հիշատակած բլրի վրա: Հետագայում Խոր Վիրապը, կապված ս. Գրիգորի առասպելական չարչարանքների պատմության հետ, մեր մատենագիրների աշխատությունների մեջ հիշատակվում է իբրև հատուկ անուն՝ վանքի և ապա բլրի անուն:

Մեր հիշատակած վկայություններից և քննությունից կարելի է եզրակացնել, որ Արտաշատ քաղաքի շինության տեղի որոշման խնդրում հիմնական ելակետ կարող է ծառայել ներկայումս Խոր Վիրապի բլուրը. այդ բլրի վրա է կառուցված եղել

¹ Ադաթանգեղոս, էջ 70—71: «... Հրաման տայր կապեալ ոտիւք և կապեալ ձեռք և կապեալ պարանոցաւ խաղացուցանել զնա յԱյրարատ գաւառ, և տալ զնա ի գղեակ բերդին Արտաշատ քաղաքի և իջուցանել ի Վիրապն ներքին, որ անհնարին էր խորութեամբ», էջ 112, 115: Ստ. Տարոնացի (Ասողիկ) էջ 88. Մ. Կաղանկատվացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Թիֆլիս, 1913, էջ 42. Թ. Արծրունի, Պատմութիւն տանն Արծրունեաց, ս. Պետրբուրգ, 1887, էջ 159—160 և 300:

քաղաքական և քրեական հանցագործների բանար, Բլուրն իւր շրջապատով ծառայել է իրրի Արտաշատ քաղաքի զգյակ, հետեապես և գանդիլ է քաղաքի շրջափակում: Այդ բլրի վրա է կառուցված եղել Արտաշատի միջնաբերդը, որը բաժանված է եղել բուն քաղաքից պարիսպներով. քաղաքն էլ ունեցել է իր առանձին պարիսպները, որոնք ընդարձակ տարածութուն են ընդգրկել: Քաղաքի պարիսպներից դուրս սփռված են եղել նրա արվարձանները: Մեր կարծիքով Արտաշատ քաղաքը տարածված է եղել մի կողմից Խոր Վիրապի բլրից գեպի արևելք՝ Երասխ գետի ձախ ափին գուրահես, մյուս կողմից տարածվել է Խոր Վիրապի բլրից գեպի հյուսիս:

2. ԱՐՏԱՇԱՏԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՌԱԶՄԱԿԱՆ, ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵՍԱԿԵՏՅ

Հայաստանում ինքնուրույն և անկախ պետութուն կազմակերպելու գործի սկզբին, Արտաշես Ա. թագավորի համար առաջնակարգ խնդիր էր, ինչպես ասացինք, նախ և առաջ օգտվելով Սելևկյան իշխանության անկումից հետո Անդրկովկասում և Փ. Ասիայում ստեղծված դրութունից՝ իր երկրի սահմաններն ընդարձակել և ապահովել նրա պաշտպանութունը: Այնուհետև նա ձեռնարկում է ներքին բարեկարգության և շինարարության. կարևոր խնդիր էր նրա համար մայրաքաղաքի հարցը, և քանի որ թագավորության հաստատումից հետո երկրի սահմանները բավական ընդարձակվել էին, հետևապես կարիք էր զգացվում նոր մայրաքաղաք հիմնել մի այնպիսի շրջանում, որը կենտրոնական մասում լիներ և միևնույն ժամանակ ռազմական և առևտրական տեսակետից որոշ առավելութուն ունենար: Արտաշես թագավորը նոր մարդ չէր այդ երկրում. նախքան թագավոր դառնալը նա Սելևկյան իշխանության կողմից նշանակված էր այդ նույն երկրի կառավարիչ: Բացի դրանից, մոտ երկու տասնյակ տարի նվիրելով իր երկրի սահմաններն ընդարձակելու գործին, նա ծանոթ պիտի եղած լիներ իր երկրի համարյա բոլոր կողմերին: Հետևապես և նրա համար մի առանձին դժվարութուն էր կարող ներկայացնել մայրաքաղաքի տեղի ընտրութունը. իր նոր մայրաքաղաքը Արտաշեսը կառուցում է Արարատյան արգավանդ դաշտավայրում, իր երկրի կենտրո-

նախան մասում, կարավանային ճանապարհի վրա, արդյունավետ մի վայրում, որը սազմական տեսակետից ևս պաշտպանվելու մեծ հարմարություն ուներ: Անշուշտ, նույն տեսակետով են առաջնորդվել Արտաշես Ա. թագավորից առաջ նաև Արեվելյան Հայաստանին իշխող Երվանդունիները, կառուցելով Արմավիրը և Երվանդաշատն այդ նույն դաշտավայրի արևմտյան հատվածում, նույնպես Երասխ գետի ափերին:

Աննիրալի Հայաստան գալու և նրա խորհրդով Արտաշատ քաղաքի կառուցման մասին առաջին անգամ հիշատակություն են քառնում Ստրաբոնի աշխարհագրության մեջ, ուր ասված է, թե Արտաքսատան (Արտաշատը) կամ Արտաքսիասատան շինվել է Աննիրալը Արտաքս (Արտաշես) թագավորի համար. նրա խորհրդով է հիմնված և Արքսատան¹: Ստրաբոնի աշխատության բնագրի բոլոր հրատարակիչները, որոնց թվում և Մարգինին, վկայում են, թե վերոհիշյալ նախագասությունն ուրիշների կողմից է եղել ավելացրած Ստրաբոնի աշխատության ձեռագրերի լուսանցքում, իրրև բացատրություն կամ հավելված մի այլ նախագասություն, որը հետագայում գրիչների կողմից մտցվել է բնագրի մեջ: Ստեփաննոս Բյուզանդացին, որն ապրել է մեր թվականության 5-րդ դարի վերջին և, անշուշտ, օգտվել է Ստրաբոնից, ներկա գեպքում չէր կարող չհիշել Աննիրալի անունը, եթե Ստրաբոնի աշխատության մեջ նրա ժամանակ լիներ նրա անունը: Մինչդեռ Ստեփաննոսը պարզապես ասում է... «Պատմվում է, թե այս քաղաքը Արմենիայի թագավոր Արտաքսիան է շինել»²: Պլուտարքոսը նմանապես օգտվել է Ստրաբոնից և վերջինիս անունը քանիցս հիշում է իր զրվածքներում այլ կապակցությամբ: Եթե նա Աննիրալի Հայաստանում լինելու մասին հիշատակություն գտներ Ստրաբոնի աշխատության մեջ, անշուշտ, նրա անունը կտար և չէր ասի, թե «պատմում են»։ նշանակում է, թե Պլուտարքոսի ժամանակ Ստրաբոնի սկզբնագրում դեռ մտցված չի եղել հիշյալ հատվածը և Պլուտարքոսը ներկա գեպքում օգտվել է զրույցներից և կամ մի այլ անվստահելի աղբյուրից: Հույն և հռոմայեցի պատմիչներին հայտնի է եղել, որ Աննիրալը հռոմայեցիների դեմ վարած

¹ Проф. Я. Манандян, О торговле и городах Армении, Ереван, 1930, стр. 38—39.

² Գ. վ. Ի ն ճ ի ճ յ ա ն, Ստորագրություններ..., էջ 489—490:

կռիվներում թեև վերջնական պարտության էր մատնվել, բայց չէր դադարել հետամուտ լինել հոռմայեցիների դեմ իր պայքարը շարունակելու (195 թ. մ. թ. ա.): Հոռմի կողմից Կարթագեն ուղարկված պատգամավորությունը հաստատում է, որ Աննիրալը հարաբերություն մեջ է եղել Սելեկյան թագավոր Անտիոքոս մեծի հետ: Աննիրալը հույս չունենալով, թե Կարթագենի ազդեցիկ մարդիկ կարող են իրեն պաշտպանել քաղաքական այդ ուղղության համար, երկյուղ կրելով նաև դավադրությունից՝ թաքնվում է նախ իր կալվածքում, իսկ երբ կարթագենացիները, ցանկանալով անխախտ պահել Հոռմի հետ կնքված պայմանը, որսշում են Աննիրալին քշել Կարթագենից և գրավել նրա բոլոր ունեցվածքը, Աննիրալը գաղտնի կերպով անցնում է նախ Կրետե և ապա Ասորիք՝ Անտիոքոս մեծի մոտ, և ամեն կերպ ձգտում է նրա աջակցությունը նոր կառույցի կազմել Հոռմի դեմ: 193 թ. (մ. թ. ա.) Աննիրալը Ասորիքից Կարթագեն է ուղարկում Տյուբոսցի Արխատոնին՝ համոզելու իր հայրենակիցներին միանալ հակահռոմեական կառույցիային¹: Մագնեզիայի ճակատամարտից հետո (189 թ. մ. թ. ա.), Աննիրալը խույս է տալիս Բյութանիա, ուր նույն երկրի Պրուզի թագավորի և նրա հարևան իշխանությունների միացյալ ուժերի գլուխ անցնելով՝ հաջող կռիվներ է մղում Հոռմի գաշնակից Պերգամի էվմեն թագավորի դեմ, բայց հետագայում Պրուզին դավաճանում է Աննիրալին և բարեկամական հարաբերություն հաստատելով Հոռմի սենատի հետ՝ կամենում է նրան հոռմայեցիներին հանձնել: Աննիրալն այդ իմանալով՝ ինքն իրեն թունավորում է: Պատմական այս տեղեկություններին կարելի է եզրակացնել, որ Հոռմի դեմ գործելու, նոր կառույցի կազմելու և Կարթագենի հետ սերտ կապ պահպանելու նպատակով Աննիրալի համար ամենահարմար վայրը կարող էր հանդիսանալ Սելեկյան իշխանության մայրաքաղաք Անտիոքը, կամ առհասարակ Ասորիքը և Միջերկրականի մոտ գրաված երկրները և ոչ թե, մեր կարծիքով, Հայաստանը:

Եվ վերջապես, Կոռնիլիոս Նեպոսը մի ամբողջ գիրք է նվիրել Աննիրալի կենսագրության: Այս աշխատության մեջ նա ոչ մի խոսք չի ասում Աննիրալի Հայաստան գալու մասին:

¹ Проф. Н. А. Машкин, Последний век Пунического Карфагени, Вост. Др. истории, № 2, Москва, 1949, стр. 48.

Անիրաւի կյանքի վերջին շրջանի մասին նա միայն հայտնում է, թե Աննիրաւը հայրենիքից հեռանալուց հետո, նախ դնացել է Կրեան, որտեղից անցել Բյութանիա, ուր և մեռել է¹։ Պլուտարքոսը, ի միջի այլոց, ավելացնում է, թե Աննիրաւը նկատելով այդ երկրում (Հայաստանում) հրաշալի և հարմար մի վայր, «չմշակված և բարձի թողի արված», այդտեղի հատակագիծը պատրաստում է Արտաշատ քաղաքի շինության համար։ Պլուտարքոսի վերոհիշյալ վկայութիւնը չի համապատասխանում իրականության։ Դժվար թե Արարատյան դաշտավայրը, հատկապես Արտաշատ քաղաքի շրջակայքը, նախքան այդ քաղաքի շինութիւնը խոսպան և բարձի թողի արված լիներ տեղական բնակչության կողմից 3-րդ—2-րդ դարերում, երբ ջրառատ Մեծամորին Հրազդանի և այլ գետերի հետ միացած, ինչպես և Ազատ գետը, հոսում էին մինչև Արտաշատ և ողողում նրա ամբողջ շրջակայքը։ Դվինի պեղումներից հայտնաբերված պղնձե-դարյան և ուրարտական շրջանի մնացորդները, Զվարթնոցի ավերակներում գտնված ուրարտական թագավոր Ռուսա Բ-ի արձանագրութիւնը, ինչպես նաև ուրարտական ամբողջ Թեյշե-թախում (Կարմիր-բլուրում) երևան հանված հացահատիկի, յուղարբեր բույսերի սերմերի և խաղողի կորիզների մնացորդները պարզ ցույց են տալիս, թե դեռևս շատ վաղ ժամանակներից սկսած Արարատյան դաշտավայրը, հատկապես Վաղարշապատից մինչև Արտաշատի շրջակայքն ընկած տարածութիւնը, մշակման ենթակա է եղել, և հիշատակվում են այդ վայրերում խաղողի ու ծառայողի այգիներ, արհեստական անտառ և ջրանցք²։ Ավելի ուշ շրջանում մենք տեղեկութիւն ունենք նաև ակնատեսի վկայութիւններից։ Դ. Փարպեցին բնիկ Արարատյան նահանգի Արագածոտն գավառի Փարպի գուղիցն էր. ապրել է 5-րդ դարի երկրորդ կեսին, մի քանի տարի շարունակ եղել է Վաղարշապատում ս. Գրիգորի տաճարի փակակալ։ Ամիգից վերագառնալուց հետո էլ նա տեսակցել է Վահան Մամիկոնյանի հետ Դվինում, հետևապես նա շատ մոտ և լավ ծանոթ է եղել Արարատյան դաշտավայրին։ Նրա ժամանակ Մեծամորին հոսում էր մինչև Արտաշատ։ Իր պատմության մեջ նա մի քանի էջ է

¹ Դ. վ. Ինճիճյան, Ստորագրութիւն... էջ 490:

² Մեսրոպ վ., էջմիածին և հայոց հնագոյն եկեղեցիները, Ազգ. Հանդէս, 15-րդ Գ. գիրք, Թիֆլիս, 1907, էջ 123—127:

նվիրում Արարատյան դաշտավայրի բուսականության փարթա-
մության, հողի առատ բերքատվության, որսի կենդանիների,
թռչունների և ձկների բազմության և հստոց ջրերի անբավու-
թյան¹: Այդ բանաստեղծական նկարագրությունը, անշուշտ, սրտը
չափազանցություն է պարունակում, բայց և այնպես ականատես
պատմիչն իրականության մոտ պատկեր է առելու, քանի որ մին-
չև այժմ էլ Արարատյան դաշտավայրի այն մասը, որը ենթակա
է ոռոգման, բերքատվությամբ առատ և այգիներով ու բուսա-
կանությամբ փարթամ է: 4—5-րդ դարում ապրող հոմախեցի հե-
ղինակ Եփեսերեսու Հերոնիմոսին իր՝ «Եսայու մարգարեության
մեկնաբանություն» մեջ Արարատյան դաշտավայրի մասին հայտ-
նում է. «Արարատը մի հարթություն է Հայաստանում, որի մի-
ջով հոսում է Արաքսը, արատսովոր պապաբեր, որը գանվում է
մինչև այդ վայրը ձգվող Տափրոսյան լեռների ստորոտներում»².
Ինչպես երևում է, Եփեսերեսուը Հայկական Պարը (Աղբի դաղը)
համարում է Տափրոսյան լեռների ճյուղավորություն: Նույնն է
եղել Արատշատի շրջակայքը նաև մեր թվականությունից առաջ
2-րդ դարում, քանի որ Մեծամորին իր բնթացքը փոխել է 6-րդ
դարից ոչ առաջ, հեռնապես և Պլուտարքոսի այն կարծիքը, թե
Արատշատ քաղաքի վայրը չօգտագործված և բարձի թողի է
եղել արված տեղական բնակչության կողմից, ճիշտ համարել
չի կարելի: Թ. Մոմզեանը, ինչպես և մի քանի այլ մասնագետ-
ներ Աննիրայի Հայաստան գալու և Արատշատի նրա միջոցով
կառուցվելու մասին տեղեկությունը խիստ կասկածելի և անհիմն
են համարում: Ակադ. Մանանդյանի կարծիքով, այդ տեղեկու-
թյունը առասպելական բնույթ է կրում³:

Եվ վերջապես Արատշատի շինությունն Աննիրային վերա-
գրող պատմադեպոսները մոռանում են մի գլխավոր հանգամանք,
այն, որ Արատշատի կառուցման ժամանակ (նրանց ենթադրու-
թյամբ 170—160 թթ. մ. թ. ա.) Աննիրայը մեռած էր. նա ծըն-
վել է 247 թ. (մ. թ. ա.), ապրել է 65 տարի և մեռել 183 կամ

¹ Դ. Փ ա ր ա կ Ե ց ի, Պատմութիւն Հայոց, Տիգրիս, 1901, գրվող Ա., էջ 9—11:

² Вест. Др. истории, № 4, Москва, 1949, ч. II стр. 230. В. В. Латышев, Изв. др. писателей о Скифии и Кавказе, ч. II, Латинские писатели, Евсевий Иероним: Толкование на пророка Исаю, стр. 230.

³ Մոմզե. Я. Манандян, О торговле..., стр. 39, նույն տեղում Т. Момзен, Römische geschichte, b. V, Berlin, 1886, p. 497.

ամենատուշը 182 թ. (մ. թ. ա)։ Եթե մինչև անգամ ընդունելու լինենք Ստրաբոնի և Պլուտարքոսի վկայութիւնը, որ Աննիրալը եղել է Հայաստանում, դա կարող է լինել միմիայն Անաիրքոսի պարտութիւնից անմիջապես հետո, այն էլ կարճ ժամանակամիջոցով, բայց նա ոչ մի կապ չէր կարող ունենալ Արտաշատ քաղաքի շինութեան հետ։

Ներկա պեպքում կարևոր նշանակութիւն ունի մեզ համար և Մ. Խորենացու հաղորդած տեղեկութիւնը Արտաշատի շինութեան վերաբերյալ. նա պարզապես շեշտում է, թե... «ափելի ևս ինքն իրենից է հորինում ինչպես արքայանիստ քաղաք»¹։

Արտաշատը կառուցվում է Արարատյան դաշտավայրում, Երասխ գետի ձախ ափին, այնտեղ, ուր Մեծամորին կամ Սև ջուրը թափվում է Երասխը, այդ երկու գետերի խառնարանի շրջանում կազմված թերակղզու վրա, ուր գտնվում էր նաև Արտաշատի պղծակը հանդիսացող Խոր Վիրապ կոչվող բլուրը։ Մայրաքաղաքը երեք կողմից շրջապատված է եղել Երասխ և Մեծամորի գետերի ջրերով։ Ինչպես վերևը ցույց տվինք, «Աշխարհացոյցի» հեղինակի վկայութեամբ, որ միանգամայն ճիշտ կարելի է համարել, Արտաշատը շինված է եղել Մեծամորի (իսկ հետագայում Ազատ) գետի և Երասխի խառնարանի մոտ գտնված թերակղզում և ոչ թե Երասխի մի սլորապտույտից կազմված թերակղզու վրա։ Ստրաբոնի և Տակիտոսի վկայութեամբ, քաղաքը շրջապատող ջրերի ափերին զուգահեռ կառուցվում են քաղաքի պարիսպները, իսկ չորրորդ կողմից, ուր պարանոցն էր, քաղաքն ամրացվում է խրամով և պատվարով։ Քաղաքի պարիսպները, Տակիտոսի վկայութեամբ, ընդարձակ տարածութիւն էին ընդգրկում, այնքան ընդարձակ, որ հոռմայեցի զորավար Կորբուլոնը հնարավոր չի գտնում փոքրաթիվ զորք թողնել այդտեղ քաղաքի պաշտպանութեան համար. Մ. Խորենացու վկայութեամբ, քաղաքը շինվում է արագութեամբ. Խոր Վիրապի բլուրն իր գիբքով գերիշխող էր շրջապատի վրա, հետևապես և կարելի է ենթադրել, որ միջնաբերդը կառուցված էր այդ բլրի վրա, մասնավանդ որ այդտեղ նկատելի են միջնադարյան շենքերի և պարիսպների հետքեր. սակայն այդ խնդիրը կարելի է պարզել միմիայն հետախուզական պեղումների միջոցով։ Քաղաքի գլխավոր դռներից կողմնակի տեղեկութիւն ունենք երեքի մա-

¹ Մ. Խորենացի, Բ. գիրք, գլ. ԽԹ, էջ 177։

սին միայն. այդ դռներից մեկը շինված էր քաղաքի հարավային կողմի պարսպի մեջ, Տափերական կամրջի գիմացը, որտեղով երթևեկելու թյուն էր կատարվում թե՛ դեպի արևելք՝ Իրան, և թե՛ դեպի արևմուտք ու հարավ-արևմուտք՝ Փ. Ասիայի և Ասորիքի կողմերը: Քաղաքի երկրորդ դուռը գտնվում էր արևմտյան պարսպի մեջ, Մեծամորի գետի վրա կառուցված կամրջի գիմացը, որտեղով ճանապարհն անցնում էր Երվանդաշատ, Արմավիր, հետագայում՝ Վաղարշապատ և Հայաստանի հյուսիս-արևմտյան կողմերը: Արտաշատի հյուսիսային կամ պարանոցածե ցամաքի կողմը շինված պարսպի մեջ կար մի երրորդ դուռ, որտեղով անցնում էր մի այլ ճանապարհ դեպի Գառնի ամրոցը և Հայաստանի հյուսիսային կողմերը. թեև այդ մասին պարզ վկայություն չկա պատմական աղբյուրներում, մենք պետք է հիշենք այն փաստը, որ հետագայում, երբ Խոսրով Կոտակը անտառ է անկել տալիս Գառնիից մինչև Արտաշատ քաղաքը և Երասխ գետը, այդ անտառը Դվինի բլրի մոտ երկու մասի է բաժանում և ամեն մի մասն առանձին պարսպապատում, թողնելով նրանց միջև պողոտա, անշուշտ, դեպի Գառնի և հյուսիսային այլ վայրեր երթևեկելու համար: Այդ պողոտան սկսվում էր ուղղակի Երասխի ափից, Տափարական կոչված կամրջից և անցնելով Արտաշատ քաղաքի միջով, դուրս էր գալիս քաղաքի հյուսիսային դռնից և ձգվում դեպի Գառնի. և երբ հետագայում Արտաշատը կտրցնում է իր նշանակությունը, իբրև մայրաքաղաք կամ միջազգային առևտրի գլխավոր հանգույց, և Դվինն է դեր խաղում, Արտաշատի հյուսիսային պարսպի մեջ շինված այդ դուռը մեր պատմագիրներից ոմանք (ինչպես թ. Արծրունին) Դվինի դուռն են անվանում, ցույց տալու համար, որ այդ դռնով ճանապարհն անցնում է դեպի Դվին¹:

Արտաշատ մայրաքաղաքի ներքին շինարարության համընթաց կառուցվում են նաև հեթանոսական տաճարներ կամ մեհյաններ, շինվում են բազիլիկներ՝ նվիրված աստվածներին, ուր դրվում են նրանց անդրինները. պաշտամունքի առարկաներ էին արևը և լուսինը. Ագաթանգեղոսը պատմում է, թե երբ Քրիստոնեությունը տարածելու կապակցությամբ Գրիգոր Լուսավորիչը զորքով դիմում է Արտաշատ հեթանոսական տաճարները

¹ Թ. Արծրունի, Պատմութիւն տանն Արծրունեաց, Կ. Պոլս, 1852, էջ 336-337:

կործանելու և քրիստոնեական եկեղեցիներ հիմնելու, ճանապարհին նա ավերել է տալիս քրմերի գիտութեան դպիր Տիր աստվածի մեհյանը, Արտաշատի մերձակայքում՝ Երազամուշն դից վայրերը, իսկ բուն Արտաշատ քաղաքի մեջ այդ նույն քաղաքի հովանավոր Անահիտի բազինը: Այստեղ քրմերը մեծ գիմադրութեան են ցույց տալիս. Գրիգոր Պարթևին հաջողվում է հրդեհի մատնել Անահիտին նվիրված տաճարը, հիմքից քանդել տալ բազինը, գրավել բոլոր գանձերը, տաճարին պատկանող պատակերտները և այնտեղ ծառայող ու պաշտոնավարող սպասավորներին, քրմերին դարձնել քրիստոնեական եկեղեցու սպասավորներ և նրանց տնտեսականն ապահովել՝ Անահիտի տաճարից գրավված շարժական և անշարժ կալքով¹:

Արտաշատում հեթանոսական տաճարների մասին մի քիչ ավելի բնագործակ տեղեկություն է տալիս Մ. Խորենացին. նրա վկայութեամբ Արտաշեսը մեհյաններ է շինում Արտաշատում և Բագարանից այնտեղ փոխադրում Արտեմիդի արձանը, և հայրենի բոլոր կուռքերը, իսկ Ապոլլոնի արձանը նա կանգնեցնել է տալիս քաղաքից դուրս, ճանապարհի մոտ: Հիշյալ աստվածների արձանները Արտաշես Ա. թագավորի ժամանակ արդեն Հայաստանում էին գտնվում և զետեղված էին Արմավիր քաղաքում: Հունական աստվածների պաշտամունքը Հայաստանում հետևանք էր հելլենիստական կուլտուրայի խոր ազդեցության. հայ ժողովուրդը հունական աստվածներին նույնացնում էր իր համապատասխան աստվածների հետ և պաշտամունքի առարկա դարձնում, ինչպես Արտեմիդին՝ Անահիտի հետ, Ապոլլոնին՝ Տիրի հետ, և այլն:

Մի այլ կապակցությամբ Մ. Խորենացին հայտնում է, թե հայոց Խոսրով թագավորի սպանությունից հետո, Արտաշիր Սասանյանը մտնում է Հայաստան և Արտաշատ քաղաքում կործանում բոլոր հեթանոսական աստվածների արձանները. «Բայց այն արձանները, որ Վաղարշակն էր պատրաստել տվել իր նախնիների պատկերով, արեգակի և լուսնի հետ միասին և որոնք Արմավիրում էին, փոխադրվում են Արմավիրից Բագարան և ապա Արտաշատ, այն բոլորը կործանում է Արտաշիրը»²: Պարզ է, որ

¹ Ա գ ա թ ա ն գ ե ղ ո ս, էջ 404:

² Մ. Խորենացի, Բ. գիրք, Հե. գլ., էջ 216.

«Բայց զանգրիսն», զոր արար Վաղարշակ պատկեր իւրոց նախնեացն հանդերձ արեգակաւն և լուսնիւ յԱրմաւիր, և փոխեաց յԱրմաւրոյ ի Բագարան և զարձեալ յԱրտաշատ՝ զայնոսիկ փշրէ Արտաշիրը»:

վերոհիշյալ հեթանոսական տաճարները միանգամից Արտաշես Ա. թագավորի ժամանակ չկառուցվեցին, այլ քաղաքի շինութեան հետ սկսվեցին և հետագայում դրանց թիֆն ավելացաւ:

Մայրաքաղաքի բնակչութեան թիվը շատացնելու և արհեստներն ու անասուրը զարգացնելու համար, Արտաշես Ա-ն իր նոր քաղաքն է փոխադրում այն գերի հրեաներին, որոնք Երվանդ թագավորի օրով Արմավիրից Երվանդաշատ էին տարվել, ինչպես նաև Երվանդաշատ քաղաքի բոլոր գեղեցիկութունները, որ Արմավիրից էին տարվել այնպեղ, և կամ ինքը Երվանդ թագավորն էր պատրաստել ավել, փոխադրում է Արտաշատ: Արտաշես թագավորը ևս իր կողմից արքայանիստ քաղաքին վայել զանազան շինութեաններ է պատրաստում: Այսպես է վերջացնում Արտաշատ քաղաքի կառուցման վերաբերյալ իր նկարագրութեանը Մ. Խորենացին¹:

Արտաշատում, իրեն հելլենիստական տիպի քաղաքում, կառուցվում է թատրոն, որի մասին հայանում են օտար հեղինակները քիչ ավելի ուշ ժամանակ. այսպես, Արտավազդ Բ. թագավորի օրով (մոտ 53—33 թթ. մ. թ. ա.) Արտաշատ քաղաքի թատրոնում հույն տրագիկ Յազոնի. գլխավորութեամբ դերասանական խումբը ներկայացնում է Էվրիպիդեսի «Քաջոսյանները» ողբերգութեանը. ինքն Արտավազդ թագավորը ևս գրում է ողբերգութեաններ, որոնք խաղացվում են նույն քաղաքի թատրոնում²:

Արտաշատ քաղաքի, ինչպես և Արտաշիսյան հարստութեան թագավորների անուններով մեր ձեռքը հասած դրամներից պարզվում է, որ այդ քաղաքում դրամահատութեան համար շինված է եղել փողեքանոց դեռևս Արտաշես Ա. թագավորի ժամանակ. այդ դրամներից երկուսը, որ պղնձից են պատրաստված, կրում են հատկապես Արտաշատ քաղաքի անունը հունական արտասանութեամբ և տառերով՝ ΑΡΤΑΣΑ[ΤΑ]³:

Արարատյան դաշտավայրն առհասարակ, համեմատած պատմական Հայաստանի այլ վայրերի հետ, մեծ առավելութուններ է ներկայացնում տնտեսական զարգացման համար. ամենագլը-

¹ Խորենացի, Բ. դիրք, ԽԹ. 41., էջ 176—177:

² Ա. Կ. Գ. Հ. Մանանդյան, Քննական տեսութուն հայ ժողովրդի պատմության, հ. Ա., Երևան, 1944, էջ 243 (Plut. Crassus, XXXIII, 1):

³ ՀՄՍՌ ԳԱ Պատմական թանգարանի Դրամադիտական բաժնի մատյան, ԱԼՅ 5374 և 8926:

խափորն այդտեղ հոսող ջրերի ու սոսոզման համար գործադրված միջոցների առկայությունն է: Առանձնապես խոսելով Արարատյան գաղտավայրի այն շրջանի մասին, ուր շինված էր Արտաշատը, պիտի նկատել, որ կլիման մեղմ է, հոսող ջրերով բավական հարուստ: Մեծամորին, Քասախը, Ջանգուն և վերջապես Ազատ գետը միախառնված՝ առատ ջուր էին մատակարարում Արտաշատի ամբողջ շրջանին: Կասկածից զուրս է, որ խոսրով կոտակ թագավորն առանձնապես այդ հանգամանքը նկատի ուներ, երբ հրամայում էր անտառ տնկել Գառնի բերդից մինչև Նրասխի ափը, մոտ 35—40 կիլոմետր տարածությունը:

Արտաշատ մայրաքաղաքի տնտեսական զարգացման համար մեծ կարևորություն էր ներկայացնում նաև տարանցիկ առևտրի կարավանային ճանապարհը, որը դեռևս վաղ ժամանակներից անցնում էր Արարատյան գաղտավայրի միջով՝ Նրասխ գետի աջ ափով, այն վայրի մոտով, ուր կառուցվում է Արտաշատը: Արտաշատյան թագավորութան նախորդ շրջանում, ինչպես և նրանից առաջ, Արարատյան գաղտավայրում և նրա մերձակայքում հիմնված բերդաքաղաքները՝ Արմավիրը, Նրվանդաշատը, Քաղարանը, Վարդգեսավանը և այլն, տարանցիկ առևտրի ճանապարհով կապված էին մի կողմից Ատրպատականի Գանձակ քաղաքի, իսկ արևմտյան կողմից՝ Փ. Ասիայի և Սև ծովի հարավ-արևելյան ափերի մոտ գտնվող քաղաքների հետ. բացի դրանից տարանցիկ առևտրի այդ ճանապարհն Արտաշատ քաղաքի մոտ ճյուղավորվում և ձգվում էր զանազան ուղղությամբ՝ կապվելով Հայաստանի ներսում շինված նշանավոր քաղաքների և կայանների, ինչպես և նույն ուղղություններով արտաքին շուկաների հետ: Այդ հանգամանքի շնորհիվ Արտաշատում, իբրև տարանցիկ առևտրի գլխավոր հանգույցում, մաքս էր գանձվում ներմուծվող և արտահանվող ապրանքներից: Նշանակում է, թե կար և մաքսատուն: Արտաշատի շուկայում տեղի էր ունենում ապրանքափոխանակություն, իսկ Արտաշատյան թագավորության շրջանում հնչուն գրամի մուտքն ավելի ևս օգնում է Արտաշատի առևտրի աշխուժացման. այդտեղ են կենտրոնանում արհեստավորներն ու առևտրականները, զարգանում է աստիճանաբար և տեղական արդյունագործությունը:

Թե ինչ կարևոր դեր էր վիճակված Արտաշատ քաղաքին տարանցիկ առևտրի արտաքին շուկաների և Հայաստանի ներսում կառուցված քաղաքների տնտեսության և առևտրի զարգացման մեջ:

այդ մասին կարևոր տեղեկություններ ենք գտնում Պետինգերյան ուղեցույց-քարտեզում, որի հեղինակն է համարվում աշխարհագրագետ Կաստորիոսը և որը կազմված է համարվում չորրորդ դարի երրորդ քառորդում: Հոռոմայեցի հեղինակը կազմելով այս քարտեզը, անշուշտ, աչքի առաջ ուներ ավելի գործնական նպատակ. նրա ցանկությունն է եղել որոշ ծառայություն մատուցել իր հայրենակիցներին, որոնք վաղուց արդեն մուտք էին գործել Մերձավոր Արևելք, շահագրգռված էին այդտեղի առևտրով, տեղական արդյունադործությամբ, քաղաքների անտեսական վիճակով և այդ ամենի հետ կապված կարավանային ու ուղղմական ճանապարհներով: Արտաշատ քաղաքն, ըստ այդ քարտեղի, տարանցիկ առևտրի հյուսիսային ճանապարհի վրա բնկած կարևոր հանգույցներից մեկն է հանդիսանում, իսկ Հայաստանի շատ քաղաքների համար ամենագլխավոր և կենտրոնական հանգույցը կարելի է համարել, որտեղից զանազան ուղղությամբ հինգ կարավանային կամ ուղղմական ճանապարհներ էին ձգվում: Այդ ճանապարհներից մեկը Արտաշատից ուղղվում էր դեպի Փ. Ասիայի Սատաղ (Սատալա) քաղաքը, որը մոտ 600 կիլոմետր հեռու էր գտնվում և անցնում էր Հայաստանի հեռեկալ հանգուցային կայաններով՝ Փառախոտ, Յուլիերտ, Բագավան, Արամանա, Անտաք, Վանանդ, Խաղտոյառիճ և Սատաղ:

Կարավանային երկրորդ ճանապարհն սկսվում էր Արտաշատից և վերոհիշյալ գծով շարունակվելով մինչև Բագավան՝ անցնում էր Դիդեմ, Հարք, Ծումբ, Դոնեվանք, Կիլիկի, Ջյուռնակերտ և Տիգրանակերտ:

Երրորդ գիծն Արտաշատից ձգվում էր դեպի հյուսիս-արևմուտք և հասնում Սև ծովի արևելյան ափը՝ Սևաստոպոլիս և անցնում էր, ըստ ահագ. Հ. Մանանդյանի, ներկայիս Աշտարակ, Կոնդախսազ, Ղանլիճա, Խոսովիա, Կուր գետը, Զեկառի լեռնանցքը, Ռիոն գետը և ապա Սևաստոպոլիս:

Արտաշատից սկսվող ճանապարհների չորրորդ ուղղությունը դեպի հարավ-արևելք էր և անցնում էր Որտոսպու, Արտազ, Նուարսակ, Խոյ, Տոսվիջ և հասնում Պարսք¹:

¹ Պետինգերյան քարտեղի և Արտաշատից զանազան կողմեր ձգվող ճանապարհների վերաբերյալ տեղեկությունները քաղված են ահագ. Հ. Մանանդյանի «Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները» գրքից, Երևան, 1936, էջ 85—114, 135 և 172:

Հինգերորդ գիծը Արտաշատից ուղղվում էր դեպի հյուսիս և հասնում Մր՛վակախուման Իրերիայի գլխավոր քաղաք Արմաստիկան (Արմավրացիխե), որ գտնվում է Մցիխեթի մոտ, ոչ հեռու այն տեղից, ուր Արագվան թափվում է Կուր գետի մեջ: Այս ճանապարհն անցնում էր Սևանի լճի մոտով դեպի Դիլիջան, Աղստև և Արմաստիկա¹:

Կարավանային այս հինգ ուղղութիւնները ցույց են տալիս, թէ ինչպիսի տարանցիկ առևտրական ճանապարհները հանդուցային կենտրոնն էր հանդիսանում Արտաշատը և ինչպես կարող էր տնտեսագետ բարգավաճել: Դժբախտաբար Պետինգերյան ուղեցույց, քարտեզի վրա Հայաստանում հիշված հանդուցային գլխավոր և երկրորդական կայանների անունների զգալի մասն այնքան է աղավաղված, որ դրանց տեղերը հայտնի չեն, մի մասն էլ ենթադրաբար է որոշվում, բայց և այնպես չնայելով այդ թերութիւններին, Արտաշատից ձգվող ճանապարհների ուղղութիւնը և վերջնական կայանների տեղերը կասկածի ենթակա չեն:

Հելլենիստական շրջանում առևտրի տեսակետից Հայաստանը սերտ կապեր ուներ արևելյան կողմից Մարաստանի (Մեգիսի) հետ, որն իր հերթին Պարսկաստանի վրայով կապված էր Հնդկաստանի և Բակտրիայի հետ. վերջին այս երկրներից արտածվում էին մետաքս, մետաքսե գործվածքներ և զանազան համեմունքներ դեպի Փ. Ասիայի քաղաքները և Սև ծովի հարավային և արևելյան ափերին գտնվող քաղաքների շուկաները: Նույն ուղղութիւնով արևմուտքից դեպի արևելք էին ուղարկվում մետաղներից պատրաստած գործիքներ, ապակյա սրվակներ, կավե նկարազարդ անոթներ և այլն: Տարանցիկ առևտրի այդ ճանապարհներն էին, սր վաղ ժամանակներից սկսած մեծ կարևորութիւն ունեին նաև Հայաստանի առևտրական և առհասարակ տնտեսական կյանքի զարգացման համար:

Արտաշատն այդ շրջանում անմիջական կապ ուներ Մարաստանի (Մեգիսի) ավելի հին և ազա հելլենիստական ժամանակաշրջանում կառուցված քաղաքների՝ Էկրատանի և Ատրուպատականի Գանձակի հետ². Այսպիսով կային նպաստավոր պայմաններ Արտաշատ քաղաքի տնտեսական զարգացման համար:

¹ Markwart. Skizzen zur historischen Topographie und Geschichte von Kaukasien, Wien, 1929, стр. 63.

² Проф. Я. М а н а н д я н, О торговле..., стр. 22—23, 39, 42, 47, 84—85.

Հոտմայեցիները թեև 190 թ. (մ. թ. ա.) սկսած ուք էին գրել Միջերկրական ծովի արևելյան առափնյա երկրները, ինչպես և Փ. Ասիայի մի քանի իշխանությունների հողերի վրա, սակայն մինչև առջին դարի սկիզբը (մ. թ. ա.) նրանք դեռ գրազված էին քաղաքականությամբ կամ զենքի ուժով այդ վայրում հիմնական բազա ստեղծելու իրենց հետագա գրավումների համար. ուժեղ բախումներ դեռ չէին սկսվել Արևելքի այդ ժամանակ համեմատաբար ավելի ուժեղ պետությունների՝ պարթևների, Պոնտոսի և Հայաստանի թագավորությունների դեմ:

Պլուտարքոսը Հայաստանի վրա Լուկուլլոսի կատարած արշավանքի կապակցությամբ Արտաշատն տնվանում է «Հայաստանի կարթագեն», մի այլ տեղ՝ «Մեծ և շատ գեղեցիկ»: Սակայն Արտաշատի այդ շրջանի տնտեսական կյանքի, ներքին արտագրություն և միջազգային առևտրի մասնակցություն չափերի մասին տեղեկությունները պակասում են: Մենք ունենք միայն Սարաբոնի, Պլինիոս ավագի և բժ. Դիոսկորիդի համառատ տեղեկություններն առհասարակ մեր թվականությունից առաջ Չ-րդ և 1-ին դդ. Հայաստանի միջազգային առևտրին մասնակցելու և Հայաստանից արտասահման ուղարկվող աղբանքներից մի քանիսի մասին. այսպես՝ Պլինիոս ավագը թվում է Հայաստանից արտաքին շուկա արտահանվող մի քանի բույսերի, ներկերի և թանկարժեք քարերի անուններ, որոնց մի մասը, անշուշտ, ձեռք էր բերվում Արտաշատում կամ նրա շրջանում, ինչպես ներքին և արտաքին շուկաներում շատ տարածված որգան կարմիր ներկը:

3. ԱՐՏԱՇԱՏԷ ԱՐՏԱՇԻՍՅԱՆ ՀԱՐՄՏՈՒԹՅԱՆ ՍԿՁԲՆԱԿԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ
ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈՒ ՍՈՅՒԱՎԱԿԱՆ ՂԻՃԱԿԸ

Արտաշատի հիմնադիր Արտաշես Ա-ի մահվան ճիշտ թվականը հայտնի չէ: Դիոգորոս Սիկիլիացու վիչալությունը իրեն Մարաստանի (Մեդիայի) թագավոր համարող Տրամարքոսը 161 թ. (մ. թ. ա.) դաշն է կնքում Արմենիայի թագավոր Արտաքսիասի (Արտաշեսի) հետ՝ Սելևկյանների դեմ կռվելու համար. նշանակում է, թե նա մեռած կարող է լինել հիշյալ թվականից հետո. քնդունված կարծիքն այն է, որ նա մեռել է 160 թ. (մ. թ. ա.):

Արտաշես Ա-ից հետո, մոտ 65—70 տարվա մի շրջան մութ է մնում հայ ժողովրդի պատմություն մեզ: Մ. Խորենացու ավան-

¹ Ակադ. Հ. Մ ա ն ա ն ղ յ ա ն, Տիգրան Բ. և Հոտմը, Երևան, 1940, էջ 25:

դուժյուներին ու առասպելներից հյուսած պատմությունը Արտաշեսի հաջորդների և նրանց գործունեության վերաբերյալ, բավարար համարել չի կարելի: Օտար հեղինակների կցկտուր տեղեկությունների վրա հիմնված բանասիրական մի քանի երկերում այն կարծիքն է հայտնված (Ռայնաք, ակադ. Ն. Մանանդյան), որ Արտաշես Ա-ին հաջորդում է նրա որդի Արտավազդ Ա-ն, իսկ վերջինիս՝ իր եղբայր Տիգրան Ա-ն: Ապպիանոսի վկայությամբ, ահա այս Տիգրանի որդին էր Տիգրան Բ-ն: Վերջինիս նկատմամբ Յուստինոսն ասում է, թե Պարթևաց թագավոր Միհրդատ Բ-ն (123—88 թ. մ. թ. ա.) կռիվ է մղել հայոց Արտավազդ թագավորի դեմ և նրա որդի արքայազն Տիգրանին պատանդ վերցրել¹, թե ի՞նչ պայքարի հետևանք էր պարթևների և հայերի կռիվը, պարզ չէ. դա չի հաստատվում նաև Յուստինոսի, այն վկայությամբ, որ իբր թե պարթևների Միհրդատ Բ-ն պապատերազմել է հայոց Արտավազդ Ա. թագավորի դեմ, քանի որ Ապպիանոսի վկայությամբ Միհրդատ Բ-ն կռվից հետո պատանդ է վերցնում թագավորի, այսինքն՝ Տիգրան Ա-ի որդի Տիգրանին (Բ), իսկ Արտավազդ Ա-ն հանդես է դալիս իբրև Տիգրան Բ-ի հորեղբայրը: Նշանակում է, թե Միհրդատի կռիվը Տիգրան Ա-ի դեմ միայն կարող էր լինել:

Իր հիմնարկությունից մինչև Տիգրան Բ-ի թագավորության սկզբնական շրջանը թե հայ և թե օտար աղբյուրները ոչինչ չեն հիշում Արտաշատ քաղաքի մասին: Կարելի է ենթադրել միայն, որ Պարթևների Միհրդատ Բ-ի հետ խաղաղության դաշն կնքելով՝ Հայաստանի մայրաքաղաքը շարունակում էր իր դերը կատարել իբրև Արևելքի և Արևմուտքի միջև տարանցիկ առևտրի հյուսիսային գծի վրա գտնվող գլխավոր հանգույցներից մեկը, որով շահագրգռված էին անշուշտ նաև Պարթևները: Պոնտոսի թագավոր Միհրդատ Եվպատորի բարեկամական դաշնագրությունը Մարաստանի (Ատրպատականի Մեդիայի), Իրերիայի և Մեծ Հայքի հետ, ինչպես Ռայնաքն է շեշտում, մասամբ կարելի է բացատրել նրանով, որ Պոնտոսի թագավորը ձգտում էր առևտրական սերտ կապեր ստեղծելով արևելյան հարևան պետությունների հետ՝ նրանց երկրների միջև անցնող տարանցիկ առևտրի ճանապարհները միացնել իր երկրի քաղաքների, մասնա-

¹ Ակադ. Ն. Մանանդյան, Տիգրան Բ. և Հոմեր, Երևան, 1940, էջ 27:

վանդ ծովամերձ նավահանգիստ քաղաքների հետ, իր երկրի առևարի զարգացման համար¹: Այդ տեսակետից Մեծ Հայքի քաղաքներից ամենագլխավոր գերը կարող էր խաղալ Արտաշատ մայրաքաղաքը:

Տնտեսական և առևտրական, ինչպես և բնակչության բազմանալու տեսակետից, Արտաշատն ուժեղ թափ է ստանում Տիգրան Բ-ի թագավորության առաջին մի քանի տասնամյակի ընթացքում. այդ միապետի գեպի արտաքին երկրքներ կատարած արշավանքների հետևանքով մեծ քանակությամբ բնակչություն է տեղափոխվում Հայաստանի մի քանի քաղաքները, որոնց թվում նաև Արտաշատ, ինչպես կողմնակի կերպով կարելի է եզրակացնել Փ. Բուզանդի և Մ. Խորենացու այլ կապակցությամբ հաղորդած տեղեկությունից²: Դրանց մեջ գերակշռող թիվ էին կազմում արհեստավորներն ու վաճառականները: Մասամբ դրանով կարելի է բացատրել հույն և հռոմայեցի³ ժամանակով ավելի մոտ սլատամազիբների վկայությունը Արտաշատի ընդարձակման և բարգավաճման մասին: Ծովքի միացումը Մեծ Հայքին, ինչպես և Կապադովկիայի հարավ-արևելյան մասի ու Եփրատի աջ ափին գանձող Մելիտինն վաճառաշահ քաղաքի գրավումն այն գրական արդյունքն ունեցան հատկապես Արտաշատի անտեսական և առևտրական զարգացման տեսակետից, որ այդ ուղղությամբ Արտաշատը հաղորդակից դարձավ նաև Միջագետքի հյուսիսային և Աղձնիքի հարավային կողմից գեպի Կապադովկիա անցնող «արքունական» տարանցիկ առևտրի ճանապարհին: Ծովքի մի քանի քաղաքները դեռ վաղ ժամանակներում այդ ճանապարհի հետ կապ ունենալով՝ կուլտուրապես և առևտրի տեսակետից ավելի բարձր մակարդակի վրա էին գրանվում: Բացի դրանից, Դաշտային Կիլիկիայի, Ասորիքի և Փյունիկիայի նվաճումը Տիգրան Բ-ի կողմից այն հետևանքն ունեցավ, որ «արքունական» ճանապարհի հարավային գլխավոր գծի տարանցիկ առևտրից ստացած մաքսը, ինչպես և հպատակ երկրներին զանձած հարկը մտնում էր արքունի գանձարանը, որ սկանվում էր մեծ մասամբ Արտաշատում և արքունի մի քանի բերդերում, իսկ հետագայում նաև Տիգրանակերտում: Այսպիսով

¹ Проф. Я. Манандян, О торговле и городах Армении, стр. 48—49.

² Մ. Խորենացի, Պատմութիւն, Գ. դերք: զլ. Լե., էջ 300, Փ. Բուզանդ, Գիրք դպրութեան, զլ. ԾԾ.:

ստեղծվել էին նպաստավոր պայմաններ Արտաշատի տնտեսական և առևտրական զարգացման համար: Թե ի՞նչ հարստություն էր կուտակված միայն Արտաշատում և Տիգրանակերտում Տիգրան Բ-ի իշխանությունից սկզբնական շրջանում, կարելի է գաղափար կազմել նրանից, որ երբ 69 թ. (մ. թ. ա.) Լուկուլլոսը գրավում է Տիգրանակերտը, արքունի գանձարանից նա վերցնում է մոտ 15 միլիոն ուրբի սկուռ արժեքով (իսկ գանձերի մի մասն էլ Տիգրանը հետն էր տարել): Պոմպեոսն Արտաշատ մտնելով և խաղաղություն գաշն կնքելով՝ իբրև պատերազմական սուղանք Տիգրանից ստանում է մոտ 12 միլիոն ուրբու արժույթյամբ սկի, բացի այն գումարից, որ Տիգրանը վճարում է հումեական զինվորներին և զորապետներին:

Արտաշատի, իբրև միջազգային առևտրի հանգուցային գըլխավոր կենտրոնի մասին, հիշատակություն ենք գտնում ավելի ուշ շրջանից՝ Յուստինիանոսի ժամանակվանից. 408/409 թ. էդիկտից հայտնի է, որ Սասանյան Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև միջազգային առևտրի համար կնքված դաշնագրությամբ այդ երկու պետությունների մեջ առևտուրը թույլ է տրվում երեք որոշ կետերում՝ Հյուսիսային Միջագետքով անցնող տարանցիկ առևտրի ճանապարհին պարսիկները ապրանքների մաքսը գանձում էին Նիզիբին (Մծբին) քաղաքում, Բյուզանդիան՝ Կալիսիկում քաղաքում, իսկ Հայաստանի վրայով անցնող տարանցիկ առևտրի դժի վրա մաքսը գանձվում էր Արտաշատ քաղաքում: Այդ համաձայնությունը կայացել էր 387 թ. պայմանագրի հիման վրա, երբ Հայաստանը բաժանվում է Հռոմի և Պարսկաստանի միջև, սակայն, ինչպես իրավացի կերպով նկատել է ակադ. Հ. Մանանդյանը, Արտաշատը դեռ ավելի վաղ ժամանակներում, նախքան պայմանագրի կնքումը, միջազգային առևտրական հարաբերությունների վայր էր ներկայանում¹:

Արտաշխայան թագավորության շրջանում Հայաստանի թե արտաքին և թե ներքին առևտրի աշխուժացմանը մեծ չափով նպաստում է և հնչուն դրամը. բացի մաքսի, առևտրի և զանազան այլ միջոցներով Հայաստան մուտք գործող հարևան պետությունների դրամներից, Արտաշխայան տոհմի թագավորները ևս դրամ էին կտրում ոսկուց, արծաթից և պղնձից հունարեն մա-

¹ Проф. Я. Манандян, О торговле..., стр. 86—87.

կազմությամբ: Այդ տեսակետից կարևոր մի երևույթ է հանդիսանում 1946 թ. Սիսիանի շրջանի Սառնակունք (նախկին Սայրալու) գյուղի մոտ հայտնաբերված գանձը, որ տեղացիների վիճառությամբ, մոտ 5—6 կիլոգրամ է եղել և որից ՀՍՍՌ Պետպատմական թանգարանը կարողացել է ձեռք բերել մի կիլոգրամից քիչ ավելի գրամ, թվով 178 հատ արծաթյա թեթրագրամա, գրամա և դենար, կազմված ութ տարբեր երկրների գրամներից: Այդ գանձի գրամները, կտրած ժամանակի տեսակետից, այնքան հետու չեն միմյանցից և վերաբերում են (մ. թ. ա.) երկրորդ դարի սկզբից մինչև (մ. թ. ա.) առաջի դարի 30-ական թվականների վերջը կազմող շրջանին¹: Սառնակունքի գանձի մեր ձեռքը հասած գրամների մեծ մասը վերաբերում է հռոմեական հանրապետության, ապա Սելևկյան թագավորներին, Փյունիկիայի Տյուրոս քաղաքին և Պարթևական իշխանություն: Համեմատաբար շատ փոքր թիվ են կազմում Հայաստանի Արտաշեսյան հարստության, Կապադոկիայի, Փ. Ասիայի և Պոնտոսի թագավորության գրամները: Բազմաթեանակ գրամներից կազմված այդ գանձի հայտնաբերումը Հայաստանի հյուսիս-արևելյան հեռավոր երկրամասում ցույց է տալիս, թե առևտրական ինչ կապեր ունեին հայերը հարևան երկրների հետ դեռևս Արտաշեսյան թագավորության շրջանում: Բացի դրանից, Սուլեյմանյան Հայաստանի տերիտորիայում դաշտային աշխատանքների և շինարարության ժամանակ շատ հաճախ են հայտնաբերվում, թեև հատ-հատ, հռոմեական հանրապետության եռապետ Օկտավիանոսի (հետագայում Օգոստոս կայսեր), Պարթևացի Որոտ 1-ի (Օրոտես) և Սելևկյան թագավորների գրամներ, որոնք նույնպես (մ. թ. ա.) առաջին դարին են վերաբերում. այդ ամենը հետևանք էր Արտաշեսյան թագավորության շրջանում հայերի ունեցած սերտ առևտրական հարաբերության հարևան երկրների հետ:

Տվյալ շրջանում Արտաշատ քաղաքի վերաբերյալ տեղեկությունները կցկտուր և պակասավոր են: Կասկածից դուրս է, որ իբրև արևելյան հելլենիստական կուլտուրայի շրջանում կառուցված քաղաք, նրա բնակչությունը ևս ընդհանուր գծերով նույն պատկերը պիտի ունենար, ինչ որ այդ ժամանակաշրջանում

¹ ՀՍՍՌ Պետ. պատմական թանգարանի գրամագիտ. բաժնի մատյան №№ 15077—15113, 15119—15193 և 16089—16148:

կառուցված Մեկեկիա և Անտիոք քաղաքների բնակչութիւնը: Արտաշատում գտնվում էր թագավորի պալատը և նրա արքունիքը: Հայաստանի ավագանին, որ կապված էր արքունիքի հետ, համախմբված էր թագավորի շուրջը: Բավական մեծ թիվ էին կազմում քաղաքում շինված հեթանոսական տաճարների պաշտոնյաները: Թագավորն իր ավագանիով և քրմական դասը կազմում էին քաղաքի բնակչութիւնն յերնախալը, այսինքն՝ շահագործող դասը: Հայ պատմագիրների վկայութեամբ, Հայաստանի մի քանի նշանավոր քաղաքները, ինչպես և Արտաշատը, բավական թիվով բնակչութիւն ունեին. բացի տեղական բնակչութիւնից այդ քաղաքներում էին զետեղված նաև գերեւորութեամբ և հարկադրանքի ազդեցութեան տակ նվաճված երկրներից բերված և կամ աշխատանք որոնելու կամ առևտրի նպատակով այդ քաղաքներում հաստատված բնակիչներ՝ հրեա, հույն, ասորի, պարսիկ և այլն: Արտաշատում հավանաբար աչքի ընկնող թիվ էին կազմում արհեստավորները, որոնք բացի առևտրականների համար աշխատելուց, կատարում էին արքունական պատվերներ: Իբրև միջազգային տարանցիկ առևտրի ճանապարհի գլխավոր հանգույց և վաճառատեղի, Արտաշատում բավական թիվով առևտրականներ կային: Արտաշատի բնակչութեան մի մասը, ինչպես և նրա արվարձաններում զետեղված ժողովուրդը, կապված էր հողամշակութեան հետ: Ստրկատիրական հարաբերութիւնների այդ շրջանում թագավորին, ավագանուն և տաճարների պատկանող կալվածներում ու պետական շինարարութեան մեջ կիրառվում էր ստրկական աշխատանքը:

4. ԱՐՏԱՇԱՏԵ ԱՐՏԱՇԻՍՅԱՆ ՀԱՐՍՏՈՒԹՅԱՆ ՎԵՐՋԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ
(Մ. Թ. Ա.) ԵՎ ԱՌԱՋԻՆ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍՈՒՄ

Առաջին դարի սկզբում (մ. թ. ա.) Հռոմը, իր տիրապետութիւնները Մերձավոր Արևելքում ընդարձակելու համար, արգեն որոշ բազա էր ստեղծել Փ. Ասիայում և Միջերկրականի Արևելյան ու հարավային առափնյա երկրներում: Օգուտ քաղելով այն հանգամանքից, որ Պարթևական պետութիւնը ներքին գահափախական պայքարի և արևելյան կողմից հարևան պետութիւնների անգադար հարձակումների հետևանքով բավական թուլացել էր և այդ միջոցին չէր կարող լուրջ հակառակորդ հանդիսանալ Մերձավոր Արևելքում իր ծրագրերի իրագործման համար, Հռոմը վերահիշյալ երկրների մասնը իշխանութիւններից

ոմանց վաստակահան կախման էր ենթարկել, մի քանի այլ երկրներ հոռմեական պրովինցիաներ էր դարձրել, իսկ ոմանց էլ շահագործում էր «գաշնակից» անվան տակ: Արևելյան երկրներն էր հետ միջազգային առևտրի գլխավոր ճանապարհը ենթակա էր Հոռմի հսկողութեան:

Դրությունն սկսվում է փոխվել, երբ Պոնտական թագավորության գլուխ է անցնում Միհրդատ Զ. Եվպատորը և Հայաստանում թագավորում է Արտաշիսյան տոհմից Տիգրան Բ-ն: Աչքի առաջ ունենալով, որ Հոռմի արդեն ոտք է գրել իրենց պետութունների սահմանամերձ երկրները և որ նրա հարևանությունը մեծապես կարող է լինել իրենց երկրների անտեսական և քաղաքական շահերի տեսակետից, որ հետագայում նա ավելի հեռուն պիտի տարածի իր կողմից իշխանությունը, այդ երկու միտպետները գաշնակցում են միմյանց հետ՝ Փ. Ասիայից և Միջերկրականի արևելյան շրջանի երկրներից հեռու վանելու Հոռմի տիրապետությունը և իրենց իշխանությունը տարածելու հիշյալ վայրերի վրա:

80—70-ական թվականներին (մ. թ. ա.) իշխանական ավտորիտետը միմյանց ձեռքից խլելու, ինչպես և ստրուկների մի շարք ապստամբությունների հետևանքով, հոռմեական հանրապետությունն ի վիճակի չէր ուժեղ կերպով պաշտպանելու իր շահերն Արևելքում. ուստի և Միհրդատ Զ-ն և Տիգրան Բ-ն մի շարք զբաղումներ են կատարում Փ. Ասիայում և Ասորիքի կողմերում: Վերջ տալով ներքին խռովություններին՝ Հոռմը 70-ական թվականների վերջին կարողանում է գրավել Պոնտական թագավորությունը և 69 թ. (մ. թ. ա.) վերցնել Հայաստանի նոր կառուցված Տիգրանակերտ մայրաքաղաքը:

Հայաստանի մայրաքաղաքի գրավումը Լուկուլլոսի պարծենկոտ զեկուցումների հետևանքով թեև մեծ ցնծություն պատճառեց Հոռմի սենատին, սակայն Հայաստանը դեռ ընկճված և նրա կենդանի ուժը դեռ վերջնականապես քայքայված չէր: Տիգրան Բ-ն և Միհրդատ Եվպատորը վճռում են շարունակել պայքարը Հոռմի դեմ, խույս տալ վճռական ճակատամարտից և պարտիզանական կռիվների միջոցով մթերքների մատակարարման ճանապարհները փակելով կամ դժվարացնելով՝ հոռմեական լեգեոններին ուժաթափ անել:

Լուկուլլոսը վերջնականապես համոզվելով, որ Տիգրան Բ-ն իր հետ խաղաղության բանակցություն վարելու ցանկություն

չունի, որոշեց արշավել դեպի Հայաստանի կենտրոնական մասը, գրավել նաև Արտաշատ մայրաքաղաքը և իր պայմանները թելադրել հայոց թագավորին: Ինչպես կարելի է դատել պատերազմական գործողությունների ընթացքից, երկու կողմերն էլ նախատեսում էին իրենց ձեռնարկած գործի դժվարությունները, որի համար էլ Տիգրան Բ-ն և Միհրդատ Եվպատորը նախօրոք բանակցություն են վարում Պարթևաց Հրահատ Գ-ի (Ֆրատի) հետ՝ նրան իրենց կողմը թեքելու և միահամուռ ուժերով Հռոմի դեմ կռվելու: Նույն քաղաքականությունն է վարում նաև Լուկուլլոսը, Հրահատ Գ-ի մոտ ուղարկելով իր տեղակալ Սեքստիլոսին: Սակայն Պարթևաց թագավորը որոշում է չեզոքություն պահպանել և չխառնվել իր պետության սահմանակից երկրներում տեղի ունեցող ճակատագրական բախումներին:

Լուկուլլոսը 69—68 թթ. (մ. թ. ա.) ձմեռը Կորզվաց երկրում հանդիստ վայելելուց հետո, 68 թ. դարնան վերջին, առաջ շարժվեց դեպի Հայաստանի խորքը, նպատակ ունենալով գրավել Արտաշատ մայրաքաղաքը: Նա անցավ Աղձնիքով դեպի Մուշի դաշտը, Մանազկերտ և ձգտում էր Արածանիի ափով հասնել Բագրևանդ, որտեղից հետո պիտի մտներ Արարատյան դաշտավայրը. հոռեական զորավարի սազմական գործողությունների այդ ծրագիրը, ինչպես և նրա վերջնական նպատակը շատ պարզ հայտնի էր Տիգրան Բ-ին և Միհրդատ Եվպատորին: Այդ պատճառով, վերջիններս հենվելով գլխավորապես հայոց հեծելազորի վրա և խուլյա տալով ընդհանուր ճակատամարտից, ամենուրեք, ուր որ հնարավոր էր, հարձակվում էին հոռեական լեգեոնների վրա և մեծամեծ հարվածներ հասցնում նրանց, դժվարացնում էին հոռեական զորքին կենսամթերք հայթայթելու գործը և դանդաղեցնում նրա արշավանքի ընթացքը: Թշնամու զորաբանակը անապին զրկանքների է ենթարկվում և մեծ թվով վիրավորներ է ունենում. նա այլևս առաջ շարժվելու հնարավորություն չի ունենում:

Տիգրանակերտի հաղթանակով հզիսացած Լուկուլլոսը չկարողացավ հասնել իր վերջնական նպատակին: Արտաշատի գրավումը երազ դարձավ նրա համար: Նա ստիպված եղավ նահանջել և կարճ ժամանակամիջոցում կորցնել այն բոլորը, ինչ որ իր զինվորական փառքն էր համարում: Տիգրան Բ-ն և Միհրդատ Պոնտացին հայկական զորքերով դուրս վճռեցին Հայաստանից և Պոնտոսից հոռեական լեգեոնները: Արտաշատ մայրա-

քաղաքը այս անգամ գերծ մնաց հոռոմայեցիների կողոպուտից և ափերածուծյունից: Տիգրանակերտի լքվելուց հետո Հայաստանի միակ մայրաքաղաքը շարունակեց մնալ Արտաշատը, ուր Տիգրան Բ-ն փոխադրում է իր արքունիքը:

Այնուհետև Արտաշատի մասին հիշում են հոռոմայեցի պատմագիր Դիոն Կասսիուսը և Պլուտարքոսը, ինչպես նաև հույն աշխարհագրագետ Սարաբոնը՝ Պոմպեոսի գեպի Հայաստան կատարած արշավանքի կապակցությամբ¹: Մինչդեռ Եվպատորի վերջնական պարտությունից հետո, երբ Մերձավոր Արևելքում հոռոմայեցիները հաղթանակող են հանդիսանում, Պարթևների թագավոր Հրահատ Գ-ն օգտվելով Պոմպեոսի կողմից նախօրոք եղած առաջարկությունից, սկսում է իր սանձադուծյունները Տիգրան Բ-ի դեմ. նրա այդ գործողությունը մեծ չափով նպաստում է և իր փեսա Տիգրան Բ-ի սրդին՝ կրասեր Տիգրանը, որը ձըգտելով տապալել իր հորը և Հայաստանի գահը բարձրանալ, ապաստան էր գտել Պարթևաց արքունիքում և ջանք էր թափում Պարթևների ու մի խումբ զավաճան հայ իշխանների աջակցությամբ իր նպատակին հասնել:

Հրահատն արշավում է գեպի Հայաստան և հասնում Արտաշատ մայրաքաղաքի մերձակա շրջանը: Տիգրան Բ-ի համար անսպասելի էր Պարթևաց թագավորի այդ քայլը և նա հանկարծակիի եկած հեռանում է Արտաշատից գեպի իր երկրի լեռնային մասերը: Քաղաքի բնակչությունն ուժեղ կերպով կոպում է Պարթևաց զորքի դեմ և անձնատուր չի լինում: Պաշարման երկար տեկելու պատճառով և հույս չունենալով, թե Արտաշատը կարող է գրավել և Հայաստանի գահը հանձնել իր փեսային, Հրահատը զորքի մի մասը թողնում է Արտաշատի պարիսպների տակ, քաղաքը պաշարման վիճակի մեջ պահելու համար, իսկ ինքը վերադառնում է Պարսկաստան: Օգուտ քաղելով այդ հանգամանքից՝ Տիգրան Բ-ն հարձակվում է Արտաշատը պաշարող թշնամու վրա, հաղթում նրան և Հայաստանի սահմանից դուրս քշում²: Արտաշատն այս անգամ ևս ազատվում է ափերածուծյունից և կողոպուտից:

Պոմպեոսը 66 թ. (մ. թ. ա.) Սատաղի կողմից արշավում է

¹ Ակադ. Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն, Տիգրան Բ..., էջ 186—187:

² Дион Кассий, рус. пер. В. В. Латышева, Изв. др. писателей о Скифии и Кавказе. Вест. др. истории, Москва, 1948, Кн. № 2, стр. 268—269.

գեպի Հայաստանի խորքը, նա անցնում է Ալաշկերտ, ապա կըտրելով Հայկական Պարը՝ իջնում է Արարատյան դաշտավայրը և Երասխի աջ ափի ուղղութեամբ առաջ շարժվելով՝ Վարդանակերտի մոտ անցնում է Երասխի ձախ ափը և մոտենում Արտաշատ մայրաքաղաքին: Տիգրան Բ-ն քաղաքից դուրս դիմավորում է Պոմպեոսին, կնքվում է հաշտութուն, որով Տիգրանը զրկվում է Հայաստանից դուրս իր գրաված երկրներից. միևնույն ժամանակ Ծոփքը զտավում է Հայաստանից և Տիգրան Բ-ի տիրապետութեանից¹:

Արտաշատը Տիգրան Բ-ի թագավորութեան համարյա ամբողջ և Արտավազդ Բ-ի իշխանութեան սկզբնական շրջանում տնտեսական և քաղաքական տեսակետից առանձին ցնցումների էր ենթարկվում: Կարելի է մինչև իսկ ենթադրել, թե քանի որ այդ ժամանակաշրջանում հոռոմայեցիները ձգտում էին մշտական սպառնալիքի տակ պահել Ասորիքն ու Հյուսիսային Միջագետքը և միջազգային տարանցիկ առևտրի հարավային գծի գլխավոր հանգույց հանդիսացող Մծրինը, հետևապես և միջազգային նույն տարանցիկ առևտրի հյուսիսային դիժը, որն անցնում էր Արտաշատի վրայով, ավելի ևս նպաստավոր պայմաններ պետք է ներկայացնեին Արտաշատի առևտրի և տնտեսական զարգացման համար:

Այնուհետև Արտաշատը հիշվում է օտար հեղինակների կողմից, Արտավազդ Բ-ի թագավորութեան ժամանակ, Հոռոմի եռապետ Կրասոսի դեպի Միջագետք կատարած արշավանքի կապակցությամբ: 53 թ. (մ. թ. ա.) Պարթևների զորավար Սուրենը Հյուսիսային Միջագետքում ստակալի պարտութեան է մատնում Կրասոսին, հոռոմեական զորքի մեծ մասը ջարդվում և գերութեան է մատնվում, սպանվում է Կրասոսը. նրա դուռը կտրում և ուղարկում են Պարթևների Որոտ (Օրոգես) թագավորին, որն այդ միջոցին գտնվում էր Արտաշատ մայրաքաղաքում և ներկա էր իր որդի Բակուրի հայոց Արտավազդ Բ. թագավորի քրոջ հետ ամուսնական հանդեսին: Սուրենին Կրասոսի դեմ ուղարկելով Որոտն ինքն էլ առանձին զորամասով Հայաստան էր մտել խանգարելու Արտավազդին, որ նա խոստացած օժանդակությունը ցույց տար Կրասոսին: Հետագա դեպքերը ցույց են տալիս, որ Որոտի նպատակը չէր զենքի ուժով ստիպել Արտավազդին, որ

¹ Ակադ. Հ. Մ ա ն ն դ յ ա ն, Տիգրան Բ. և Հոռոմը, էջ 188:

վերջինս հրաժարվի Հոսմի գաշնակից լինելուց, այլ ավելի շուտ բարեկամական միջոցներով Հայաստանի և Պարթևական պետությունների միջև սերտ կապ հաստատել: Խնամիական կապերի միջոցով նրան հաջողվում է իր նպատակին հասնել: Պլուտարքոսի վկայությունով, հարսանիքի հանդեսի առիթով Արտաշատում տեղի է ունենում նաև ներկայացում, ուր հույն գերասանները խաղում էին եվրիպիզեսի «Բաքոսյաններ» ողբերգությունը: Պարզ է, եթե Արտաշատում հույն գերասանների խումբ էր պահվում, որը հունարեն լեզվով ներկայացում էր տայիս և մյուս կողմից, Տիգրան Բ-ի սրբի Արտավազը գրում էր հունարեն լեզվով ողբերգություններ, ճառեր և այլն. ուրեմն այդ շրջանում հայոց արքունիքը և առհասարակ Հայաստանի տիրապետող խավը կրթված էր հելլենիստական սոցով: Տեղում զորդանում էր Հայաստանի սեփական հելլենիստական կուլտուրան: Արտաշատի բնակչությունը այդ կուլտուրայի կերտման մեջ խոշոր դեր էր կատարում: Միջազգային տարանցիկ առևտրի հյուսիսային գծի գլխավոր հանգույցներից մեկը հանդիսանալով, անկասկած, կարելի է ենթադրել, որ այդտեղ էին գալիս հունա-հռոմեական աշխարհից, Ասորիքից և այլ երկրներից վաճառականներ տնտեսական գործարքներ կատարելու: Կարծիք կա, որ մեր թվականություն 3-րդ դարում Արտաշատում էր բնակվում ասորի հեղինակ Յամբլիխը, որը գրել է «Babyloniaka» վեպը¹:

Մ. Խորենացու վկայությամբ Արտաշեսը՝ «Հայոց երկիրը բազմամարդ գարձրեց շատ ցեղեր ներս բերելով և բնակեցնելով լեռներում, հովիտներում, դաշտավայրերում»² Փ. Բուզանդը հիշատակում է, թե ինչ մեծ քանակությամբ հայ և հրեա բնակչություն է գաղթեցնում պարսից Շապուհ Բ-ն Արտաշատից և Հայաստանի մի քանի այլ քաղաքներից ու տանում Պարսկաստան³. Թեև նա չափազանցում է Շապուհ Բ-ի կողմից գերի տարված բնակչության թիվը, բայց և այնպես այդ ժամանակ թե Արտաշատում և թե Հայաստանի մի քանի այլ քաղաքներում բնակչությունը բավական մեծ թիվ էր կազմում:

¹ Проф. Я. Манандян, О торговле..., էջ 40:

² Մ. Խորենացի, 1913, Տիգրիս, էջ 186:

Հ. Բազմամարդացոյց գաշխարհս հայոց, եկամուտս բազումս անելով ազգս, և բնակեցուցանելով ի լեռինս և ի հովիտս և ի դաշտս»:

³ Փ. Բուզանդ, Պատմութիւն, Թիֆլիս, 1912, էջ 260:

Արտաշատն քաղաքի բնակչութիւնը տնտեսական բարձր
 քիւրեղք էր ապրում. բացի առևտրից բնակչութեան մի մասը
 չլրագլում էր աշգեղործութեամբ, մանավանդ խաղողի և ծառա-
 պտղի մշակութեամբ և հացահատիկի ցանքով: Բավական զար-
 քացած էր արհեստագործութիւնը, գլխավորապէս կավագոր-
 ծութիւնը, քարակտրութիւնը, ջուլհակութիւնը և կաշեգործու-
 թիւնը: Այդ արհեստների զարգացման մեջ գլխավոր դեր էին
 խաղում ստրուկ արհեստավորները:

Եթէ մի հետազարձ հայացք դրենք Արտաշատ քաղաքի վի-
 ճակի վրա մտքով Արտաշիսյան հարստութեան իշխանութեան
 և մեր թվականութեան առաջին դարի առաջի քառորդի ժամա-
 նակաշրջանում, կտեսնենք, որ Հայաստանի մայրաքաղաքն աս-
 տիճանաբար բնագործակիւում, բարգաւաճում և տնտեսապէս հա-
 բըստանում է, և որ նա չի դադարում միջագային առևտրի
 հյուսիսային ուղղութեան վրա գլխավոր հանգույցի և ապրան-
 քափոխանակութեան կենտրոն լինելուց: Միևնույն ժամանակ կա-
 բեր է շեշտել նաև այն հանգամանքը, որ Արտաշատն իր գոյու-
 թեան մաս երկու հարյուր տարվա ընթացքում, թշնամի պետու-
 թեանները կողմից գրավման և կողոպուտի չի ենթարկւում: Այդ
 մասին թէ հայ և թէ օտար ազգայուները ոչինչ չեն հիշատակում:
 Նրա առևտրի զարգացմանը մեծ նպաստում է նաև դրա-
 մի գործածութիւնը, որի ապացույցը կարելի է համարել Հա-
 յաստանի արքունի դանձարաններում, մասնավորապէս Արտա-
 շատում պահվող թէ տեղական և թէ օտար երկրների մեծաքա-
 նակ գրամբ: Հետևապէս և այդ շրջանը կարելի է համարել Ար-
 տաշատի, իբրև Հայաստանի մայրաքաղաքի տնտեսական վերել-
 քի ամենաբարձր շրջանը:

Ե. ԱՐՏԱՇԱՏԸ ԱՐՇԱԿՈՒՅԱՆ ՀԱՐՍՏՈՒԹՅԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՋԱՆՈՒՄ

Հայաստանի քաղաքական վիճակը մեր թվականութեան
 սկզբներին, մոտ 17—18 տարի, շարունակում էր նույնը մնալ,
 ինչ որ Արտաշիսյան հարստութեան վերջին ժամանակը: Հոռմի
 նպատակից դուրս էր խաղաղութիւնը վերականգնել այդ երկ-
 րում երկարատե ժամանակով, իսկ հայ ժողովուրդը չէր կարող
 համակերպվել Հոռմի կողմից նշանակված թագավորների կողոպ-
 տիչ իշխանութեան և հաճախակի ապստամբութեան էր դիմում
 և իր երկրի սահմաններից դուրս քշում Հոռմի կողմից նշանակ-
 ված թագավորներին և կամ սպանում նրանց: Արևելքի, ինչպէս

և Հայաստանի գործերը կարգավորելու համար Տրեբրիոս կայսր-
 իր սրգեզիբ Գերմանիկոս զորավարին այնպեղ է ուղարկում. վեր-
 ջինս Հայաստանի թագավոր է նշանակում Պոնտոսի թագավորի
 որդի Ջենոնին, սրի թագադրության հանդեսը կատարվում է
 Արտաշատում 18 թ.։ Նա վերակոչվում է Արտաշես (Գ.)։ Պաշտ-
 պանելով Հայաստանի շահերը և այդ ուղղությամբ գործե-
 լով՝ նա կարողանում է գրավել հայ իշխանական դասը և 15 տա-
 րի խաղաղ կերպով կառավարել երկիրը։ Պարթևները դեռ
 (մ.թ.ա.) 30-ական թվականներից սկսած շատ անգամ փոփոխա-
 կի հաջողությամբ կռիվներ են մղել հռոմայեցիների դեմ, սա-
 կայն ներքին գահակալական կռիվները, ինչպես և հռոմայեցիների
 դավադրական գործերակերպը բուն պարթևական երկրում թույլ
 չէին տալիս նրանց իրենց պետության սահմանակից երկրները
 քաղաքականությանն անհրաժեշտ չափով միջամուխ լինելու։
 Այդ գրությունը փոխվում է, երբ պարթևական գահն է բարձ-
 անում Վոնոն Բ-ի սրգի Վաղարշը (Վուլգեսը, 51—71 թ.թ.)։
 Գահակալական կռիվներին վերջ տալու համար, նա իր միջնակ
 եզրայր Բակուրին է տալիս Ատրպատականի թագավորությունը,
 իսկ կրտսեր եղբայր Տրգատին է վերապահում Հայաստանի գա-
 հը։ 52 թ. պարթևական զորքերը մտան Հայաստան։ Հռոմա-
 միզդը, որ այդ ժամանակ թագավորում էր Հայաստանում
 Միհրգատից հետո, փախուստ տվեց դեպի Իբերիա։ Արտաշատի
 և Տիգրանակերտի բնակչութունն ինքնակամ բաց արեց քաղա-
 քի դռները պարթևների առաջ։ Հայ ժողովուրդը, մանավանդ
 նրա բարձր խավը, որ բավական ժամանակ ենթակա էր հռոմեա-
 կան կառավարության կողոպտիչ քաղաքականության, դերադա-
 սում էր պարթևների հետ դաշնակցել ընդդեմ Հռոմի։

Սակայն կլիմայական աննպաստ պայմանների և զորքի
 մեջ տարածված համաճարակ հիվանդութունների պատճառով
 Վաղարշն ստիպված էր այս անգամ իր զորքերը հանել Հայաս-
 տանից։ Հռոմամիզդը վերադարձավ Արտաշատ. պարթևները
 ցույց տրված օժանդակության համար նա խիստ հալածանք սկը-
 սեց քաղաքի բնակչության դեմ։ Արտաշատում ապստամբու-
 թյուն սկսվեց Հռոմամիզդի դեմ, որը փախուստով միայն կա-
 ռողացավ փրկվել։ Տրգատը նորից Հայաստան մտավ և իբրև
 թագավոր սկսեց կառավարել երկիրը։ Փոփոխական էր Հռոմի քա-
 ղաքականությունը Արևելքի և հատկապես Հայաստանի նկատ-
 մամբ նաև ներոնի կայսրության ժամանակ (54—68 թ.թ.)։

Ներսնի կայսրության ժամանակ Հոռմի արևելյան քաղաքականության խնդիրը նրա հարաբերությունն էր Պարթևներին հետ: Այդ երկու պետությունների պայքարը միմյանց դեմ կենսարժեքն ապահովելու համար ամենակարևորը ոչ թե Հայաստանի գրավումն էր, այլ թույլ չտալ, որ այն գրավվի հակառակորդի կողմից: Դրանի տիրապետությունը Հայաստանում մշտական սպառնալիքի տակ էր պահում սարթևներին՝ խստանվելու նրանց գործերին, իսկ եթե սարթևները գրավեին Հայաստանը, դա նշանակում էր, Հոռմի կայսրության արևելյան սահմանները մերկացնել հակառակորդի առաջ, որովհետև Հոռմը բացի Ասորիքից, ուրիշ որևէ տեղ (Արևելքում) զորք չուներ պաշտպանվելու: Այսպիսով երկու պետությունների համար Հայաստանի խնդիրը կարևոր կենսական հարց էր, — իրավացի կերպով նկատում է Կուրբյավյցևը¹:

Երբ Կուրբյավյցևն Ալաշկերտի վրայով անցավ դեպի Արարատյան պաշտպանությունը և Երասխ գետի աջ ափի ուղղությամբ առաջ գնալով՝ մտախոհավ Արտաշատ մայրաքաղաքին, Տակիրտոսի վկայությամբ՝ նա իր լեզբոսները չի տանում ամենամոտ ճանապարհով, Արտաշատը Երասխ գետի աջ ափի հետ կապող կամուրջով (Տափերական կամուրջով), երկյուղ կրելով հակառակորդի հարձակումից, այլ ավելի առաջ շարժվելով՝ անցնում է Երասխը նրա մի ծանծաղուտով² և նույն գետի ձախ ափով վեր բարձրանալով՝ անմիջապես չի պաշարում քաղաքը, այլ սկսում է հետապնդել Տրդատին:

Տակիրտոսի նկարագրությունից պարզվում է, որ թշնամի երկու բանակները կանգ են առնում Արտաշատի հյուսիս-արևմուտքյան կողմում. հայկական զորամասերը գրավում են Գառնի ամրոցի ստորոտների լեռնալանջերը, իսկ հռոմայեցիների ձախ թևը տարածվում է երկարությունում նրանցից ներքև գտնված լեռների ստորոտներով, որպեսզի հայերի հարձակման դեպքում հռոմայեցիները կարողանան թև ճակատից և թև թևից միաժամանակ հարված հասցնել նրանց: Այնուհետև Տակիրտոսը

¹ О. В. Кудрявцев, Римская политика в Армении и Парфии. Вест. др. истории, Москва, 1948, № 3, стр. 57.

² Ակադ. Հ. Մանանդյանի ենթադրությամբ Վարդանակերտ ավանի մոտի ծանծաղուտով (Հայաստանի գլխ. ճանապարհներն ըստ Պաղինգերյան բարեկերչ, Երևան, 1936, էջ 42-43):

շարունակում է. «Իսկ Տիրիթը (հոտմայեցի պատմագրին Տըր-
գատը հայտնի էր Տիրիթ անունով) հեռվից նեղում էր մեզ և
մի նեղորնկեց անզամ առաջ չէր շարժվում. երբեմն սպասնալի-
քով և երբեմն կեղծելով, որ իբր թե երկյուղ է կրում, հույս ու-
նեք խախտելու զորքի կազմաթյունը և ամեն մի գնդի վրա
(առանձին) հարձակվելու. սակայն խիզախությամբ ոչինչ չկա-
րողացավ ձեռք բերել, բայց միայն հեծելազորի տասնապետնե-
րից հանդուգն մեկը առաջ արշավելով՝ նեղանար ընկավ և նրա
մահը խրատ եղավ (մյուսներին) ամուր կերպով պահպանելու
ամեն մեկն իր կողմը, մինչև որ երեկոն վրա հասնելով՝ թշնա-
մին հեռացավ. Կորբուլունը նույն վայրում բանակ դնելով նպա-
տակ ուներ ծանրոցքը թողնելով բանակում, գիշերը լեզեոնները
տանել Արտաշատի վրա և սրաշարել քաղաքը, բայց կասկածում
էր, թե զուցե Տիրիթն ամբացած լինի քաղաքում. սակայն լըր-
տեսների միջոցով իրազեկ եղավ, որ նա հեռացել է այդտեղից...
սպասում էր առավոտի ծագելուն. և (նա) բանակից զատելով
գնդեր, առաջ մղեց՝ հրամայելով նրանց քաղաքի պարիսպները
զրջապատել և նախաձեռնությունն իրենց վրա վերցնելով՝ հեռ-
վից սկսել կռիվը: Սակայն քաղաքացիները կամավոր կերպով
բաց արին դռները և ամբողջովին անձնատուր եղան հոտմայե-
ցիներին: Բնակչությունը կենդանի մնաց, իսկ քաղաքը հրդեհի
մատնվելով՝ հիմնահատակ կործանվեց, որովհետև հնարավոր չէր
առանց ուժեղ պահապան գուևդ թողնելու քաղաքը պաշտ-
պանել նրա պարիսպների ընդարձակությունը պատճառով, իսկ
մենք բավական զորք չունեինք թե՛ քաղաքը պաշտպանելու
և թե՛ պատերազմ մղելու համար: Թողնելով այն (քաղաքը) կան-
գուևն և առանց պաշտպանելու, նշանակում էր կորստյան մատ-
նել քաղաքը գրավելու վառքը և օգուտը¹. Տակիտոսի այս վկա-
յությունից երևում է, որ Տըրգատը հույս ուներ ներս գրավել
հոտմայեցիներին գեպի Գառնիի լեռնալանջերը, բաժան-բաժան
տնել նրանց գնդերը և ամեն մեկի վրա առանձին հարձակում
գործել:

58—59 թթ. ձմեռը Կորբուլունն իր բանակով մնում է
Արտաշատում: Հոտմայեցի զորավարի և քաղաքագետի համար
պարզ էր, որ Հայաստանի մայրաքաղաքի, ինչպես և նրա մի

¹ Տակիտոսի վերոհիշյալ հատվածը բերում ենք էդ. Հյուբմիդյանի
թարգմանությունից (Ղ. վ. Ալիշան, Այբբարատ, էջ 397—398):

քանի բերդերի գրավումը թեև ցնծութուն պիտի պատճառե Հոսմի կառավարութանը և փառավորի իր անունը, բայց դա գեո-
ւա չէր նշանակում, թե Հայաստանի բնակչութունը բոլորովին
ընկճված է, հետևապես և հոսմեական տիրապետութունն այդ
երկրում հաստատուն կարելի է համարել: Տրդատը հայկական
գործամասով խույս էր տվել վճռական ճակատամարտից և գտնը-
վում էր Հայաստանի սահմանակից երկրում: Պարթևաց Վաղարշ
թագավորը, որը նույնչափ, գուցե և ավելի էր շահագրգռված
Հայաստանի քաղաքական վիճակով, բոլորովին չէր լքել այդ եր-
կիրը: Կորբուլտնը չէր կարող երկար ժամանակ մնալ Արտաշա-
տում, քանի որ Հայաստանում գործող հոսմեական լեզեոնները
վերցված էին Ասորիքից և Փ. Ասիայի բերդերից և պետք էր
գրանց վերադարձնել իրենց տեղերը, քանի որ առանց գրանց
անպաշտպան կմնային Հոսմեական կայսրութան արևելյան սահ-
մանները թշնամու հարձակման դեպքում: Այդ հանգամանքներն
աչքի տաջ ունենալով՝ Կորբուլտնը վճռում էր լեզեոններով հե-
ռանալ Արևելյան Հայաստանից զեպի Ասորիքի կողմերը և այդ
ճանապարհին գրավել Տիգրանակերտը, որը հաճախ հենակետ էր
ծառայում Հոսմի և Պարթևաց պետութան միջև տեղի ունեցած
պատերազմներում:

Արտաշատը թողնելուց առաջ, ինչպես տեսանք, Կորբուլտնը
Հոսմի զորավորներին հատուկ մի քստմնելի գործ էլ է կատա-
րում. նա հրդեհի է մատնում Հայաստանի մայրաքաղաքը: Հոսմի
զենքի հաջողութունները գովերգող և Կորբուլտնին ռազմական
գործի հանճարեղ զորավար համարող Տակիտոսը տմարդի
այդ քայլն արդարացնում է նրանով, որ Արտաշատը շատ ըն-
դարձակ տեղ էր բնում և որ քաղաքի պարիսպները հեռուներն
էին տարածված, հետևապես այդ քաղաքը պաշտպանեու համար
հարկավոր էր մեծաքանակ զորք թողնել, իսկ Կորբուլտնը չէր
կարող իր զորաբանակից զգալի չափով զորամաս հատկացնել
Արտաշատի պաշտպանութան, քանի որ նա թշնամի երկրի մի-
ջով պիտի անցներ մինչև Տիգրանակերտ և նոր կռիվներ պիտի
մղեր, իսկ փոքր զորամաս թողնել Արտաշատում, նույնպես նշա-
նակութուն չունեք, սրովհետև թշնամին (Տրդատը) անմիջապես
ետ կզրավեր այն: Մյուս կողմից թողնել Արտաշատը կանգուն
և առանց պահապան զորքի, դա Կորբուլտնի համար նշանակում
էր զրկվել և՛ փառքից, և՛ քաղաքը վերցնելու օգտից: Չբավա-
կանանալով այդ պատճառարանությամբ, Տակիտոսը մինչև ան-

զամ Արտաշատի հրդեհումն աստվածներին կամ երկնքին հաճելի մի գործ է համարում, երևակայություններ պատկերացնելով քաղաքը հրդեհի մասնելու տեսարանը, ինչպես ուրիշներից լսել է նա. «Պատմում են, թե երկինքը նշաններով իր հաճությունն է ցույց տալիս, որովհետև լույսն արեգակի պես փայլելով՝ քաղաքի չորս կողմերն է բռնում և տանիքներից ավելի վեր բարձրանում, իսկ քաղաքը մինչև պարիսպները ծածկվում է ամպով և մտալլ ամպրոպներից շանթեր են գուրս թռչում, կարծես թե (ցույց տալու.—Ա. Շ.), որ աստվածների բարկությունից քաղաքը կորստյան է մատնվել»¹:

Թե որքան մեծ էր Արտաշատի Կորբուլոնի կողմից գրավման ուրախությունը Հուսումն, երևում է նրանից, որ այդ դեպքի առթիվ ներոնն արժանանում է իմպերատոր տիտղոսին: Ծերակույտը որոշում է նրա անդրինները կանգնեցնել, աստվածներին գոհություն մատուցանել և հաղթական կամարներ պատրաստել, տարեկան տոների թվում սահմանել տոնելու հաղթանակի օրը (Արտաշատը գրավելու օրը), ինչպես նաև հաղթանակի լուրի Հուսմ հասնելու օրը: Շողոքորթ մարդկանցից մեկին էլ իր կողմից ավելացնում է, թե տարվա բոլոր օրերը բավական չէին արժանավորապես գոհություն մատուցանելու բախտի բարգևած այդ բարերարության համար²: Անկասկած է, որ քաղաքը հրդեհի մասնելուց առաջ ենթարկվել է կողոպուտի, ինչպես հատուկ էր այդ հոտմայեցի զինվորներին և նրանց ընչաքաղց հրամանատարներին, և ինչպես խոստացել էր նրանց Կորբուլոնը դեպի Արտաշատ ձեռնարկած արշավանքի ժամանակ:

Արտաշատ մայրաքաղաքն իր հիմնադրության օրից մինչև Կորբուլոնի այդ արշավանքը չէր ենթարկվել ոչ ավերածության և ոչ կողոպուտի. Միջազգային տարանցիկ առևտրի, ինչպես նաև տեղական արդյունաբերության և արհեստների զարգացման հետևանքով այդ քաղաքի ընակչությունը որոշ աստիճանի բարգաւաճման էր հասել, քաղաքն ընդարձակվել էր և կենտրոնական գեր էր խաղում ամբողջ Հայաստանում: Հայ՝ ժողովուրդը ավանդություններով, զրույցներով, առասպելական երգերով ու պատմվածքներով սերտ կապերով կապված էր նրա հետ: Կորբուլոնն

¹ Ղ. Վ. Ալիշան, Այբբատ, էջ 397—398. բերում ենք Հյուսիսային թարգմանությունից (Տակիտոս, Տարեգրություն, ԺԳ. 40):

² Նույն տեղում, էջ 398:

աշխատում է խաղառ ոչնչացնել այդ հիշատակը: Սակայն հայ ժողովուրդը իր բուն ցասունն է արտահայտում Հոռմի գիշատիչ զորավարին՝ պարտիզանական կռիվներ մղելով հոռմեական լեզեններին դեմ, երբ նրանք գիմում են դեպի Տիգրանակերտ:

Այդ կործանիչ հրգեհից հետո Արտաշատը շինվում է, ըստ Գիոն Կասիոսի, Ներոնի թուլլուլությամբ, երբ Տրդատը գնացել էր Հոռմ, Ներոնից թագ ստանալու համար:

Հայտնի չէ, թե Ներոնի հետ Տրդատի սեռակցության միջոցին ի՞նչ առիթով և ձի է բարձրացրել Արտաշատ մայրաքաղաքը վերաշինելու խնդիրը. դժվար թե Հոռմն ինքն առաջադրեր այդ հարցն առանց որևէ ակնկալության: Ամենահավանական կարծիքն այն է, որ Տրդատն ինքն է այդ հարցը հարուցել և Ներոնն էլ համաձայնել է միջոցներ տալ՝ հայերին սերաշահելու նպատակով: Հոռմեա-պարթևական մրցակցության մեղ նման քայլը նպաստավոր կլինեիր հոռմայեցիներին համար՝:

Տրդատը արհեստավորներ վերցրեց Հոռմից Արտաշատի վերաշինության համար, սակայն Կորբուլոնը թույլ չտվեց այդ բոլորին Հայաստան տանել, այլ միայն նրանց, որոնց Ներոնն էր պատվիրել¹: Գիոն Կասիոսի այն դարձվածքը, թե Ներոն կայսեր կարգադրությամբ է վերաշինվել Արտաշատը, չպետք է հասկանալ այն մտքով, որ իբր թե Արտաշատի վերաշինության խնդիրը կարող է ծագած լինել Ներոնի կողմից, այլ պարզապես Ներոնը ստիպված էր համաձայնել Արտաշատը վերակառուցելու հետ: Թե Արտաշատի վերաշինությունը ցանկալի չէր Հոռմի վերնախավի համար, երևում է նրանից, որ Կորբուլոնը Ներոնի այդ մաքսով տված հրամանից հետո մինչև անգամ արգելք է հանդիսանում Տրդատին Իտալիայից վարձու արհեստավորներ տանելու: Հայաստան Արտաշատի շինության համար: 66 թ. Տրդատը ձեռնարկում է Արտաշատի վերաշինության: Փառասեր կայսրի շողոքորթ գրչակները վերականգնված Արտաշատը որոշ գրվածքներում կոչել են Ներոնիա, սակայն քաղաքը պահպանեց միայն իր հայկական անունը: Այստեղ հարց կարող է ծագել, թե ինչու Տրդատը, իբրև Պարթևական կամ Արշակունի տոհմի

¹ Գիոն Կասիոսը վկայում է, որ Ներոնը 100 միլիոն սեասերց (մոտ 8,5 միլիոն ուլերի ուկով) է աալիս Տրդատին Արտաշատը վերաշինելու: Մի այդքան էլ Տրդատն այլ նվերներ է ստանում նրանից:

² Ղ. Վ. Ինճիճյան, Հնախօսութիւն..., էջ 491:

առաջին թագավորը, մի այլ վայր չընտրեց իր համար մի նոր մայրաքաղաք շինելու և կամ այդ ժամանակ Հայաստանում գոյութուն ունեցող մի այլ քաղաքում չհաստատեց իր գահը մանավանդ որ ավելի մեծ ծախս ու ջանք պիտի գործադրեր ավերված քաղաքը վերաշինելու, քան թե նորը շինելու: Այստեղ մեր կարծիքով, ամենակարևորն այն էր, որ Արտաշատը գտնվում էր երկրի անևտրաշահ ճանապարհի վրա և ինչպես վերը նկատեցինք, հայ ժողովուրդը թանկագին հիշատակներով և սիրով էր կապված Արտաշատ մայրաքաղաքի հետ, իսկ Տրդատ Պարթևը, որը մոտ ծանոթ էր հայ ժողովրդի հակումներին, կենցաղին և առհասարակ նիստ ու կացին, չէր կարող ուշադրութուն չդարձնել հայ ժողովրդի, մանավանդ մայրաքաղաքի բնավեր և անտուն մնացած կամ թափառական բնակչության այդ սիրույն իր նախկին մայրաքաղաքի վերաբերյալ:

Քսիֆիլիսոսի վկայությամբ Տրդատն իր հետ Հռոմից Հայաստան է բերում, ինչպես ասացինք, քաղաքի շինարարության մասնագետներին — այժմվա հասկացողությամբ՝ քարտարադետներ և նույն մասնագիտության տեխնիկներ ու վարպետներ, սակայն Արտաշատը կարճ ժամանակամիջոցում վերաշինելու համար օտար երկրից բերված այդ մասնագետները բավական չէին կարող լինել նույնիսկ միայն պետական-հասարակական շենքերը կառուցելուն. այդ գործի մեծագույն մասը պետք է դեկավարներն տեղական արվեստագետները: Էլ չասենք այն մասին, որ քաղաքի շենքերի անհամեմատ մեծ մասը կազմող մասնավոր տները ամբողջությամբ կառուցվել են տեղացիների միջոցով: Թեև որոշ հայտնի չէ, թե երբ վերջացավ Արտաշատի վերաշինությունը, բայց զանազան ակնարկներից կարելի է եզրակացնել, որ այդ գործը կարճ ժամանակում և արագությամբ կատարվեց: Արտաշատ մայրաքաղաքը, ինչպես այն ժամանակ աչքի ընկնող քաղաքները, պիտի ունենար մեծ և ընդարձակ հրապարակ, կանոնավոր և համեմատաբար ավելի լայն փողոցներ, թատրոնի և կրկեսի համար առանձին շինություններ: Հատուկ ծրագրով պիտի կառուցված լինեին նաև արքունի բնակարանները, ինչպես և իշխանական դասի պալատները և հեթանոսական որոշ տաճարներ:

Տրդատ Ա-ի թագավորությունից սկսած (65 թ. մինչև Սոյեմի թագավորությունը՝ 162 թ.) Հայաստանը պահպանում էր իր անկախությունը: Տրայանոս կայսրը 115—117 թթ. փորձում է վերջ դնել Հայաստանի անկախությանը, պրա

վում է Արտաշատը, բայց հաջողութունը կարճատև է լինում: Չ-րդ դարում երկրի անկախութունը վերականգնվում է, թագավոր է դառնում Վաղարշակ Ա-ն: Հայաստանի անկախությանը վտանգ էր սպառնում Հոռմի կողմից: Այդ պատճառով, հայ Արշակունիները մանավանդ, որոնք պարթևական ծագում ունեին, հակված էին ավելի դեպի Իրանի Պարթևական հարստությունը. արտաքուստ գեո պահպանվում էր Պարթևներին և Հոռմի միջև Հայաստանի թագավորական դահի ժառանգներին հաստատելու վերաբերյալ պայմանը, թեև երբեմն խախտվում էր այն մեկ կամ մյուս կողմից, որը և տեղի էր տալիս ընդհարումների, սակայն Հայաստանն ավերի և պատերազմների ենթակա չէր վերոհիշյալ ժամանակաշրջանում: Այնուամենայնիվ մատենագրական տեղեկությունները պակասում են այդ շրջանում Արտաշատ քաղաքի բնակչության տնտեսական ու կուլտուրական վիճակի մասին. Կարելի է միայն ենթադրել, որ Հայաստանը մեծ ցնցումների ենթակա չէր Արտաշատի վերաշինվելուց հետո մոտ մեկ դար, հետևապես պիտի տնտեսական վերելք սպրեր:

Հոռմի կայսրության կողմից Հայաստանի թագավոր է հաստատվում Սոյեմ անունով մեկը 162 թվականին, առանց Պարթևաց թագավորի համաձայնության: Հոռմի այդ կարգադրությունն սպօրինի է համարում Վաղարշ Գ-ն, որը պարթևական գործով մանուկ է Հայաստան, ջարդում հոռմեական լեզոնները և Սոյեմին փախուստի մատնելով՝ նրա փոխարեն Հայաստանի թագավոր է նշանակում իր եղբոր Բակուրին. սկսվում են նոր կռիվներ, որոնք տևում են մի քանի տասնյակ տարիներ: Մարկոս Ավրելիոս կայսրը երկու բանակ է ուղարկում Արևելք, մեկը Միջագետքի կողմից արշավելու Պարթևների դեմ, իսկ մյուսը՝ Ստատիոս Պրիսկոսի ղեկավարությամբ դեպի Հայաստան: Վերջինս պաշարում է Արտաշատը և զենքի ուժով գրավում: Մայրաքաղաքը ենթարկվում է ավերածության, Բակուրը գահազուրկ է լինում և Սոյեմը կրկին անգամ ստանում է Հայաստանի թագավորությունը: Ստատիոս Պրիսկոսն օգտվելով այն հանգամանքից, որ Արտաշատն ավերածության է ենթարկվել իր ձեռքով, հարմար առիթ է համարում իր լեզեոնները փոխադրել նոր վայր, դեպի հյուսիս, ուր հայոց թագավոր Վաղարշ Ա-ն մի քաղաք էր հիմնել և անվանել այն Կայնոպոլիս (Նոր քաղաք): Այս քաղաքը նա դարձնում է Հայաստանի վարչական

կենտրոնը և Հոսմի վասալ Սոյեմին այստեղ է հաստատում իրըն թագավորը, Հայաստանի Սանատրուկ թագավորը, որի մասին հուշն մատենագիր Սուրբան վկայում է, թե դործունյա, քաջ և արժանավոր մի թագավոր էր, իր մայրաքաղաքը դարձնում է հյուսիսային Միջագետքի Մծրին քաղաքը, որը Պարթևների ազդեցութեան շրջանում էր գտնվում: Սանատրուկի որդին և հաջորդը՝ Վաղարշ Բ-ն Մծրինի հոսմայեցիների կողմից դրավժելուց հետո տեղափոխվում է Կայնսպուլիս (Նոր քաղաք), որը պարբապատում և նոր շինութեաններ է կառուցում այնտեղ: Այնուհետև այդ քաղաքը Վաղարշ Բ-ի անունով կոչվում է Վաղարշապատ—մոռացութեան է արվում Կայնսպուլիս կոչումը: Վաղարշապատն այնուհետև դառնում է Հայաստանի մայրաքաղաքներից մեկը:

Այնուհետև Արտաշատի մասին հայ և օտարազգի հեղինակների հազորդած տեղեկութունները կցկուտը և պատահական բնույթ են կրում: Մեզ համար դեռևս պարզ չէ, թե թե՛ չափով էր ավերված Արտաշատը Պրիսկոսի գրավման միջոցին և թե արդյոք գրանից հետո Արտաշատի ավերված շինութեանները նորից վերականգնվե՞ն, թե ոչ: Մակայն Պրիսկոսի արշավանքից հետո դեռ մի քանի դար շարունակ Արտաշատը՝ իբրև մեծ քաղաք, շարունակում է գոյութեան ունենալ: Միջագետքային տարանցիկ առևտրի հյուսիսային դիժը, որով կարավաններն անցնում էին Իրանից դեպի արևմուտք—Սև ծովը, Տրապիզոնից դեպի հարավ-արևելք, Արարատյան դաշտավայրով, Տափարահան կամքով Նրասիսի աջ ափից անցնում էր Արտաշատի միջով: Այդ պատճառով Արտաշատը դեռևս երկար ժամանակ, մինչև 5-րդ դարի կեսերը պահպանեց իր գոյութեանը:

Ինչպես նկատել ենք աշխատութեանս Ա. և Բ. գլուխներում, Ազաթանգեղոսը բազմիցս հիշատակում է Արտաշատի, իբրև քաղաքի մասին, Գրիգոր Լուսավորչի առասպելական պատմութեան կապակցութեամբ, մեր թվականութեան 3-րդ և 4-րդ դարերում: Այդ հիշատակութեաններից ամենից կարևորը նրա հազորդած տեղեկութունն է, թե 3-րդ դարի վերջին դեռևս Արտաշատում պահպանվում էր պարսպապատ միջնաբերդը և նրա մեջ քաղաքական կամ ծանր հանցագործների բանտը²:

¹ Ա գ ա թ ա ն գ ե ղ ո ս, էջ 22, 71, 104, 114, 217 և այլն:

² Նույն տեղում, էջ 71:

Ինչպէս հայանի է, քրիստոնէութիւնը պաշտօնական կրօն է ճանաչվում Հայաստանում Տրդատ Գ. թագավորի և Հայաստանի բարձր խափի ներկայացուցիչների ջանքերով 4-րդ դարի սկզբներում: Այդ նույն ժամանակամիջոցում պետական իշխանութիւնը, միացած նոր կրօնի զեկաւարների հետ, բռնի միջոցներով է դիմում կործանելու Հայաստանի հեթանոսական տաճարները և նույն վայրերում կառուցելու քրիստոնէական եկեղեցիներ: Այս կապակցութեամբ առաջին հերթին ուշադրութեւն է դրւում Անահիտի բազիլիքը, որը կառուցված էր, ինչպէս ասացինք, Արտաշատ մայրաքաղաքում: Անահիտի պաշտամունքը հեթանոս Հայաստանում մեծ ծավալ էր ստացել: Պարզ է, որ նրա բազիլիքը Արտաշատում մեծ դեր էր խաղում. հետևապէս և քրիստոնյա թագավորի առաջին գործն է լինում կործանել այդ տաճարը, որի մասին Ագաթանգեղոսը գրում է, թե ինքը թագավորն իր քրոջը գործով գնում է Արտաշատ քաղաքը՝ ավերելու այնտեղ Անահատական աստվածների բազիլիքները կամ նրազամայն տեղերը¹: Այդ բոլորից հետո, ըստ ավանդութեան, երբ Գրիգորը ևսիսկոտոսական ձեռնադրութիւն ստանալուց հետո վերադառնում է Կեսարիայից, նա եկեղեցիներ և վիպարաններ է կառուցել տալիս նախ՝ Վաղարշապատում և նրա շրջանում, որից հետո նաև այն վայրերում, ուր հեթանոսական տաճարները կործանման էին ենթարկվել, այդ թվում նաև Արտաշատ քաղաքում, որի մասին Ագաթանգեղոսը հայտնում է, թե Գրիգորը նախօրոք կործանած մեհյանների տեղերում եկեղեցիներ է շինել տալիս²:

Քրիստոնյա գործիչների մի այլ քաղաքականութիւնը, ինչպէս շեշտում է Ագաթանգեղոսը, այն էր, որ նշանավոր հեթանոսական տաճարներն ուղղակի վեր են ածվում քրիստոնյա եկեղեցիների և կամ կործանված բազիլի վայրում կառուցում էին նոր կրօնի հատկապէս աղոթատներ, այդ էլ այն հեռատեսութեամբ, որ հեթանոս ժողովուրդը կրօնական ծիսակատարութեան համար սովոր լինելով դիմել իրեն ծանոթ բազիլներին, աստիճանաբար կվարժվի այդ նույն բազիլ-եկեղեցիներում նոր կրօնի պաշտամունքի և ծիսակատարութեան հետ:

Ագաթանգեղոսի բոլոր վկայութիւններից կարելի է եզրա-

¹ Ա. գ. ա. թ. ա. զ. ե. զ. ո. ս., էջ 404:

² Նույն տեղում, էջ 424—425:

կացնել նաև, որ 4-րդ դարի սկզբում Արտաշատը դեռևս Հայաստանի աչքի ընկնող քաղաքն էր, որի վրա ուշագրություն են դարձնում թե՛ քաղաքական և թե՛ հոգևոր իշխանությունները: Վաղարշապատը սկսում է աստիճանաբար կենտրոնական դեր կատարել Հայաստանի քաղաքների շարքում, երբ այնտեղ քաղաքական իշխանության մոտ հաստատվում է նոր կրոնի պետը և երբ զանազան առասպելների ու ավանդությունների հիման վրա կառուցվում են այնտեղ այլ և այլ վկայարաններ և հարթուղիկ եկեղեցին կամ Մայր տաճարը: Սակայն միջազգային տարանջիկ առևտրի, ինչպես և տեղական ապրանքափոխանակության, արհեստների զարգացման և արդյունազործության տեսակետից Վաղարշապատը չէր կարող առաջնությունը խլել Արտաշատից և կենտրոնական հանդույցի դեր կատարել: Ինչպես կարելի է եզրակացնել, Ագաթանգեղոսի և Փ. Բուզանդի վկայություններից և Հայաստանում անդի ունեցած սլամական դեպքերից, Արտաշատը մեծ ավերածության չպետք է ենթարկված լինի հոռմեական լեգեոնների կողմից Ստատիոս Պրիսկոսի արշավանքի միջոցին, երբ նա գրավում է այդ քաղաքը, թեև հոռմայեցի պատմիչներն ըստ իրենց սովորությունների չափազանցում են հոռմայեցի զորավարների: Արևելքում կատարած Հոռմի համար դրական նշանակություն ունեցող գործողությունները: Հավանական է ենթադրել, որ հոռմեական լեգեոններն ըստ իրենց սովորությունների ենթարկել Արտաշատը, գուցե և մի քանի շինություններ ավերել, սակայն քաղաքն իր հիմնական մասով պահպանում էր իր գոյությունը և ուներ հոռմ բնակչություն:

Փ. Բուզանդը, խոսելով Սոսրով կոտակ թագավորի շինարարության մասին, այդ կապակցությամբ դեռ 4-րդ դարի երեսնական թվականներին Արտաշատն անվանում է մեծ և նրա դիրքից է սրտում Դվինի բլուրի տեղը: Նույնը կրկնում է նա, երբ պատմում է Տիրան թագավորի՝ Երասխի ափին Հուսիկ կաթողիկոսին դիմավորելու մասին: Հուսիկ կաթողիկոսը Կեսարիայում իր ձեռնադրությունը ստանալուց հետո վերադառնում է Վաղարշապատ: Ե՛մի երբ ինքը թագավորը լսեց, նրան ընդ առաջ գնաց գետի Տափեր կամրջի մյուս կողմում գտնված դաշտը իր ամբողջ բանակի քաղաքացիներ: Հետո սիրալիր ողջուն

տալով միմյանց (և) Տափեր կամըջով անցնելով, մտնում են Արտաշատ մեծ քաղաքը (և) գնում եկեղեցիք¹:

Ինչպես կարելի է հասկանալ վերոհիշյալ տողերից, Հուսիկը վերագտնում է Կեսարիայից այն ճանապարհով, որը վաղուց սկսած ծառայում էր միջազգային տարանցիկ առևտրի համար. հասնելով Արարատյան դաշտավայրը Երասխի աջ ափի ուղղությամբ, նա Տափերական կամըջով անցնում և մտնում է Արտաշատ մեծ քաղաքը, որտեղից Երասխի ձախ ափի ուղղությամբ գնում է Վաղարշապատ:

Հայկական քաղաքները, դրանց թվում և Արտաշատը, ծանր հարվածներ էին ստանում և ավերվում են 360-ական թվականներին: Մասանյան թագավոր Շապուհ Բ-ն համառ կռիվներ է մղում Արշակ Բ-ի դեմ, ցանկանալով Հայաստանն իր տիրապետության ենթարկել, որին մեծ չափով նպաստում են նաև հայ նախարարներից սմանք: 4-րդ դարի երկրորդ կեսի առաջին տասնամյակում, Շապուհին հաջողվում է զբաղել Արտաշերս ամրոցն ու գերի վերցնել հայկական զորքը և Փառանձեմ թագուհուն: Այնուհետև Շապուհը հրաման է տալիս կողոպտելու և ավերելու Հայաստանի աչքի ընկնող քաղաքները և նրանց բնակչությունը դադարեցնել Պարսկաստան: Շապուհի այդ գործերակերպը, հատկապես Հայաստանի նկատմամբ, եզակի էր և մինչև այդ ժամանակ չէր եղել հայ ժողովրդի պատմության մեջ. Փ. Բուզանդն այդ առթիվ գրում է. «Մերանից հետո (սղարտիկները) եկան Արտաշատ մեծ քաղաքը և վերցրին այն և նրա պարիսպները կործանեցին. այնտեղից վերցրին այդտեղ ժողոված դանձերը և ամբողջ քաղաքը գերեցին: Արտաշատ քաղաքից տարան ինքը հազար տուն (ծուխ) հրեա, որ Տիգրան Արշակունի թագավորն էր բերել Պարսկաստանից և քառասուն հազար տուն (ծուխ) հայ, որոնց Արտաշատ քաղաքից տարան: Եվ քաղաքի բոլոր փայտեզեն շինությունները հրդեհի մատնեցին, իսկ քարե շինությունները քանդեցին, պարիսպն էլ նույն եղանակով (քանդեցին) և քաղաքի բոլոր կառուցվածքները մինչև հիմքերն ավերեցին, չթողեցին և ոչ մեկը և առհասարակ:

¹ Փ. Բուզանդի Գ. դարձվածքում) զլուխ ժի. «Այս իբրև լուալ ինքն արքայն, ընդ առաջ ելանէր նմա ի դաշտն յայն կոյս դեռտոյն Տափերն կամ ժրջի, ամենայն բանահօքն բազմութեամբբ: Այս ողջոյն առեալ զցանկալի ողջոյնն միմեանց, անցեալ ընդ կամուրջն Տափերայ, մտեալ ի քաղաքն մեծ յԱրտաշատ, յեկեղեցին դռնայնայնալ:

րակ քարը քարի վրա շխողեցին, (քաղաքն) անմարդ և իրեն
բնակիչներէից զուրկ թողեցին: Իսկ երբ քաղաքի բոլոր զերի
ժողովուրդը հավաքեցին մի տեղ և անցկացրին Տափեր կամըր-
ջով, զորքով շրջափակեցին և գերիներին հաշվառման ենթար-
կեցին...»¹:

Արտաշատի գերիների մեջ Փ. Բուզանդը հիշում է նաև
նույն քաղաքի երեց Ջվիթին, որին թեև պարսիկները թույլ
են տալիս հեռանալու, ուր որ ուզում է, բայց նա հրաժարվում
է այդ արտոնութիւնից, քնում է գերիների մեջ և հետադառնում
էլ դատապարտվում մահվան:

Փ. Բուզանդը պարսիկների կողմից ավերված և գերեվարու-
թյան ենթարկված քաղաքներից հիշում է նաև Վաղարշապատը,
Երվանդաշատը, Ջարեհավանը, Ջարիշատը, Վանը և Նախճավանը,
բայց ամենից շատ և ավելի մանրամասն նա կանգ է առնում
«Մեծն» Արտաշատի վրա: Թեև Փ. Բուզանդը կարող է չափազան-
ցած լինել քաղաքների ավերածութեան չափը և գերի վարած
բնակչութեան քանակը², բայց կասկածից դուրս է, որ Շտայուն
Բ-ի այդ կոիվների ընթացքում Հայաստանի մի քանի քաղաք-
ները, որոնց թվում և Արտաշատը մեծ ավերածութեան են են-
թարկվում:

Յոսրոզ Կոտակի անտաս տնկելու և այնտեղ երկու
պալատ կառուցելու մասին տեղեկութիւնը Մ. Յորենային

¹ Փ. Բուզանդ, Գորութիւն, էջ 171—173:

ԵՆ. յետ այսօրեկ կէին (պարսիկք) ի քաղաքն մեծ յԱրտաշատ, և
առին զնա, և կըծանեցին զպարխալ նորա, առին անտի զգանձս մթերխալ,
որ կային, և զերեցին զամենայն քաղաքն: Եւ խաղացուցին ի յԱրտաշատ
ի քաղաքէ ինն հազար տուն երդ հրեայս, զոր ամեալ էր զերի Տիրբանայ
արքայի արշակունւոյ յերկրէն Պաղեստինացոց, և քառասուն հազար երդ
հայ, զոր յԱրտաշատ քաղաքէ խաղացուցին: Եւ զամենայն շինուած քաղա-
քին հրձիգ արարին զհայտակերտն, և զքարակերտն քանդեցին, զպարխալ
ըստ նմին օրինակի և զամենայն շինուած քաղաքին մինչև հիմունսն ապա-
կանեցին և ոչ թողին մի, և ոչ թողին քնաւ քարիքարի վերայ, անմարդ, և
թափուր յամենայն քնակչաց իւրոց կացուցանէին: Եւ եղև յորժամ ամէն
ժողովեցին զամենայն զգերիսն զքաղաքին ի մի վայր, և անցուցին ընդ
Տափերն կամուրջ, և առնէին համար զերոյն ի մէջ շերտափակ զօրացն
պատէին»:

² Թ. Արժուռնի, էջ 114—115: Ս ա մ. Ա ն ե յ ի, էջ 67: Փ. Բու-
զանդի այլ հրատարակութիւններէ մեջ Արտաշատից գերված հայերի թիվը
ցույց է տրված երբեմն քառասուն հազար, երբեմն 4 հազար, երբեմն 40 հա-
զար երդ:

բառացի կերպով քաղելով Փ. Բուզանդից, իր կողմից ավելացնում է, թե այդ նույն թագաւորն իր արքունիքը Արտաշատից փոխադրում է Դվին. «նաև արքունիքը փոխադրում է անաստից վերը մի ոստի վրա, ուր ամառվա պալատներ է շինում, որը պարսկերեն լեզվով Դվին է կոչվում, որ նշանակում է բլուր: Արտաշատն այն ժամանակ, երբ Արեան ուղեկցում էր արեգակին և ջերմ օդը պղտորվելով ժանդաճոտ քամիներ էին փչում, Արտաշատի բնակիչները չէին կարողանում դիմանալ դրան, իրենց կամքով հանձն են առնում փոխադրվել»¹:

Այսպիսով Մ. Խորենացու աված տեղեկութուններից կարելի է հասկանալ, որ Խոսրով Կոտակի ժամանակ (330—339 թթ.) Արշակունյաց արքունիքը փոխադրվում է Դվին, Արտաշատի բնակիչները կամավոր կերպով թողնում են իրենց բնակավայրը՝ ճահրճների գոյանալու և օդի նեխված լինելու պատճառով, և հաստատվում Դվինում: Պատմական փաստերը, սակայն, ցույց են տալիս, որ Խոսրով Կոտակ թագաւորի ժամանակ Արտաշատ քաղաքի գատարիվելու և Դվին փոխադրվելու մասին Մ. Խորենացու վկայութունը, որ կրկնել են նրանից օգտվող ուրիշ պատմագիրներ², չափազանցված է: Նախ՝ Հայաստանի թագաւորանիստ քաղաքը Խոսրով Կոտակի ժամանակ Արտաշատի հետ միասին նաև Վաղարշապատն էր, մյուս կողմից, ինչպես վերը նկատեցինք, Խոսրով Կոտակի մահից հետո մոտ 30 տարի անց, Փ. Բուզանդը Արշակ Բ-ի գերեզմարութունից հետո հիշատակելով Հայաստանի աչքի ընկնող քաղաքների ավերածութունն ու բնակչութան գերեզմարութունը Շապուհ Բ-ի գործերի կողմից, Արտաշատից վերջրած գերեզմարի թվից, թեև չափազանցրած, մի քանի տասնյակ հազար երգ է ցույց տալիս, մի հանգամանք, որը հակասում է Մ. Խորենացու հազարած տեղեկութան: Բացի դրանից, Շապուհ Բ-ի ժամանակ (310—379 թթ.) Հայաստանում ավերված մեծ քաղաքների թվում Դվինի

¹ Մ. Խորենացի, Բ. զիբք, Ը. գլ., էջ 235:

«նաև զարքունիսն փոխել վերոյ անաստին յոտ մի, ապաւնս հովանաւարս շինեալ, որ ըստ պարսկական լեզուին Դուին կոչի, որ թարգմանի բլուր: Բանդի ժամանակին յայնմիկ Արէս ուղեկցեալ արեգահան, և օդը ջերմայինք պղտորեալք ժանդաճոտութեամբ փչէին՝ յորմէ ոչ կարացեալ ժուծել որք յԱրտաշատն բնակեալ էին՝ կամաւ յանձն առին զփոփոխումն»:

² Մ. Տարնեցի (Առգրի), Պատմութիւն, Բ. տպ., Ս. Պետերբուրգ, 1885, էջ 67: Կ. Գանձակեցի, Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1909, էջ 21: Վարդան Վ., Հաւաքումն պատմութեան, Վենետիկ, 1862, էջ 45:

անունը մինչև անգամ չի հիշատակվում, որից կարելի է պարզապես եզրակացնել, որ 4-րդ դարում Դավինը գեռ մեծ քաղաքներին թվում չէր, այլ ծառայում էր այդ միջոցին Արշակունի հայ թագավորների համար իրրե որսատեղի և ձմեռվա հանգստյան վայր, ինչպես վկայում է նույն պատմագիրը և որ Արտաշատը բոլորովին չի դատարկված իր բնակչությանից, այլ, ընդհակառակը, նա ունի դեռևս հոծ բնակչության և շարունակում էր տարանցիկ առևտրի մեջ որոշ դեր խաղալ:

Լեոն իր «Հայոց պատմութեան» Ա. հատորում խոսելով Արտաշատ մայրաքաղաքի բնակչութեան՝ Սոսրով Կոտակի իշխանութեան օրով Դավին փոխադրվելու մասին, հետևյալն է ասում. «Երան (Սոսրով Կոտակին) հաջողվեց լավագույն կերպով լուծել Արտաշատ մայրաքաղաքի հարցը: Նրա ժամանակ էր, որ հայկական այդ հնագույն և հռչակավոր կենտրոնին (Արտաշատին) կյանքը դժվարացավ բնական մի պատճառից: Արաքսը, որ երկու կողմից շրջապատում էր մայրաքաղաքը, փոխեց իր հունը և իր ընթացքը հեռացրեց պարսպներից: Այս նախ և առաջ նշանակում էր, թե քաղաքը (Արտաշատը) զրկվում էր ամուր պատվարներից, թուլանում էր իրրե բերդ: Բայց իրրե բնակչության վայր էլ Արտաշատը վատ պայմանների մեջ է գրվում: Կազմվում են ճախճախուտներ, որոնք Արարատյան դաշտի խեղդող շոգերին ապահանում էին օդը: Սոսրովը, լեռնականների արշավանքից ազատվելուն պես, մայրաքաղաքի հիմնարկությունները տեղափոխեց նրա հյուսիսային կողմում գանյաղ արվարձանը, որ կոչվում էր Դավին և բլրի ձև ունեւր: Այդտեղ, բլրի վրա, շինեց արքունական պալատներ, որոնցից մեկը ինչպես երևում է, հատկացրեց թաղունուն և կոչվում էր Տիկնունի»¹: Սոսրով Կոտակի նպատակը չէր, ինչպես Լեոն է ասում, Հայաստանի մայրաքաղաքի, Արտաշատի (ըստ Լեոնի), հարցը «լավագույն» կերպով լուծել: Փ. Բուզանդը և Մ. Սորենացին պարզապես վկայում են, որ Սոսրովը իր համար որսի տեղեր է պատրաստում և հանգստյան համար երկու պալատ շինում այնտեղ: Արտաշատի շուրջը ճանճուտների գոյանալու խրնդիքը կապ ունեւր ոչ թե Սրասխի Արտաշատից հեռանալու, այլ ավելի շատ Մեծամորի գետի հոսանքի փոփոխություն հետ: Փ. Բուզանդից վերցրած հատվածի վրա Մ. Սորենա-

¹ Լեոն, Հայոց պատմութիւն, Ա. հատոր, Թիֆլիս, 1916, էջ 583:

ցու կատարած հավելվածի վրա հիմնվելով՝ Լեոն Նույնը ոչ միայն կրկնել է, այլև ավելի բնագրձակել և աշխատել է Մ. Խորենացու տված տեղեկությունների վրա լրացնել, Հակոաակ Լեոի այդ կարծիքի, Արտաշատը դեռ Խոսրով Կոտակից հետո էլ շարունակում է գոյութուն ունենալ, ինչպես քիչ հետո կտեսնենք, իհարկե, ոչ նախկին դիրքով և բազմամարդությամբ:

Գլխինը, ինչպես այդ պարզվել է Հայկական ՄՄՆ Գիտությունների ակադեմիայի Պատմական թանգարանի արշավախմբի կողմից մի քանի տարի շարունակ սխտեմատիկ կերպով այնտեղ կատարվող պեղումների շնորհիվ, թեև Խոսրով Կոտակի շինարարությունից առաջ էլ ունեցել է բերդից դուրս քաղաքային բնակչություն, բայց 4-րդ դարում, ինչպես և 5-րդ դարի առաջին տասնամյակներին գեռես մեծ քաղաք չէր դարձել և առաջնությունը Արտաշատից չէր խլել:

Աչքի է ընկնում մի գլխավոր հանգամանք, այն, որ Փ. Բուզանդի հաղորդած տեղեկությունները Շապուհ Բ-ի ժամանակ Հայաստանի քաղաքների ավերման և բնակչության բնաջնջման մասին, միօրինակ են¹. պատմադրի հիշատակած դերիներեի քանակը Հայաստանի միայն յոթը քաղաքներից մոտ մեկ միլիոն է, չհաշված սղանվածների թիվը: Պարզապես երկվում է, որ Փ. Բուզանդն օգտվել է ժողովրդական այնպիսի ավանդությունից, ուր պատմական զեպքերը սրոշ գունավորում են ստացել: Մակիայն, անկասկած է, որ 4-րդ դարի երկրորդ կեսին, հայ-պարսկական պատերազմների հետևանքով, Հայաստանի քիչ ու շատ աչքի ընկնող քաղաքները ավերածություն, կողոպուտի, կոտորածի և դերեվարություն են ենթարկվել, բայց և այնպես այդ քաղաքները չեն լքվել բնակչությունից և շարունակել են իրենց գոյութունը:

Մ. Խորենացին, անշուշտ, օգտագործելով Փ. Բուզանդի վերոհիշյալ հատվածը, Հայաստանի քաղաքների ավերման և բնակչությունից դերեվարություն մասին հետևյալ հակիրճ տեղեկու-

¹ Բացի Արտաշատից, Փ. Բուզանդը (էջ 171—173) հիշում է և հեռու լի քաղաքների բնակչության դերեվարությունը. Վաղարշապատից՝ 19000 կրգ, առանց տարբերելու հայերի և հրեաների թիվը, Երվանդաշատից՝ 20000 կրգ՝ հայ և 30000 կրգ հրեա, Բաղրեվանդի Զարեհավանից՝ 5000 կրգ՝ հայ և 8000 կրգ հրեա, Աղահովտի Զարեշատի՝ 14000 կրգ հրեա և 10000 կրգ հայ, Տոսպա Վանից 5000 կրգ հայ և 18000 կրգ հրեա, Նախնավանից 2000 կրգ հայ և 16000 կրգ հրեա:

թյուններն է տալիս. ճշուն ժամին Շապուհ թագավորից հրաման հասավ, որ քանդելով ավերին բոլոր քաղաքների ամրոցները և հրեաներին դերի տանեն և այն հրեաներին էլ, որ հրեական նույն կրոնին էին մնացել Տոսպի Վան քաղաքում, որոնց Բարզափրան Ռշտունին էր բերել Տիգրանի ժամանակ: Մրանց Շապուհը բնակեցրեց Ասպահանում: Գերի տարան նաև այն հրեաներին, որոնք Արտաշատում և Վաղարշապատում էին, որոնց Տիգրան թագավորն էր բերել, և սուրբ Գրիգորի և Տրդատի ժամանակ ընդունել էին քրիստոնեություն, այդ թվում էր նաև Արտաշատի երեց Ջվրթանը¹:

Փ. Բուզանդի և Մ. Խորենացու նույն դեպքերի վերաբերյալ տեղեկությունները տարրեր են միմյանցից: Մ. Խորենացու տեղեկությամբ Շապուհը հրամայում է ավերել Հայաստանի բոլոր քաղաքների ամրությունները միայն, այսինքն՝ պարիսպները և միջնաբերդերը և ոչ թե քաղաքներն առհասարակ, ազգարնակություն ընակարաններն ևս. մյուս կողմից՝ Մ. Խորենացու վիպաթյամբ, գերի են տարվում միայն հրեաները՝ հին օրենքին հավատարիմ, թե քրիստոնյա դարձած, այդ մեկնույն է: Հայերի գերեվարություն մասին ոչ մի խոսք չի սուսում, Ջվրթա երեցն էլ հանդես է գալիս իբրև քրիստոնյա դարձած հրեա:

6. ԱՐՏԱՇԱՏՆ ԻՐ ԿՈՅՈՒԹՅԱՆ ՎԵՐՁԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Սկսած 5-րդ դարից Արտաշատը պատահականորեն է միայն հիշվում պատմություն մեջ. նա հանդես է գալիս հայ ժողովրդի պարսից բռնակալական լծի դեմ 5-րդ դարում բարձրացրած ապստամբությունների և կոռիպների կառավարություններ:

Երբ պարսից Հազկերտ 2-րդի հրամանով Միհրնեսրեսն հազարապետը նամակ է գրում հայ ավազանուն և առաջարկում թողնել քրիստոնեությունն ու ընդունել զրադաշտական կրոնը, հայերի բացասական պատասխանից հետո, իբրև երկրի պետական գործերի պատասխանատու, պարսից արքունիք են հրավիրվում Հայաստանի աշխարհական պետերը: Ղ. Փարպեցու մոտ, Հազկերտի կողմից հայ ավազանուն զբված նամակը համառոտ է, ինչպես և պետք է լիներ, իսկ Եղիշեի մոտ՝ բավական ընդարձակ:

¹ Մ. Խորենացի, Գ. դիրք, ԼԵ. ԳԼ., էջ 300:

Պարսից արքունիքի կողմից հայոց ավագանուն ուղղված այդ գրութայնը պատասխանելու համար սուգային ժողով է գումարվում Արտաշատում: Խոսքով կոտակի իշխանութայն ժամանակից մոտ 115 տարի անց, գարձյալ հիշվում է Արտաշատը թիագաւորանիստ քաղաք՝ անվան տակ: Պարզ է, որ Եղիշեն այս դեպքում նկատի ունենք Արտաշատի նախկին դերը: Ղ. Փարսպեցին ժողով գումարելու տեղի մասին ոչինչ չի ասում: Այդ ժողովին մասնակցում են Հայաստանում այդ ժամանակ աչքի ընկնող նախարարական տոհմերի և հոգևորականութայն ներկայացուցիչները: Ղ. Փարսպեցին մի առ մի հիշում է ժողովին մասնակցող թե՛ աշխարհական և թե՛ հոգևոր գործիչներին, մինչդեռ Եղիշեն հայտնում է միայն հոգևորականներին անունները, իսկ աշխարհական ներկայացուցիչներին մասին անորոշ և ընդհանուր ակնարկ է անում: Արտաշատի ազգային ժողովը բացասական պատասխան է դրում պարսից արքունիքին: Ղ. Փարսպեցին ավելի համառոտ և ամփոփ է դրում հայերի պատասխանը (մոտ երկու և կես էջ), մինչդեռ Եղիշեն 15 էջ է նվիրում նույն պատասխանին, ծաղրելով զրադաշտական կրոնը և դրվատելով քրիստոնեությունը, որից երևում է, որ Եղիշեն իր կողմից կատարել է բավական հավելումներ:

Հայերի պատասխանն անակը առիթ է տալիս պարսից կառավարութայն արքունիք հրավիրել աչքի ընկնող հայ նախարարներին, որոնցից ոմանք մասնակցել էին Արտաշատի ազգային ժողովին: Նույն խնդրի առթիվ արքունիք են հրավիրվում նաև վրաց և աղվանից երկրների ավագանիները, որովհետև Սասանյան իշխանութայնը նույն քաղաքականութայնն էր վարում նաև հիշյալ երկրներում: Կալվածները գրավելու և տքսորի սպառնալիքի տակ հայ, վրացի և աղվան իշխաններն ընդունում են պարսից արքունիքի առաջարկութայնը, ուրանում են քրիստոնեական կրոնը և խոստանում նպաստել իրենց երկրներում ատրուշաններ շինելու և զրադաշտականութայնը տարածելու, այսինքն՝ նրանք խոստում են տալիս հլու հպատակ դառնալ Պարսկաստանին, բայց հայրենիք վերագառնալուց քիչ ժամանակ անց ապստամբութայն են բարձրացնում Հայաստանում, Վրաստանում և Աղվանից երկրում Պարսից կառավարութայն այդ քաղաքականութայն դեմ:

Հայ ապստամբներն ըստ Եղիշեի, հարձակվում են Հայաստանի այն բերդերի, ավանների և քաղաքների վրա, ուր պարս-

կական կայազորներ կային և ատրուշաններ էին շինված. այդ թվում հիշվում է նաև Արտաշատը. «Այն ժամանակ կրկին անգամ հարձակվեցին այն բերդերի և ավանների վրա, որոնք գտնվում էին երկրի զանազան վայրերում և ամրացնելու և պարսիկների ձեռքում էին. կործանում և քանդում են նրանց բնակարանները: Առաջինը մեծ Արտաշատն իր ավաններով միասին»¹: Այսպիսով պարզվում է, որ 449—450 թվականներին հիշվում է իբրև մեծ և ավաններով շրջապատված մի քաղաք, որտեղ պահվում էր պարսկական կայազոր, շինված էր նաև ատրուշան: Ղ. Փարպեցու և Եղիշեի վկայությամբ Վասակի կողմից ձեռքբերված հայ հոգևորականների մեջ Սամվել և Աբրահամ երեցները մեղադրվում էին Արտաշատում գտնված ատրուշանը կործանելու խնդրի առթիվ. նրանք դատապարտվում են աքսորի². Պարզ է, որ եթե Արտաշատն իբրև աչքի բնկնող ավան կամ քաղաք գոյություն չունենար այդ ժամանակ, Սասանյան իշխանությունը կարիք չէր ունենա այնտեղ ատրուշան շինելու և կամ կայազոր պահելու:

Ապստամբությունը լայն ծավալ է սպանում Հայաստանում, Վրաստանում և Աղվանից երկրում. հայ զորքի սպարապետ Վ. Մամիկոնյանն օգնություն է գնում Աղվանք. Հայաստանի մարզպան Վասակ Սյունին դավաճանում է իր հայրենիքին և թեքվում պարսից կողմը. իր կողմը գրավելով նաև հայ իշխաններից ոմանց՝ սկսում է հարձակումներ գործել Հայաստանի այն բերդերի, ավանների և շրջանների վրա, որոնք պատկանում էին իրեն հակառակորդ հայ իշխաններին, ուր կային հայկական կայազորներ, ավերում, կործանում է գրանք և գերի վերցնում ուխտապահ գլխավոր իշխանների ընտանիքները: ...«ավերում են հայոց երկրի շատ վայրերը... և Արտաշատի նահանգը և հենց Արտաշատն ամբողջովին և բոլոր գյուղերն ու ավանները, որ նրա շրջակայքում էին, գրավում են, ավերում և հրդեհի մատնում...»³:

¹ Եղիշե, Պատմութիւն Վարդանանց, Թիֆլիս, 1919, էջ 87: «Յայնմ ժամանակի դարձեալ յարձակեցան ի վերայ բերդիցն և աւանաց, զոր ունէին պարսիկքն ի տեղիս, յամբոցս աշխարհին. ստապակէին քանդէին զբնակութիւնս նոցա: Առաջին զմեծ Արտաշատ հանդերձ աւանօք իւրովք»:

² Եղիշե, էջ 169, Ղ. Փարպեցի, էջ 166:

³ Եղիշե, էջ 101, ...«աւերեալ զբազում տեղիս հայոց աշխարհին... զնահանգն Արտաշատու և զԱրտաշատն ինքնին զլիսովին, և զամենայն զիւրս և զաւանս որ շուրջ նոցաւ էին, առեալ և հրձիգ արարեալ...»:

Եղիշեն, ըստ իր սովորութեան Վասակի դավաճան արարքները բազմացնում և չափազանցութեան է հասցնում: Դժվար թե Վասակը, իրրև երկրի մարդպան, Հայաստանի բերդերը, ավաններն ու քաղաքները, թեկուզ իր հակառակորդներին պատկանող, հրդեհի կամ ավերածութեան ենթարկեր. նրա նպատակն իրեն հանձնած երկրի կործանումը չէր, այլ իր հակառակորդին ստիպել ընդունելու պարսից արքունիքի առաջարկը: Այդ տեսակետից ավելի ճիշտ մտտեցում է ցույց տալիս Ղ. Փարպեցին, որի համար նույնպէս, Վասակը դավաճան էր: ԵԱնօրեն Վասակը դավաճանում է Աստուծու ուխտին և նենգութեամբ գրծում է ավետարանի երգումը և հետանալով ճշմարտութեան միաբանութեանից՝ ապստամբում է... և հայոց ամբոյնների բերդերը լալելով և իր կայազորը թողնելով զգուշացնում էր: Եվ Մամիկոնյան տոհմի, կամսարակառուների և այլ տանուտերերի որդիներին հավաքելով դպակներից, ուղարկում է Սյունյաց իշխանութեան մամուր բերդերում զգուշութեամբ պահելու...»¹:

Ղ. Փարպեցու այս վկայութեանից պարզվում է, որ Վասակն իր հակառակորդների կամ հայոց եկեղեցու ուխտին հավատարիմ մնացած իշխանների բերդերն է գրավում և նույն վայրերում թնդնում իրեն վստահելի կայազորներ, առանց ավերելու կամ կործանելու գրանք. դերում է նաև Մամիկոնյան, կամսարական տոհմերին, ինչպես և այլ իշխաններին պատկանող ազաններին և իրրև պատանդ պահում Սյունիքի բերդերում: Այստեղ կարևորն այն է, որ Եղիշեն Վասակի կողմից գրավված բերդերի, քաղաքների և ավանների թվում հիշում է Արտաշատը, նրա շուրջը գտնված գյուղերն ու ավանները և առհասարակ Արտաշատի ճահանդն ամբողջովին»². վերջին անունով նահանգ գոյութեան չունեւ չայստատանում: Ինչպես երևում է, Եղիշեն Արտաշատը շրջապատող գյուղերից և ավաններից ավելի հետև վայրերն է մատնանշում, Արտաշատի նահանգ անվանելով գրանք իրրև հանրածանոթ մի անուն:

Եղիշեի և կողմնակի կերպով նաև Ղ. Փարպեցու վերոհիշյալ վկայութեաններից կարելի է եզրակացնել, որ Արտաշատ քաղաքն իր բերդով, շրջապատի գյուղերով, ավաններով և ամբողջ շրջանով պատկանում է Վասակի հակառակորդ նախարարական

¹ Ղ. Փարպեցի, էջ 66—67:

տոհմերին, հաժանարար Մամիկոնյաններին և նրա ազգակից տոհմին՝ Եղիշեի հիշած «Թաղաւորանիսա» տեղերից մեկը անշուշտ, Արտաշատն էր իբր շրջակայքով, սրբ գրավում է Վասակը Վարդանի բացակայութեան ժամանակ, իսկ երբ Վարդանը վերադառնում է Աղվանքից, նա ետ է գրավում հիշյալ վայրերը և երբ նույն տարին գարնան բացվելուն պես Հայաստանում տեղեկութուն է ստացվում պարսից բանակի դեպի Հայաստան արշավելու մասին, Վարդանի, իբրև հայոց սպարապետի հրամանով՝ նրա կողմնակից հայ իշխաններն իրենց զորքերը կենտրոնացնում են Արտաշատ քաղաքում: Հայոց զորքն Արտաշատից անապարում է թշնամու դեմ և նրան հանդիպում Արտաշ գավառում, ուր Ավարայրի դաշտում, Տղմուտ դեռի ափին, 451 թ. տեղի է ունենում ճակատամարտը հայերի համար անհաջող ելքով:

Այնուհետև Արտաշատը հիշվում է 480-ական թթ. Վահան Մամիկոնյանի ժամանակ, պարսից իշխանութեան դեմ հայերի ապստամբութեան շրջանում: Հայերի հետապնդման պատճառով, Հայաստանի պարսիկ մարզպան Ատրվշնասպ Հոզմանդյանը և հազարապետ Վե՛վհենամն իրենց կողմնակից հայ դավաճան իշխաններով խույս են տալիս Շիրակից և պատասպարվում Արտաշատի բերդում. ապստամբ հայերը պաշարում են Արտաշատի բերդը. Ատրվշնասպը մյուս փախստակներով գիշերը դուրս է դալիս Արտաշատի բերդից և անցնում Ատրպատական²:

Նույն դեպքերի կապակցութեամբ Ղ. Փարպեցին երկրորդ անգամ հիշում է Արտաշատը, բայց ոչ իբրև քաղաք, այլ դյուղաքաղաք. նրա վկայութեամբ պարսից զորավար Զառմինը Հազարավուխտը շտապում է պաշարել Դվինը, ուր այդ միջոցին գտնվում էր Վահան Մամիկոնյանը հայ ապստամբ նախարարների հետ:

... ԵՆԻԵԱԸ հասանէր յանկարծակի յերկիրս հայոց Զառմինը հաղարաւուխտ, սաստիկ և բազում այրբնտիր զօրօք դիմեալ ան-

² Եղիշե, էջ 128:

² Ղ. Փարպեցի, Պատմութ. հայոց, էջ 121:

ցանկեր ստիպող բնդ կամուրջ գետոյն Երասխայ, և ի գիւղաքաղաքին որ կոչի Արտաշատ՝ բանակէր այն օր¹:

Ղ. Փարպեցիին ժամանակակից պատմագիր էր և նա լավ ծանոթ էր այդ վայրերին, հեռանալես ճիշտ պիտի համարել նրա վկայութիւնը, որ 2-րդ դարի վերջին Արտաշատն արդեն գոյության գաղափար էր վերածվել, բնակչութիւնը քչացել և բնակելի տարածութիւնը փոքրացել էր, սակայն նշա բերդն իր պարիսպներով, ինչպես վերը տեսանք, դեռ գոյութիւն ունէր: Այնտեղ դեռ մարդիկ էին պատսպարվում: Պարսից բանակը մի օր ֆուռ է Արտաշատում: Վերջին անգամ Ղ. Փարպեցիին հիշում է Արտաշատը, երբ Վահան Մամիկոնյանը Ատրպատականում պարսից արքունիքի կողմից ուղարկված Նիխորի հետ տեսակցելուց հետո, վերադառնում է Դվին: Հասնելով Երասխ գետին՝ նա նկատում է թե Արտաշատի մոտի կամուրջը, որը հայտնի էր Տափերական անունով, ավերվել է. նա ստիպված է լինում անցնել Երասխը նրա մի ծանծաղուտով²:

Արտաշատն իրրև գոյաղաքաղաք շարունակում է գոյութիւն ունենալ նաև 7-րդ դարում և այդ անունով նա ծանոթ էր արար մի քանի պատմագիրների և աշխարհագիրների: 9-րդ դարի պատմիչ Ան. Բալաձորին արաբների գեպի Հայաստան կատարած առաջին արշավանքի (640 թ.) դեպքերի կապակցութեամբ հայտնում է, թե երբ արաբական զորաբանակի գլխավոր հրամանատար Հարիր Իբն Մաալաման գրավում է Կարակալան, ճանապարհովում է գեպի Խլաթ, Արճեշ և ապա առաջ անցնելով՝ հասնում է Արգիշատ, կամ որ նույնն է՝ «Ղերմեզ» փոքրիկ քաղաքը. նա անցնում է Կուրդեր կտրված գետը և բանակ է գնում Դերիլի (Դվինի.— Ա. Շ.) դաշտավայրում, որտեղից հեծելազորն ուղարկում է քաղաքի (Դվին.— Ա. Շ.) դեմ, և հետո ինքն է գալիս քաղաքի դռների մոտ³: Պրոֆ. Պ. Կ. Ժուզեն Արգիշատ (اردش) տեղանունը թյուրիմացութեամբ կարդացել է Արգիշատ (ازدشت) ենթադրելով, թե բ () տառի վերևը եղել է կեա (2-րդ տառ), որովհետև արաբերենի մեջ բ () զ () տառերը միևնույն ձևով են գրվում և երբեմն վերևը կետեր ունեցող տառերի այդ կետերը բաց են թողնվում և ընթերցողներն իրենք

¹ Ղ. Փարպեցի, Պատմութ. հայոց, էջ 143—144:

² Նույն տեղում, էջ 171:

³ Ах. Баладзори, Книга завоевания стран, пер. П. К. Жузе. Баку, 1927, стр. 10.

պիտի հասկանան, թե ի՞նչպես պիտի արտասանեն այդ տառերը: Սպա ծանոթության մեջ պրոֆ. ժողեն բացատրում է, թե Ազգիշատը Աշտիշատն է: Սակայն Աշտիշատը գտնվում է Տարսն գավառում, որն ընկնում էր Խլաթից և Արճեշից դեպի արևմուտք և Հարիր Բրն Մասլամայի այդ արշավանքի ճանապարհին չէր կարող լինել: Արաբական զորքանակը շտապում էր հասնել Հայաստանի այդ ժամանակվա մայրաքաղաք Դվինը, որի մոտն էր գտնվում Արաշատը, իսկ դա Խլաթի և Արճեշի հյուսիս-արևելյան կողմն էր: Միևնույն ժամանակ Ա. Բալաձորին տալիս է Արտաշատի մի այլ կոչումը՝ «Աերմեզ», որ նշանակում է կարմիր, իսկ այդ կոչումով հայանի էր միայն Արաշատը կամ Արաշատը, սրահ. պատրաստվում էր Մերձավոր Արևելքում շատ հայանի սրգան-կարմիր ներկը: Այնպես սր Արտաշատ քաղաքի անունը ճիշտ է գրված Ա. Բալաձորու աշխատության մեջ և կարիք չի եղել այն փոխելու Ազգիշատի: Իրն-ալ-Աթիրը (III, 65) այդ նույն քաղաքի անունը գրում է Ազգիշատ: Երևի Բալաձորու համապատասխան հատվածից օգտվելով, նա էլ նույնպիսի թյուրիմացության մեջ է ընկել, իսկ Յակուբին (I, 199) պարզապես գրում է Արգաշատ (ارداشت), որովհետև վերջինս ծանոթ էր այդ քաղաքի անվանը:

Նույն 640 թ. դեպքերի կապակցությամբ Սերեսու եպիսկոպոսը պատմում է, թե արաբական զորքի առաջին արշավանքից և Դվինում կատարված կատորածից, կողոպուտից և դերևվարությունից հետո, երբ երկիրը խաղաղվում է, ներսես Գ. Տայեցի կաթողիկոսը սկսում է իր շինարարական գործունեությունը. նաև՝ նա կառուցում է Արտաշատում Սոր Վիրապի վրա մի վկայարան ս. Գրիգորի անունով, որից հետո ձեռնարկում է Զվարթնոցի շինությունը¹, թվում է, թե Սերեսոսը, քանի որ ժամանակակից հեղինակ է և պարզապես գրում է, թե «Սա (Ներսեսը) շինեց սուրբ Գրիգորի վկայարանը Արտաշատում, Սոր Վիրապի վրա...» կարելի է ենթադրել, որ այդ միջոցին Արաշատը դեռ լքված չէր իր բնակչությունից: 9—10-րդ դդ. ապրող հեղինակ Հով. Իրասխանակերտցի կաթողիկոսը նույնպես հիշատակում է վկայարանների շինություն մասին Սոր Վիրապի վրա, բայց այս դեպքում արդեն նա Արտաշատի անունը

¹ Ас. шахназарян, Двин, Ереван, 1940. стр. 61.

² Սերեսու եպ., Պատմութիւն ի Հերակն, Թիֆլիս, 1913, էջ 274:

չի տալիս, մինչև 912—913 թթ. նա շատ անգամ եղել է Դվինում, պատակ է Արտաշատի շրջանում իբրև կաթողիկոս, բայց ինչպես երևում է, այդ գարում Արտաշատն իբրև ավան կամ զյուզ ալլես գոյություն չուներ:

Նույն Հովհաննես պատմաբան կաթողիկոսը վերջին անգամ հիշում է Արտաշատը, բայց ոչ իբրև ավան կամ զյուզաքաղաք, այլ իբրև գաստակերտ: Նրա վկայությամբ, Դևորգից հետո կաթողիկոսական աթոռն է բարձրանում Հովսեփ Արագածոտնեցին, որի ժամանակ ավելի ևս ծանրանում է արարական լուծը հայ բնակչության վրա: Արարական իշխանությունը կեղեքում էր ժողովրդին ոչ միայն ծանր հարկերով, այլև բռնի միջոցներով շատերի կալվածքներն էր յուրացնում, մանավանդ այնպիսի հողեր և սգարակներ, որոնք շահարեր էին: Այդ նույն Հովսեփ կաթողիկոսի ժամանակ ստտիկանի¹ պաշտանով Հայաստան է գալիս² Խուզեյմ-իբն-Խալիմը, առջին անգամ 784/785 թ.: Ահ. Բալաձորու վկայությամբ, Խուզեյմը հանդիսանում է Հայաստանի երևելյի կառավարիչներից մեկը, իսկ ալ-Համադանու վկայությամբ, նա հանդես է գալիս իբրև ամենագաժան փոխարքան Հայաստանում³: Նա հողերի բաժանում է կատարում Դվինում և Նախիջևանում և տուրքեր սահմանում: Այդ նույն ստտիկանը Դվինում հաստատվելուց հետոնկատում է, որ հայոց կաթողիկոսարանն ունի մեծամեծ և պողոթեք գաստակերտներ, ինչպես Արտաշատը, Կալակերտը և Հոռոմոց Մարզը և ամեն ջանք թափում է այդ կալվածները խլելու կաթողիկոսից և սեփականացնելու: Նա առաջարկում է կաթողիկոսին վերահիշյալ կալվածներն իրեն վաճառել: Կաթողիկոսը հրաժարվում է նրա ցանկությունը կատարել, ստտիկանը բանտարկում է կաթողիկոսին, ձեծի և անարգանքի է ենթարկում նրան, բայց նպատակին չի հասնում: Այն ժամանակ ստտիկանը հետևյալ խորամանկություն է դիմում. երեք քսակ դրամ է լցնում և տալիս իր ծառաներին, որոնք այդ գանձը գլուխների վրա դրած Դվինի հրապարակով ի տես մարդկանց պիտի տաներն բանտ, իբրև թե կաթողիկոսին տալու՝ նրանից գնված գաստակերտների իբրև փոխարժեքը. միևնույն ժամանակ նա իր ծառաներին պատվիրում է բանտի մի գոնով ներս մտնել, իսկ մյուս գոնով գաղտնի դուրս գալ և

¹ Ах. Баладзори, стр. 21. Ал. Хамадани Сбор. Матер..., выш. XXXI, стр. 33.

գանձը բերել իրեն հանձնել: Դրանից հետո, նա լուր է տարածում քաղաքում, թե կաթողիկոսը դաստակերտներն իրեն է վաճառել, իսկ այդ նույն միջոցին նա կաթողիկոսին ուղարկում է բանտի կապանքներից: Այդ բոլորից հետո էլ կաթողիկոսը չի վհատվում, նա դիմում է գառարան և հազիվհազ հաջողվում է նրան բնագործաց ոստիկանի ձեռքից ազատել Կավակերտն ու Հոռոմոց Մարգը, իսկ Արտաշատը (դաստակերտը) մնում է ոստիկանի սեփականությունը¹. Այսպիսով պարզվում է, որ 8-րդ դարի վերջին քառորդում Արտաշատն իբրև բնակավայր պատմագիրների մոտ չի հիշատակվում, այլ դրա փոխարեն նախկին Արտաշատն իր շրջանով իբրև դաստակերտ, այսինքն՝ ավան, ազարակ:

Չնայելով, որ 8-րդ դարի վերջին, Արտաշատում բացակայում էր արդեն բնակչությունը, բայց և այնպես մի ժամանակ այդ բնագործակածավալ քաղաքի պարիսպներից, պալատներից, տշտարակներից և առհասարակ հասարակական շինություններից պետք է կիսավեր կամ փլատակ վիճակում մնացորդներ լինեին գետնի երեսին, քանի որ նա շինված էր հարթ տարածություն վրա (բացի նրա շրջապատում եղած Սոսի Վիրապի բլրից) և, հեռակայես, եթե ուրիշ որևէ պատահարի ենթարկված չլինեք հետագայում, նրա տեղագրությունը դժվար չէր որոշել: Մինչդեռ մի քանի դար հետո, թե տեղացիները և թե արտաքին ճանապարհորդները Արտաշատի շինության ճիշտ տեղը չեն կարողանում մտանանիշ անել: Իմ կարծիքով Արտաշատի փլատակների իսպառ անհետացումը գետնի երեսից կամ նրա հավասարվելը գետնի երեսին և հետագայում հողով ու ավազով ծածկվելը կապ է ունեցել այն հանգամանքի հետ՝ որ շրջապատում քարահանք չկար և մոտակա գյուղացիների համար հին քաղաքի ավերակները դարեր շարունակ ծառայել են իբրև քար ձեռք բերելու հեշտագույն միջոց, այն էլ ոչ թե ապառաժ քարեր, այլ մշակված և բնորոշի: Որոշ դեր էլ անշուշտ խաղացել են մեծ

¹ Հ ո վ հ. Դրասխանակերտցի, Մոսկվա, 1853, 63—64. Կավակերտը և Հոռոմոց Մարգը Ղ. Ալիշանը (Այբբարտ, Վենետիկ, 1890, էջ 197 և 303) գետեզում է Հրազդանի (Ջանդի) ափերին, որ բավական անորոշ է. Ջաքարե պատմագիրը Կավակերտը մասնանշում է Գյո Գումբեթի մոտ. այդ երկու գյուղերը նա գետեզում է Երևանի և Էջմիածնի միջև: Պատմութիւն, Վաղարշապատ, 1870, էջ 46:

երկրաշարժները, որոնց ժամանակ փլատակները ծածկվել են հողով:

Այսպիսով պատմագրական տեղեկությունների ուսումնասիրությանից կարելի է եզրակացնել, որ Արտաշատը միանգամից չի լքվել իր բնակչութունից Պոսրով կոտակի ժամանակ (330—339 թթ.), այլ հեազայում, հեազնեան փոքրանալով՝ 8-րդ դարում դառնում է մի փոքրիկ գաստակերտ:

Արտաշատից բնակչության աստիճանաբար հեռանալու պատճառ է ծառայել նախ և առաջ Հայաստանի մայրաքաղաքի կամ վարչական գլխավոր կենտրոնի տեղափոխությունը զանազան տեղեր՝ Տիգրանակերտ, Վաղարշապատ, 162 թ. և վերջում էլ Դվին: Պարզ է, որ արքունիքի հետ տեղափոխվել են նաև նրա ծառայողները, պետական գործակալության պաշտոնյաները, պալատին մոտիկ կառնած իշխաններն ու հոգևորականությունը:

Բայցի դրանից Արտաշատի լքման պատճառներից մեկը պիտի համարել նաև ստրկական կարգերի քայքայումը: Սարուկի աշխատանքը չէր տալիս կալվածատերին այն օգուտը, որ սպասվում էր նրանից, ուստի Արտաշատում կենտրոնացած ֆեոդալ-կալվածատերերը քաշվում են իրենց գլխակները, ուր սկսում են օգտագործել ճորտական աշխատանքը, որը ստրկականի համեմատությամբ ավելի ձեռնտու էր:

Արտաշատի բնակչության թվի զգալի չափով նվազելու պատճառ է ծառայել, հենց նրա մոտ կառուցված Դվինը սկսած 4-րդ դարից, որը կարճ միջոցում հանդիսանում է տարանցիկ առևտրի գլխավոր հանգույցներից մեկը, ուր զարգանում է և տեղական արդյունագործությունը: Այդտեղ է տեղափոխվում Վաղարշապատից նաև կաթողիկոսական աթոռը: Հայաստանի հարևան երկրներից և Հայաստանի ներքին քաղաքներից մեծ թվով առևտրականներ են հանդես գալիս Դվինի շուկա, ուր տեղի է ունենում ազրանքափոխանակություն: Այստեղ են կենտրոնանում նաև արհեստագործները: Մինք տեղեկություն ունենք, որ 5-րդ դարի վերջին քառորդում Տափարական կամուրջն արդեն քանդված էր, այսինքն, որ Արտաշատն այլևս անմիջապես կապված չէր Մրասխի աջ ափի հետ և զրկված էր որևէ կապ պահպանելուց տարանցիկ առևտրի գլխավոր ճանաչարհի հետ: Պարզ է, որ այսպիսի պայմանների հետևանքով

Արտաշատում գտնվող առևտրականներն ու արհեստավորները պիտի տեղափոխվեին Գվին և կամ մի այլ տեղ:

Իսկ ամենագլխավոր և վճռական նշանակություն ունեցող պատճառը ոչ միայն Արտաշատ քաղաքի, այլև գուցե նրա արվարձաններում հաստատված բնակչության տեղափոխության, կարելի է համարել Մեծամորի և Զանգու միացյալ գետերի ընթացքի փոփոխությունը: Արդեն վերը ցույց ավինք, թե տընտեսական ինչ մեծ նշանակություն ունեին վերոհիշյալ ջրառատ գետերը Գվինի և Արտաշատի շրջանների ոռոգման համար: «Աշխարհացոյցի» հեղինակի վկայությամբ, 7-րդ դարից դեռ առաջ, այդ գետերը փոխել էին իրենց ընթացքը և Արտաշատից մոտ 25—30 կիլոմետր հեռու գետի արևմուտք էին խտնվում Երասխին, իսկ Արարատյան գաշտավայրի այն մասերը, որոնք գտնվեին ջրերից և առհասարակ ոռոգումից, շոք անապատի են վերածվում: Նույնն է տեղի ունեցել և Արտաշատի նկատմամբ: Թե երբ է տեղի ունեցել Մեծամորու ընթացքի փոփոխությունը, ճիշտ սրողել դժվար է: «Աշխարհացոյցի» հեղինակը, որն ապրել է 7-րդ դարում, բավականանում է ասելով, թե ներկայումս (այսինքն՝ 7-րդ դարում) Մեծամորին Արտաշատից հեռու է թափվում Երասխը: Արտաշատի շուրջը ճահիճների գոյանալու և օդի նեխվելու մասին Մ. Խորենացու վկայությունը կարող է իրականության համապատասխան լինել, քանի որ Մեծամորի գետի ստորին հոսանքի փոփոխության հետևանքով Արտաշատի շրջակա դաշտավայրերում և ցածրագիր հարթությունների մեջ հավաքված ջրերը, որոնք ենթակա չէին այլևս գետի ուժեղ հոսանքին, լճացել էին և ամռով ամիսներին, կարող էին վարակել գարձնել օգը և ստիպել բնակիչներին հեռանալ այդ վայրից:

Արդեն նկատեցինք, որ 8-րդ դարի վերջին քառորդից հետո Արտաշատի անունը՝ իբրև քաղաքի և ավանի, մեր պատմագրության մեջ այլևս չի հիշվում, իսկ Արտաշատ քաղաքի հեռավորված թոր Վիրապ անունը սկսվում է՝ հաճախակի գործածվել իբրև սրբավայր, ուր հետագա դարերում նորոգվում են և կառուցվում եկեղեցական այլ շինություններ: Թոր Վիրապի եկեղեցական ոյժմյան շինությունները կառուցված են 17-րդ դարում և որևէ կապ չունեն հին քաղաքի ավերակների հետ: Հայ և օտար բանասերներն ու ճանապարհորդները վերջին դարերում հետաքրքրվել են Արտաշատ մայրաքաղաքի շինու-

թյան տեղը սրտելու խնդրով, բայց շփոթության մեջ են ընկել և բուրսովին այլ տեղեր են ցույց տվել: Այդ շփոթության պատճառներինց մեկը կարելի է համարել այն, որ Գլխնի ավերակներն մոտ գտնվող Արտաշատ կամ Արտաշատ դուռը անուններին մանության պատճառով վերագրել են հին Արտաշատ քաղաքին, սրով Գլխնի ավերակները պատահամբ համարվել են Արտաշատին:

Եվրոպացի տառչին ճանապարհորդը, որը հետաքրքրվել է Արտաշատ քաղաքի տեղի խնդրով, Շարգենն է հղել, որը դեպի Իրան կատարած իր երկրորդ ճանապարհորդության ժամանակ (1672—1673) ուրիշների վկայությունների հիման վրա մի քանի անհիմն ենթադրություններ անելուց հետո, խոսելով Նրևանի խանության մեջ գտնված հայկական մի քանի վանքերի մասին, սրանց ինքն անձամբ չի եղել և հիմնվելով ուրիշ աղբյուրներից քաղած տեղեկությունների վրա, Խոր Վիրապի մասին ասում է. «Այդ վանքը գտնվում է Նրևանի սարգարության սահմանի վրա, էջմիածնից դեպի հարավ: Տեղացիներն ասում են, որ այնտեղ տեսանելի են Արտաքսատի ավերակները, այն քաղաքի, սրը նրանք անվանում են Արտաշատ, պարսից թագավոր Արտաքսատի անունով, որին Արևելքում կոչում են Արդեշեր: Նրանք վկայում են նույնպես, որ այդ ավերակների մեջ տեսանելի է Տրդատի պալատը, որը շինվել է 1600 տարի առաջ, և, ասում են, որ միայն պալատի մի պատն է մնացել, այն էլ կիսով չափ, որ այնտեղ դեռևս մնացել են չորս շարք մարմարյա սյուներ, ամեն շարքում 9 հատ և որ այդ սյուներից ամեն մեկի հաստությունը երեք դրկաչափ է, արվեստաքանդակ մարմարե կերտվածներով զարդարված¹: Շարգենը, անշուշտ, ծանոթ լինելով հին հույն և հռոմայեցի մի քանի պատմագիրների Կովկասի մասին հազարգած տեղեկություններին, սակայն արհեստով ակնավաճառ լինելով, չի կարողացել պատմական վայրերը գոնե մոտավոր ճշտությամբ որոշել և սխալ ու ճիշտ տեղեկությունները շփոթել է միմյանց հետ: Հայաստանի մայրաքաղաք Արտաքսատան (Արտաշատը) երբևէ չի կոչվել Աքիմենյան դինաստիայի թագավոր Արտաքսերքսեսի անունով, որն ապրում էր 5-րդ դարի վերջին (մ. թ. ա.): Մյուս կողմից Խոր Վիրապի մոտ ցույց տալով Արտաշատը, նա մատնանիշ է անում այն վայրը, ուր Գառնին

¹ Путешествие кавалера Шардена..., стр. 248.

կամ Տրդատի թախտի ավերակներն էին դանդում. պարզապես նա շփոթում է Գառնին Արտաշատի հետ:

Շարդենն այնուհետև էլ շարունակում է իր սրնումները և հասնելով Հ. Նախիջևան և պրպումներ կատարելով այդ քաղաքի անցյալի վերաբերյալ՝ նա մի անհիմն վկայություն է բերում, իբր թե Վաչագանի որդիք ևրիք եկեղեցի (Յուզ քիլիսե) կոչված վանքում (այսինքն՝ էջմիածնում.— Ա. Շ.) պահպանվող տարեգրությունների մեջ ասվում է, որ Նախիջևան քաղաքը հին Արտաշատն է, հունական պատմագիրների Արտաքսատ և Արտաքսազատ կոչածք¹:

Շարունակություն մեջ Շարդենն իր վերջնական կարծիքն է հայանում ասելով. «Ըստ ինձ, Նախիջևանը հռչակավոր Արտաքսատն է, կամ Արտաքսազք, շինված էր նրան շատ մոտ, որովհետև Տակիտոսն ասում է, թե Արտաքսը հասում էր այդ քաղաքին շատ մոտ և, իսկապես, այդ գետն անցնում է Նախիջևանից, ոչ ափելի քան յոթը մղոն հեռավորություն վրած²: Այսպիսով վերջնականապես պարզվում է, որ Շարդենը հին Արտաշատը համարում է ներկայիս Հ. Նախիջևանը և կամ նրանից մի քանի մղոն հեռու մի վայր, որ բոլորովին սխալ է: Օգտավելով Շարդենից, նույնը համարյա բանացի կրկնում է Մորից Փոն Կայերուն, որը 1817 թ. իբրև ղեններալ Երմուզլի գեոպանություն անգամ՝ Նախիջևանի վրայով անցնում է գեպի Թավրիզ³:

Շարդենից քիչ ժամանակ անց, համարյա թե նույն ճանապարհով է անցել Ժան Բագրատ Տավերնիեն, որը թեթևակե նարկ է անում նաև հին Արտաշատ քաղաքի տեղի մասին. հիշելով Մոր Վիրապի վրա շինված եկեղեցին՝ նա ասում է. «Այդ եկեղեցու (Մոր Վիրապի.— Ա. Շ.) և Երևանի միջև տեսանելի են հին Արտաքսատի ավերակները, Հայաստանի թագավորների աթոռանիսաք, որոնք ցույց են տալիս, որ դա եղել է մի մեծ քաղաք, ուր կան նույնպես մի մեծ պալատի մի քանի մնացորդները⁴:

Քեռ Գորահըը տարբերվում է նախորդ ճանապարհորդներից նրանով, որ նա ինքն անձամբ, 1819 թ. եղել է Արտաշատի

¹ Путешествие Кавалера Шардена..., стр. 274.

² Նույն տեղում, էջ 298:

³ Ազգերություններ, հատ. Զ., Երևան, 1934, էջ 351:

⁴ Jan Batiste Tavernier, Voyages en Turquie, en Perse..., Paris, MD CL VII, 1677, 1 partie, p. 33.

ըրջանում, այցելել է Դվինը և Գառնին և իբրև ճարտարագետ-նկարիչ՝ դժադրել է իր կարծիքով հին Արտաշատի հատակագիծը, ինչպես և ավերակների մի քանի փլատակները. սակայն նա էլ շփոթության մեջ է ընկել, կարծելով, թե Արտաշատ գյուղը շինված է եղել նախկին Արտաշատ մայրաքաղաքի վայրում և նկարել է Դվինի հատակագիծը, հաստատ համոզված լինելով, որ դա հին Արտաշատն է¹:

Արտաշատի տեղի վերաբերյալ սխալ տեղեկություն է տալիս նաև Ֆրեյզան գերմանացին, որն իբրև ուսանական պաշտոնյա 1811—1812 թթ. Քաղբիլ է ուղարկվում Արբաս Միրզայի մոտ բանակցություններ վարելու: Ճանապարհին կանգ առնելով նախիջևնում, նա հայտնում է, թե Շաղարսիկները նախիջևնանը համարում են նախկին Արտաշատը (Artaksad), որը Հայաստանի ամենահին քաղաքներից մեկն է: Իր նախկին բարգավաճ օրերին, ասում են, թե 30000 տուն ուներ, բայց այժմ հազիվ թե այդ թվի մեկ երրորդն է մնում²:

Եվրոպացիներից ամենք Արտաշատի տեղի որոշման խընդրում մինչև իսկ անհեթեթություն են հասնում. այսպես Պուլ Փուլը Խոջ քաղաքն է նշում իբրև Հին Արտաշատը, Օդոստինոս Էյսերեն, Ֆրանսիայի արքունի աշխարհագիրը, իր բառարանում Արտաշատը շփոթում է Թիֆլիսի հետ, Մորեբան նույնպես իր բառարանում նախ Թիֆլիսը և ապա Շարդենի ազգեցությունների տակ փոխելով իր կարծիքը՝ Տրդատի թախտն է համարում Արտաշատը: Պոարան, հետևելով նույնպես Շարդենին, երբեմն Թիֆլիսը և երբեմն Երևանն է մատնանշում Արտաշատի տեղը, ֆրանսիացի Վիլֆրյան Արտաշատը շփոթում է Դվինի հետ, իսկ Գալանոսը և վերջինիս հետևելով նաև Լըքիեն Վաղարշապատն են ընդունում իբրև հին Արտաշատ³:

Ընդհանուր և թեթև տեղեկություն է տալիս Արտաշատ քաղաքի մասին նաև 19-րդ դարի վերջին տասնամյակում Արտաշատի ըրջանն այցելող Խ. Փ. Լինչը: Նա եղել է Խոր Վերապի վանքում, պտտել է նույն անունը կրող բլրի ըրջակայքում և հայտնում է. «Խոր Վերապ վանքի ըրջակայքը չա-

1 R. Ker Porter, Travels in Georgia, Persia and Armenia, London, 1822, II, p. 619—625.

2 Ուղեգրություններ, հատ. 2., Երևան, 1934, էջ 417:

3 Ղ. Վ. Ինճիճյան, Ստորագրություն շին Հայաստանեայց Մեծ Հայք, Վենետիկ, 1822, էջ 493—494:

իտպանց հարուստ է պատմական և հնագիտական տեսակետից և ես խորհուրդ կատարի ճանապարհորդելն շարունակել իր ուղևորութիւնը Գառնիի վիպական հովտով դեպի վեր... նա կահանի Արտաշատի և Գլինի տեղագրութիւնը և դետի ամբողջ ամբողջ վեր բարձրանալով՝ կհասնի բազալտի սյուներով մի ձորի և հրապարակի, ուր նրբեմնի կանգնած է եղել Տրդատ թագափորի տաճարը¹: Այսպիսով Լինչի թեթեւ տեղանքն ևս ոչ մի նոր բան չի տալու Արտաշատի շինութեան տեղի մասին:

Հայ բանասերներից ոմանք նույնպէս գրազգիւել են Արտաշատ քաղաքի շինութեան տեղի խնդրով և մեծ մասամբ շփոթել և խառն կարծիքներ են հայտնել: Այդ խնդրին ամբողջ ճիշտ մտաւեցում է ցույց տալիս Մեսրոպը Գ. Թաղիադէյանը, որ 19-րդ դարի քսանական թվականներին, շրջելով Արարատայան դաշտավայրի պատմական մի քանի վայրերը, հայտնում է, թե Խոր Վիրապի շուրջը տարածվում էին Հայաստանի մեծ մայրաքաղաք Արտաշատի ավերակները, որոնց հետքն այլև չի երևում: Արտաշատի բլրի կրկնազաւթ գլխի վրա նախկին ժամանակ եղել է դղյակ: Ներկայումս արևելյան զաւթի վրա երևում է Խոր Վիրապի վանքը: Այդ զաւթի վրա կար ամբողջ քարով չորս կողմից պարսպված: Բլրի արևմտյան գաւթիքը առաջինի թիկունքում է գտնվում: Բլրի հարավային կողմում է գտնվում Երասխը կես հրասախ² նրանից հեռու, իսկ նրա արևմտյան կողմում Մեծամորին խառնվում է Երասխին մոտ երկու հրասախ հեռու³: Ղ. Վ. Ինճիճյանը Արտաշատը գնում է Մեծամորի դետի և Երասխի խառնարանի մոտ: Իր այդ կարծիքը նա հիմնում է միայն Մ. Խորենացու վկայութեան վրա առանց ուրիշ որևէ ապացույց բերելու⁴: Ղ. Ալիշանը, որ մոտ ծանոթ էր հույն և հռոմայեցի հին պատմիչների և վերջին ժամանակների եվրոպացի ճանապարհորդների հաղորդած տեղեկութիւններին, նախ⁵ կրկնում է նրանց վկայութիւնները և ձգտելով հաշտեցնել նրանց

¹ Линч X. Ф. Б. Армения, рус. пер. т. I. Тифлис, 1910, стр. 262.

² Պրոֆ. Լ. Մանանդյանը հայկական և օտար աղբուրների հիման վրա հրասախը համարում է հավասար 3 մղոնի, մի մղոնը՝ 1610, 784 մետր է (պրոֆ. Լ. Մանանդյան, Կշիռները և չափերը հնագույն հայ աղբուրների, Երևան, 1930, էջ 106):

³ Մեսրոպը Գ. Թաղիադէյան, ճանապարհորդութիւն, հատ. Ա, Կալիպթա, 1847, էջ 151—152:

⁴ Ղ. Վ. Ինճիճյան, Ստորագրութիւն..., էջ 486:

հակասական կարծիքնեքը Արտաշատի շինութեան տեղի նկատմամբ՝ ենթադրում է, թե Արտաշատ անունով երկու քաղաք կարող է շինված լինել, մեկը Երասխից 5 մղոն հեռու դեպի հյուսիս, ուր մեծ քաղաքի ավերակներն են դանդում (նկատի ունի Դվինի ավերակները.— Ա. Շ.), որի մոտ հետագայում շինվել է Արտաշատ գյուղը, իսկ մյուսը, որ օտար հեղինակներն են հիշում, Վեդի գետի հարավ-արևելյան կողմը Երասխի ավերին, որի տեղն անհայտ է։ Ինչ վերաբերում է օտար հեղինակներին այն վկայութեան, թե Արտաշես ավազն է (Ա.) շինել Արտաշատը, իսկ Մարենացին դա վերագրում է Արտաշես Բ-ին, Ալիշանը ենթադրում է, որ կամ այդ Արտաշեսներն ամեն մեկն իր անունով մի քաղաք է շինել, և կամ Արտաշես ավազի շինած քաղաքն ավերվել է և հետո Արտաշես Բ-ն վերաշինել և իր անունով է կոչել և իրիս թե շատերն այդ կարծիքին են։ Մարգիս գիտնական կոչված վարդապետը Գրիգոր Վեստախրուն առաջավորաց պահի առթիվ իր գրած նամակ-պատասխանի մեջ հայտնում է, թե Շարանց ժամանակ նահատակվում է սուրբ Սարգիսն Արտաշատ քաղաքում, որ այժմ կոչվում է Դվին։ Նույն սխալը կրկնում է Նայան եպ-ն իր Շահն. ծանոթ թղթի մեջ, էջ 241², Ռմանք էլ պարզապես ներկայիս Արտաշատ կամ Արտաշար գյուղն են համարում նախկին Արտաշատ քաղաքի վայրում կառուցված։

Սովետական հնագետներին և պատմաբաններին այժմ պարզ հայտնի է նախկին Արտաշատ մայրաքաղաքի տեղը, որտեղ կատարված են նախնական հետախուզական աշխատանքները, բայց դեռևս լրիվ չափով չեն որոշված քաղաքի բնույթն ու տարածությունը և առհասարակ նրա մտավոր սահմանները։

Արտաշատ քաղաքի պեղման հարցը մեծ կարևորություն ունի Հայաստանի հելլենիստական շրջանի պատմության սուսումնասիրման համար, քանի որ թե հայ և թե օտարագրի պատմագիրների աված տեղեկություններն այդ քաղաքի մասին պատահական և կցկտուր բնույթ են կրում և երբեմն էլ համեմատված են առասպելներով և ավանդություններով։ Արտաշատ մայրաքաղաքը հիմնվեց պատմական Հայաստանի կենտրոնում՝ հել-

1 Ղ. վ. Ալիշան, Ալբերտ, Վենետիկ, 1895, էջ 395—396 և 398։

2 Ղ. վ. Ինճիճյան, Ստորագրութիւն., էջ 494։

լենիտական շրջանում: Քաղաքական և տնտեսական տեսակետից, ինչպես և տուրքի ու արհեստների զարգացման տեսակետից բարձր վերելքի հասավ Արտաշիսյան հարստության իշխանության համարյա ամբողջ ընթացքում. իբրև մայրաքաղաք և ապա իբրև աջփի ընկնող քաղաք նա պանպանեց իր գոյությունը նաև հայ Արշակունիների թագավորության սկզբնական ժամանակաշրջանում. գյուղաքաղաքի և ավանի վերածվեց մարզպանական շրջանում. հետևապես հին Հայաստանի պատմության համար նրկար ժամանակամիջոց ընդգրկող այդ քաղաքի պեղումները կարևոր կլինեն Հայաստանի այն պարաշրջանի պատմության համար, որը նախորդում է Գլինին, Արտաշիսյան թագավորների ժամանակվանից սկսած մինչև 4-րդ դարը, նրր Արտաշատը զեռես մեծ քաղաք էր և մեջ ընդ մեջ էլ մայրաքաղաք էր համարվում:

АС. ШАХНАЗАРЯН

А Р Т А Ш А Т

Историко-географический очерк

Р Е З Ю М Е

Постройка столичного города Арташат имеет тесную связь с образованием государства Великой Армении при династии Арташесидов.

После поражения селевкидского царя Антиоха III, нанесенного ему римлянами при Магнезии в 189 г. (до н. э.), подвластные селевкидам два стратега Армении: Арташес и Зарех объявили себя независимыми царями первый—в Великой Армении, а второй—в Софене (юго-западной Армении).

По расширении пределов своего государства царь Арташес (189—161) на территории царской области «Остан», в Араратской долине, построил столицу Арташат. О постройке этого города впервые сообщает греческий географ Страбон; по его словам г. Арташат лежит подле Араксинской равнины на Араксе; он расположен в углублении похожем на полуостров, кругом его, исключая перешейка, тянется перед рекою стена; перешеек его обведен рвом и насыпью. Другие источники

(Тацит, Плутарх и Плиний) о местоположении Арташата ничего нового не содержат. Хотя сведения Страбона о месте постройки Арташата весьма достоверны, но они недостаточны для точного определения расположения Арташата.

Из армянских источников сравнительно более подробные сведения о постройке и месте постройки Арташата сообщает М. Хоренский; он говорит, что город Арташат находится в Араратской долине, на берегу Аракса, в том месте, где с Араксом сливается река Мецамор и где лежит холм. По сведениям других армянских историков явствует, что на протекающей около г. Арташата реке Мецамор был построен мост по имени Мецаморский (*Մեծամորի կամուրջ*) и что равнина, лежащая между г. Арташатом и г. Двином называлась долиной Мецамора. Но ныне река Мецамор сливается с Араксом на 25—30 километров дальше на западе от Хорвирапского холма и от Двина, где нет никаких остатков развалин и какого-нибудь холма. Посредством данных армянских источников, главным образом, истории М. Хоренского и «Армянской географии VII в.», приписываемой А. Ширакскому (по пространному экземпляру), окончательно устанавливается, что река Мецамор в древние времена протекала до Двинского холма и в своем нижнем течении сливалась с рекой Азат и с западной стороны Хорвирапского холма сливалась с Араксом; на том месте, где сливались эти реки, образовался обширный полуостров, где и был построен Арташат.

Город Арташат с трех сторон был окружен реками, по берегам которых тянулись городские стены, а с четвертой стороны перешеек был обведен рвом и насыпью. Нынешний Хорвирапский холм находился в пределах г. Арташата и служил его цитаделью. По свидетельству иностранных источников г. Арташат занимал обширное пространство, был построен весьма красиво и считался «Карфагеном Армении».

Что касается участия известного карфагенского полководца Ганнибала в планировке и руководстве постройкой Арташата, о котором говорят Страбон и Плутарх, то это нельзя считать достоверным.

В Арташате были построены храмы, посвященные главной богине города Анаите, солнцу, луне и предкам царствующего

дома; куда были переселены, взятые из Армавира и Ервандашата, пленные евреи и сирийцы, в Арташате был построен и театр эллинистического типа, где в 53 г. до н. э. труппа греческих актеров разыгрывала трагедию Эврипида «Вакханки». Новая столица Армении была расположена на северном главном магистральном пути международных торговых сношений с соседними и через них с дальними торговыми центрами древнего мира как на Востоке, так и на Западе; одновременно она являлась важным узловым пунктом транзитной торговли. В скором времени г. Арташат становится многолюдным, там развиваются ремесла и промышленность, постепенно расширяются его торговые связи; политическое и экономическое состояние его укрепляется, особенно при Тигране II.

Денежное обращение в эпоху Арташесидов и, в частности чеканка собственной монеты, еще более содействовала экономическому подъему г. Арташата и торговым его сношениям с соседними странами и главными мировыми торговыми центрами. Подтверждением этого может служить найденный в 1946 году в Сисианском районе Армении клад серебряных монет (около 5—6 кг) и состоящий главным образом из монет римских консулов, селевкидских, парфянских, понтийских и армянских царей, финикийских городов и малоазиатских правителей. Кроме того, захваченное Лукуллом в Тигранакерте богатое царское казнохранилище и выплаченная Тиграном II Помпею довольно большая сумма военной контрибуции показывают экономическое благосостояние Армении и, в частности столичного города Арташат, в эпоху Арташесидов.

Римский полководец Лукулл не смог захватить г. Арташат и ограбить его; при походе Помпея он не пострадал; так, что г. Арташат все время ирарления Арташесидов и до конца первой половины I века (н. э.), в течение почти 200 лет, несмотря иногда на шаткое политическое положение Армении, не регрессирует в своем экономическом развитии.

Положение г. Арташата резко меняется при столкновениях между Римом и Парфянским государством из-за Армении. Желая захватить всю Армению в свои руки, Рим по своему обыкновению приступает к политическим интригам; г. Арташат становится ареной политических злодеяний. Когда парфянский

царь Вологес своему брату Тиридату предоставляет Армянское царство и армяне поддерживают его кандидатуру, между Римом, с одной стороны, парфянами и армянами, с другой, начинается довольно длительная борьба. Римскому полководцу Корбулону удается в 59 г. н. э. захватить оставленный без защиты г. Арташат, ограбить и при оставлении его уничтожить огнем. Этот поступок римского полководца не только не устранил армян, но еще более ожесточил их, которые решили продолжать борьбу против Рима. В конце концов когда по обоюдному соглашению враждующих сторон Тиридат получил в Риме корону Армении и средства для восстановления Арташата. Тиридат с собой привел и римских мастеров. Город Арташат был почти вновь построен в кратчайший срок (в 66 г. н. э.).

После этого около ста лет г. Арташат не упоминается в источниках. При императоре Аврелиане г. Арташат еще раз подвергается разрушению со стороны римских легионов. Вскоре царской резиденцией стал Вагаршапат, где утвердился римский гарнизон. Новый город был обведен стеною и назван по имени царя Вагаршапатом, который стал столицей Армении до падения царства армянских Аршакидов (429 г. н. э.).

Из последующих сообщений армянских источников видно, что и после постройки г. Вагаршапата еще в продолжении нескольких веков Арташат как город, село или местечко сохраняет свое существование; так, в конце III в. н. э. стараниями Григория Пахлавуни и царя Тиридата III разрушается в городе Арташате храм Анаита и на его месте воздвигается христианский храм. Кроме того, по словам М. Хоренского, после постройки дворцов в Двине царь Хосров II Котак (330—339 гг. н. э.) приказал жителям Арташата из-за нездорового воздуха вокруг этого города переселиться в Двин. Переселились, конечно, не все. Доказательством того может служить то обстоятельство, что во второй половине IV в., когда войска Шапура II разрушают г. Арташат до основания, по свидетельству Фауста Бузанда, они увозят из этого города в плен 9000 семейств евреев и 40000 семейств армян; хотя историком число плененных увезенных из Арташата на много увеличено, но нет сомнения, что в это время Арташат был довольно многолюдным городом. В кодексе Юстиниана I в императорском эдикте

408/409 гг. Арташат упоминается как главный пункт в Армении через который провозят транзитом товары и где взыскивались пошлины с перевозимых товаров.

Город Арташат часто фигурирует еще в событиях Армении в конце первой и начале второй половины V века, а в VI и VII веках, хотя иногда в армянских источниках упоминается имя Арташата, но только в связи с постройкой или возобновлением храма на Хорвирабском холме.

С течением веков из развалин Арташата окрестными жителями были растасканы строительные камни для новых построек и остатки развалин на равнине были покрыты наносной землей и песком, так, что на поверхности земли не осталось заметных следов от бывшего огромного города.